

3254

891.99  
U-26

12003

2012

## ԱՐԴՅՈՒՆ ԱԹԱՅԵԱՆ

304

五  
卷之四

447

# ԳՐԱՅԻՐԱԿ


A circular library stamp. The outer ring contains the text "Tbilisoba" at the top and "ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА" at the bottom. The inner circle contains "Г. Тбилиси" at the top and "1922" at the bottom. The date "7/II-1922" is stamped in the center.

7/11. 1922

ԵՐԳԻԾԱՐԱՆԱԿԱՆ ՎԻԼԱՆ ԱՅԱԿՈՒՏԱ ՀԱՅՈՒ ԱՎԵՐ

Հաստարակութիւն

## ԳԵՐՐԻ ԹՈՒԵԱՆԻ



Ф. У. Ф. О. Н.

ՏՊԱՐԱՆ Ա. Մ. ՂԱԶԱՐԵԱՆԻ

1898.

1590



## ԶԳԱՅՄՈՒԽՆՔ

Եթէ մոռացայց զբեղ, երուսալիմ,  
մոռացի զիս աջ իմ....

---

Дозволено Цензурою,  
Тифлисъ, 20 Июля 1898 г.

---

Վաղուց էի մտադիր Մաշալի մտսին  
գրելու, բայց մի բան ինձ արգելում էր.  
— մի գըրաց գուշակել էր, որ ես կնոջ  
ձեռքով պիտի մեռնեմ, ուստի բնական  
էր, որ կանանցից վախենալիք: Նոյն իսկ  
աշխատել եմ կեանքումս որքան կարելի  
է քիչ սիրել (մինչև այժմ ընդամենը  
տասնուհինգ անգամ միայն), որպէսզի  
անժամանակ չենթարկւեմ մահւան. «ո՞վ  
զիտէ, — մտածում էի. — թերեւս սիրուս  
առարկան լինի այն կինը, որի ձեռքով  
գերեզման պիտի իջնեմ:» Բայց երբ մե-  
լանխօլիան սկսեց անկոչ հիւրի նման յա-  
ճախ այցելել ինձ, և կեանքը կորցրաւ

աչքումս իր առաջւայ գինը, ես համարձակութիւն ստացալ, և մուսաս գրկախառնեց հետս: Եւ իրաւ, ի՞նչ պէտք է կորցնեմ որ, եթէ նոյն իսկ մեռնեմ: Մի բան ևս. հաստատ համոզւած եմ, որ մի օր մեռնելու եմ, ուրեմն ի՞նչ նշանակութիւն ունի մի քանի տարով ուշ կամ շուտ մեռնելը: Ֆրանսիական առածն ասում է. «Բոլորս էլ գիտենք, որ մեռնելու ենք, բայց չենք հաւատում, թէ կ'մեռնենք:» Իսկ ես ինքս շատ լաւ էլ հաւատում եմ, որ անպատճառ պիտի մեռնեմ և չեմ էլ ցաւում: Եթէ չ'կան ուրիշ պատճառներ, որոնք մարդուն տալիս են այդ հաւատը, բաւական է միայն և այն, որ օրերն անցընում են նկատելի կերպով: Որքան վատ ենք սովորել . . . Զէք տեսել միթէ, թէ ինչպէս ազատ արծիւը բանտարկւելով վանդակում այնպէս է սովորում անազատ կեանքին, որ յետոյ երբ բաց ես թողնում, այլ ես չէ թոշում լեռների ծերպերը, խորամութ անտառները, նա

իր բանտը գերադասում է ազատութիւնից: Իսկ մարդու վիճակն աւելի վատ է, մօր կաթի հետ է ստանում նա ապրելու գաղափարը: Գիտենք, որ համարեա ու չինչ չ'կայ միխթարական, որի համար արժանի լինի ապրել, գիտենք, որ այսպէս զգալով՝ միանդամայն իզուր տառապում ենք, բայց էլլի թոյլ ենք տալիս մեզ մեր սեփական անձը խոշտանկման ենթարկելու . . . Կարծում եմ սրանից աւելի լիմար բան չ'կայ: Մարդ մեղցնելու ոյժ չ'ունենալով ինքն իրան և ապրելով կամալ — ակամալ կուր է սկսում իրան լուզող երևոյթների գէմ, և այդ միայն քիչ — շատ միխթարական է. բայց երբ լայտնի չէ թշնամիդ, երբ ծածկաբար են խածում գարշապարդ, երբ տեսնում ես այնպիսի ստորութիւններ, որ միայն արհամարհանքդ կարող են շարժել — այդ գէպքում ինչ անել . . . — գարշիր, գարշիր և կրկին ապրելը գարշելու համար . . . Խղճալի՛ մարդիկ:

Հա, ժամանակ է գործին կպչելու,  
մելանխօլիայով զբաղւելով բան չի դառ-  
նալ, առանց այն էլ հոգով հիւանդ ենք:  
Մաշան... (Բեմ է գուրս գալիս, առաջին  
անմեղ դէպիւտն է) հենց երեխալութիւ-  
նից մի քմահաճ աղջիկ էր. ցանկացածին  
պիտի հասնէր, և Թօրառունան միշտ ժըպ-  
տում էր նրան: Բայց հետաքրքիր չէ,  
թէ ինչ էր նա երեխալ ժամանակ, ո-  
յալոյն, լետոյ էլ կ'երեալ այդ բանը:  
Երեակալեցէք մի անչափ երկարահասակ  
օրիորդ, շէկ գանդուրներով, որոնք թափ-  
ւած են երկու ուսերի վրայից, երկնա-  
գոյն աչերով, որոնք այնպէս են փայլիք-  
լում, որպէս ֆոսֆօրը կէս գիշերին, այն-  
քան կանոնաւոր գիմագծերով, որ մարդ  
ժամերով նալելուց չէ կարող մի արատ  
գտնել: Մի բան միայն պակաս է նրան,  
որպէսզի նա կարողանալ բոլոր սրտերն  
իր ձեռքին խաղալիք դարձնել. — նրա  
մէջ չ'կայ այն կայծը, որով կարելի է  
լինում հրամայել, ազդել ամենքին, գե-

րութեան մէջ պահել ընդմիշտ: Բայց  
չ'կարծէք, թէ նա բոլորովին ընդունակ  
չէր գերելու, ահա շուտով կ'տեսնէք.  
Եթէ ինձ ալէս դուք էլ տեսած լինէիք  
նրա կաթնանման դէմքը, վարդի պէս  
վառվուուն շրմունքները, անշուշտ դուք  
ինքներդ կ'սիրահարւէիք նրա վրայ, երե-  
տասարդ ընթերցող. իսկ դուք, պաշտե-  
լի ընթերցողուհիս, պիտի նախանձով լի-  
քը մի տոպրակ խնդրէիք երկնքից:  
Բայց չ'վրդովւէք, ինչ կայ, չէ որ դուք  
էլ էք սիրւել, իսկ եթէ չէք սիրւած,  
յոլսներդ գեռ չ'կարէք վերջնականապէս,  
Աստւած ողորմած է: Բայց հարցը դրա-  
նում չէ, խօսքս Մաշայի մասին պիտի  
լինի:

,,Ինչո՞ւ, միթէ երկինքն ինձ զրկել  
է կամքից, միթէ չեմ կարող սիրել նը-  
րան, որին ցանկանում եմ սիրած լինել:  
Որքան էլ դժւար լինի մէկին թօղնելն  
ու միւսին սիրելը, այնուամենալին պի-  
տի այն անեմ, ինչ որ պահանջում է

բախտաւ. ինչու գերի դառնալ երկու խօսքի, միթէ ես չպէտք է տիրեմ նրանց վրայ. Եթէ նա, որին մտադիր եմ մոռանալու, գրաւած լինէր մի ուրիշով, արգեօք դէն չէր հրիլ ինձ—շատ պարզ է, ով է սիրել առանց զգացմունքի. Այստեղ, այս կրծքի տակ անմիտ բողոք է կարդացւում. «Մէկին սիրում էիր, յայտնեցիր կիրքդ, նա էլ ընդունեց. բայց բաւական չէ այդ, այլ մեծահոգութեամբ ընդունեց. ինչ կ'անէիր, եթէ մերժէր. իսկ այժմ ինքդ ես մտադիր նրան մերժելու—ոչ թէ մերժելու, այլ դաւաճանելու, միթէ կարող եմ բոնանալ զգացմունքիս վրայ. ինչպէս իմը համարեմ նրան, քանի որ ուրիշին եմ ուզգում իմը ճանաչել: Ինչու ծանրացնեմ գործս, կեղեքեմ ինձ զուր տեղից. ոչ, ոյժ չ'ունեմ դիմադրելու բնութեան հաճուքին, ինչպէս այն ցանկանում է, այնպէս էլ պիտի լինի:—«Բայց չէ որ կ'կոր-

ծանես ն ը ա բախտը, չէ որ ն ա հեռու երկնքի տակ երազում է քո աչերը և յոյսը կապել է կեանքիդ հետ. ոչ, ես թոյլ չեմ տալ, որ նրան անբախտացնես, նրա պաշտպանը քո մէջ միայն ես եմ մնացել և միտք չ'ունեմ քեզ թողնելու. ոն ուրեմն, յետ դարձիր նոր շաւզիցդ և մտիր հին երազներիդ տաճարը»—Տաճար... Եթէ միայն այդպէս լինէր... Բայց թոյլ լինի նոյն խակ այդպէս, ինչ, միթէ մարդիկ իրանց Աստւածը չեն փոխում. բաւական է որ ձանձրացան, նրա օրէնքները կորցրին իրանց նշանակութիւնը, և ահա ամեն ինչ տակն ու վրայ է լինում: Ի՞նչ կայ յաւիտենական—ոչի՞նչ իհարկէ. մէկը երեկ թոյլ էր, այսօր դարձաւ ամենազօրեղը. մէկն ընկած էր ցեսի մէջ, ահա այսօր ցնծութեան ձայն է արձակում եթերալին բարձրութիւնից, միթէ նա պարաւոր է ցած ինել. օ, որքան գժւարութիւն... Ես ապրում եմ նախ ինձ համար և ապա ուրիշի. տեսնում եմ

ճանապարհիս կիսից, որ երջանկութիւնը փայլում է հեռւում, պիտի հասնեմ նըրան, իսկ ետևս ինչ ուզում է, թո՞ղ լինի, ես ինչ մեղ ունեմ. այնտեղ, ուր չ'կան ինձ գրաւող լոլզեր, ուր պիտի կեանքս մաշւի, առանց սփոփանքի ինչպէս օր քաշեմ: — «Բայց հաստատ գիտես, որ Հեռւում ցոլցլացող հուրը պարունակում է իր մէջ երանութեան աւետիք և ոչ տառապանք, գիտես վերջապէս, որ այն կրակը քեզ համար է վառւում և ոչ մի ուրիշի:» — Հասկանում եմ... այս, դառն են խօսքերդ, աւելի դառը, քան մերժումը, բայց ինչո՞ւ ասացիր այդ. լետ քաշելու նպատակնվ... սակայն ի՞նչ օգուտ, այն ժամանակ՝ երբ զրկւեմ իմ բաւականութիւնից, անհուն կատաղութեամբ ոտնատակ կ'տամ և՛ նրան, որին պաշտպանում ես—մերժումս կ'մեղծացնեմ մերժումով. ինչո՞ւ իմ անկումով ուրիշն կանգնացնեմ. լո՞ր, ոլժ չունես . . . իսկ ես արդէն տանջւում եմ սոսկալի կասկա-

ծով . . .

Ասաց օրիորդը և ձեռներով ծածկեց արցունքները, որ մեղմօրէն գլորւում էին հրաշագեղ ալտերի վրայով դէպի ցած: Զէ, եթէ սէրը կեանք է իսկապէս, պէտք է խոստովանել, որ կսկիծներից է միակազմւած: Նա վառում է ամբողջ գոլութիւնը, որ կարող է այրւելով վերջանալ մի օր և տեղը թողնել մոխրակոյտ:

— Ե՞հ, ինչո՞ւ լալ, քանի որ կարելի է և չ'լալ. միթէ՞ մեծ կորուստ է զրկւել նրանից, որից ուզում եմ անպատճառ զրկւել, դժւար է վրայից մի հնամաշ վերարկու դէն զցելը. այդպէս է և հընացած սէրը: — «Թշւանու աղջիկ, միթէ՞ մարդը շորի կտոր է, որ արհամարհանքով դէն շպրտես,» նորից ձայն եկաւ կրծքի խորքից: — Գուցէ է՛լ աւելի վատ, երբ նրանից ազատւելով նոր կեանք պիտի ստանամ: Միթէ կարող եմ սոսկ լիշտատկով ապրել, մտածելով թէ երբ է

Հասնելու այն օրը, երբ կ'տեսնեմ նըր ան. ես ամեն ըովէ լուզումներ եմ ցանկանում, մէջս արիւն է եռում և ոչ սլղտոր ջուր:—«Իսկ մի գուցէ նա՛ որին ուզում ես աւանդել սէրդ, հեռացաւ քեզնից մի օտար աշխարհ, ուրեմն նրան չ'պիտի սպասես և պէտք է նրա լիշտակն էլ արատաւորես՝ մի ուրիշի գիրկն ընկնելով...»— Ո՛չ, ալգայէս չէ, նա ինձ չի թողնիլ, հակառակ գէպքում այլ ևս չեմ փորձիլ սիրելու մի ուրիշն, այլ վերջ կ'տամ տառապանքիս մի կաթիլ հեղուկով: Մի սպանիր ինձ, դժբախտի, տառապածի խիզճ...

Եւ խիզճը լուեց:

Բայնն այն էր, որ օրիորդ Մաշան ծանօթացել էր մի ուսանողի հետ, և պատահմամբ փոխադարձ սէր էր առաջացել նրանց մէջ: Միշան գեղեցիկ չէր, բայց կարելի էր սիրել (որովհետև Ամուռը ընտրութիւն չէ անում և ապա խոցում ընտրեալի սիրտը), բայց գրանից՝

նրան մեծ ապագայ էր սպասում, ապագա ասելով չ'պէտք է հասկանալ այն ապագան, որ ժպտում է հասարակաց շահի համար կատարւող գործունէութեան մէջ, կամ որևէ ընդունակութիւնից առաջ եկող հետևանքում. ոչ, այլ Միշան պիտի հարստանար արգիւնաւէտ պաշտօնի շնորհիւ, և այդ բաւական էր, որ օրիորդին գրաւէր եթէ ոչ հոգեպէս, գոնէ մարմնապէս, թէև ալգապիսի դէպքերում հոգին ևս երբեմն հպատակում է մարմնի գլխաւոր պահանջին՝ կերպւիումին, կամ աւելի մեզմ ասած՝ կեանքը պահպանելու միջոցին, ինչպէս և եղաւ Մաշալի մէջ, որ սկսեց նոյն իսկ սիրել Միշալին: Վերջինս փոքր հասակում զրկւել էր ծնողներից և մեծացել տղէտ հօրեղբարյների խնամակալութեան ներքոյ, որոնք դաստիարակում էին նրան՝ հոգու մէջ թոյն թափելով: Այդ պահճառով նա մեծացաւ մենակ, մելամաղձոտ, հիւանդ, մասամբ արհամարհող

բնաւորութեամբ և տատանւող, կասկածի  
հետ խառն լուսերով։ Չնալած դրան, նա  
ունէր երեխալութեան հասցնող հաւատ։  
Նա փափագում էր գտնելու մէկը, որը  
լիովին հասկանալ իրան, ապրէ իր հետ  
մի կեանքով, միսիժարութիւն զգալ նրա-  
նով։ և նա վերջապէս դտաւ, կամ աւելի  
ճիշտն ասած՝ կարծեց, թէ գտաւ։

Մի գեղեցիկ ժամ օրիորդը լայտնեց  
Միշալին իր գէպի նա տածած զգացմուն-  
քը։ Ասացէք ինդըեմ, ինչպէս կ'ընդու-  
նէր ալդ խոստովանութիւնը մի երիտա-  
սարդ, որը քիչ աւանտիւրիստ էր, քիչ  
էլ զգացմունք ունէր (բայց ո՞վ չունի),  
քիչ էլ սիրելու և սիրւելու ցանկութիւն  
և դեռ չէր սիրւած ոչ ոքից։ — շատ պարզ  
է — գրկաբաց! Եւ բաւական է միայն իրան  
ցոյց տալ, որ ինքն էլ տեղեկութիւն ու-  
նի սրտի խորքում խաղ անող լուգերից, և  
արդէն ամրապնդւած է սիրողի խոստո-  
վանութիւնը։ բայց ո՞վ չունի ալդքան  
շնորք։ Մի խօսքով Միշան կարողացաւ

հասկացնել, որ Մաշան սիսալւած չէ իր  
ընտրութեան մէջ։ Դէհ, սիրիր, թէ կը  
սիրես. էլ ի՞նչն է պակաս, հօ ալդ իդէա-  
լական սէր չէ, ուրեմն պէտք է ազա-  
տութիւն տալ ամեն բանի։ Տօ, իսկապէս  
ի՞նչ լաւ բան է սէրը. երեկ Աստւած  
իմացել է, որ մարդ անասունին (ասու-  
նին պիտի ասէի) մի ալդպիսի գւարճու-  
թիւն է պէտք և գինու հետ (գարեջու-  
րը մարդու գործ է) աշխարհ է բերել և  
կինը իր բոլոր պարագաներով միասին,  
այն է՝ քնքշութեամբ, թուլութեամբ,  
սիրով — միրով, շատախօսութ.... (Փու՝  
ալստեղ սիսալւել է)։ Ես մի երիտասարդ  
եմ ճանաչում (շատ լաւ տղաներից մէկն  
է), որ ամեն տեղ պրօպագանդա է ա-  
նում սիրահարւել և շատ էլ բեղմնաւոր  
գործունէութիւն ունի. ալդպիսիների  
անունը պէտք է մարդկութեան բարե-  
րաբների անւանց հետ մի շարքում դաս-  
ւի անկասկած. և ով կ'հակառակէ իմ կար-  
ծիքի գէմ, ես նրան կ'տամ կարդալու

իբրև պատիժ Դաւիթ Անյաղիքի և Եօմն  
Իմաստակերների փիլիսոփայութիւնները։  
Մի անգամ... (Աստված ողորմէ բարի  
ննջեցեալների հոգուն!) մի ընկեր ունէի.  
տնաւերդ այնքան սիրեց, որ վերջապէս  
մեռաւ։ Ե՛լ, թող այս ձեզ չ'սարսափե-  
ցընէ. պէտք չէ վհատւել և հրաժարւել  
սիրահարութիւնից. ընկերս անփորձ էր,  
նախօրօք պատրաստութիւն չէր տեսել  
սիրելու համար, այլ հէնց միանգամից էր  
պատահել ալդ. դուք կարող եք խրատ-  
ւել այդ օրինակից և զգուշ լինել ու  
պատրաստութիւն տեսնել, այսինքն ու-  
ղում եմ ասել, որ եթէ աղքատ էք, ոտ-  
ներնիդ վերմակներիդ համեմատ մեկնե-  
ցէք և չ'բանէք հարուստ օրիորդների  
պոչից, եթէ այլ ևս պոկ գալ չէք կա-  
րողանալու։ Ալդ անգործ ձրիակերները  
բաւական չէ, որ ոչինչ անել չ'զետեն,  
դեռ մէկ նազ էլ են ծախում աղքատի  
վրան նայել։ Ես գոնէ «արհամարհելով  
արհամարհեմ զնոսա»։ Թո՞ղ իրանց փողից

$$\frac{1001}{86}$$

Հրաժեշտից յետոյ երկրորդ օրն էր։  
 Մաշալի մէջ գեռ վառ էին Միշալի գեր-  
 ջին խօսքերը — «սպասիր ինձ...» Եւ մը-  
 տադիր էր սպասելու, որպէս մենք սպա-  
 սում ենք հոգեհան հրեշտակին, որը մի  
 օր պիտի գալ և կողոպտէ մեզ։ 'Ի սէր  
 Աստուծոյ, այս ի՞նչ լիմար սովորութիւն  
 է, ամեն տեղ էլ գողութիւն կալ. միթէ  
 իրաւ երկնքի զաւակն էլ է աւազակու-  
 թեամբ պարապւում։ Եթէ այդպէս է,  
 ապա ուրեմն էլ ուղիղ մարդ չ'կալ տիե-  
 զերքում։ Եթէ սատանան կողոպտէր,  
 էլի հասկանալի է, որո՛հետեւ նա սատանալ  
 է. թէ չէ ի՞նչ է նշանակում... «Հրեշտա-  
 կը բարի էակ է, նա նոյն իսկ չ'գիտէ,  
 թէ ի՞նչ բան է չարութիւնը, ինչպէս  
 կարող է չիմացած բանն անել,» կ'ասեն  
 շատերը. — է, ուրեմն մեռնելը լաւ բան է  
 հա. դէ այդ դէպքում աւելի լաւ է շուտ  
 մեռնենք էլի... Բայց բանն այդ չէ,  
 Մաշալի և Միշալի մասին է խօսքս։  
 Հա, այստեղ մնացի, որ Մաշան մը-

տադիր էր սպասելու Միշալին։  
 Բայց ահա անակնկալ կերպով նա պա-  
 տահեց մի երիտասարդի գանգուր շագա-  
 նակագոյն մազերով, գրաւիչ աչերով և  
 սիրելի դէմքով։ «Համեմատել Միշալին  
 սրա հետ!... իհարկէ Միշան գեղեցիկ է։»  
 Անցաւ մի քանի օր, և Միշան այլ ևս  
 գեղեցիկ չէր թւում Եաշալից։ Այդպէս  
 է կնոջ սիրտը։ Օ՛ Մաշա, զդում ես քս  
 թուլութիւնը։ «Տղամարդիկ էլ են այդ-  
 պէս,» գուցէ կ'ասես դու. ես չեմ հա-  
 կաճառում քեզ, այդպէս է կեանքը։ Մի  
 շաբաթ չէր անցել հրաժեշտի օրից, և  
 գու մոռացել էիր նրան, որին ուզում  
 էիր մոռանալ, — գրաւել նրանով, որով  
 ուզում էիր գրաւել։ Բայց ինչո՞ւ էիր  
 թագինում կիրքդ, ինչո՞ւ չէիր իսկոյն բա-  
 ցատրութիւն տալիս, որպէսզի եթէ մեր-  
 ժում ստանալիր, կրկին Միշալի լիշտա-  
 կըն ապաւէն շինէիր չարքաշ օրերիդ։  
 Մինչդեռ դու կասկածը միացըրիր նորա-  
 տի զգացմունքիդ հետ և երեսիդ վարդը

դժգունացրիր զուր տեղից. միթէ համաձայն չես, որ սխալւած ես եղել. — բայց չէիր էլ կարող ամեն ինչ այդպէս շուտով գուշի բերել, այդ պատճառով սըխալդ սխալ չէ անտարակոյս:

Եւ այդպէս ահա Մաշան ուզում էր այդքան շուտ մոռացութեան տալ Միշալին, բայց հոգու մէջ կռիւ էր կատարւում: Վերջապէս խելառ խիղճը լռեց, և Մաշան բոլոր հոգով նւիրւեց Եաշալին առանց ճանաչելու, առանց մի անգամ հետը խօսելու: Ամեն անգամ, երբ անցնում էր երիտասարդը փողոցով, Մաշան նստած սպասելիս էր լինում պատուհանի առաջ, և սիրտը թնդում էր Եաշալի պատահակի հայեացքից: Մաշա, կը ների արդեօք Միշան, որ իրան փոխեցիր Եաշալի հետ. է, թող չ'ներէ, դու կարօտ չես նրա թողութեան, դու քո զգացմունքի ազատ տէրն ես, ոչ ոք չէ կարող իշխել այն բանի վրայ, որի վրան արդէն իշխող կայ: Ես էլ եմ քեզ պէս.

չեմ թողնում, որ սիրալին գործերիս մէջ թշւառականին մէկը խառնւի. և ինչո՞ւ պէտք է թողնեմ, ասա խնդրեմ, միթէ այդ էլ վաճառականութիւն է, որտեղ երկու խելքը գերակշռում է մէկին. ինչ կ'լինի սիրահարւածի հալը, եթէ բարեսիրտին մէկը նրա տառապանքը կիսելու նպատակով սկսէ մի կողմից էլ ինքը սիրել նոյն աղջկան: Այդ հօ փորձանքի մէջ ընկնելուց գեռ մի քիչ էլ վատ է նոյն իսկ սիրել և չ'սիրւել, քան թէ հակառակորդ ունենալ և սիրւել: Այդ հիման վրայ ես խորհուրդ չուրդ չեմ տալ բարեսիրտ, տղամարդու համար ցաւող կանանց, որ հետեւն Լորդ Բայրընի ասածին, թէ՝ «աւելի լաւ է ունենալ մի ջուխտ քսանուհինդ տարեկան սիրական, քան թէ մի հատ լիսուն տարեկան»: Իմ կարծիքով աւելի լաւ է ոչ այն ունենալ, ոչ այն, եթէ չ'ունես մի հատ քսանուհինդ տարեկան երիտասարդ. երկու հատ քսանուհինդ տարեկան է: Յամեկը մէջ այրւելը վատ նշան է:

նայն դէպս դ աւ ի — դ առ ա բ ա լ  
է եղել ս է ր ը:

Երկար ու ձիգ խօսքերով չեմ ուզում  
ամաչեցնել Մաշալին, այլ կ'յալտնեմ մի-  
այն այն, ինչ որ անհրաժեշտ է հետա-  
քըրքըութեանը գոհացում տալու համար:  
Հետաքըրքըութիւն... նա ստրուկ—  
մարդու բռնակալ—տէրն է, որ իր շահի  
համար ստիպում է նրան ամեն միջոցի  
դիմել. հետաքըրքըութիւնը սահման չ'ու-  
նի, այդ պատճառով և յագեցում չ'ունի.  
բայց ամենքի մէջ հաւասար չէ այն.  
Եթէ հաւասար լինէր, անշուշտ բոլոր  
մարդիկ հաւասարապէս կ'ենթարկւէին  
նրան. բայց որովհետեւ հաւասար չէ,  
այդ պատճառով մարդու մէկն ստրուկ  
է, միւսը լոկ ծառայ, իսկ խելագարը  
կատարեալ ազատութիւն է վայելում:

Մաշան միջոց չ'ունէր կիրքը յալտ-  
նելու Եաշալին, որովհետեւ նախ՝ անձա-  
նօթ էր, երկրորդ՝ դժւար էր ծանօթա-  
նալ մի այնպիսի գաւառական քաղաքում,

երբորդ՝ սիրտ չէր անում և չորրորդ՝  
ծանօթանալու — մինչև իոկ տեսակցւելու  
տեղերը շատ քիչ էին: Անցաւ ժամանակ,  
կիրքը բորբոքւեց սրտի խորքերում և  
սկսեց մաշել խեղճ Մաշալին. ոչ, պէտք  
էր վերջ տալ գոնէ անագործն, դժնի  
կասկածին. իսկ արգելքնե՞րը.... օ, ար-  
գելքներ, եթէ դուք չ'լինէիք, մարդիկ  
աստւածներ կ'գառնալին... սակալն Մա-  
շալին արգելք եղող հանգամանքներին  
անշուշտ կարելի էր վերջ տալ մի կերպ  
և վերջ տրւեց: Մաշան նստած էր լի-  
նում՝ լուսամուտի առաջ և դիտում էր  
փողոցը, տեսնելու՝ թէ արգեօք չէ ան-  
ցընում իր սիրելին: Մի անգամ վճռեց  
նրա անցնելուց իսկոյն ցած իջնել գրան  
մօտ և կանչելով՝ տալ նրան մի նամակ,  
որտեղ նկարւած կ'լինի էր հիւանդ սրտի  
պատկերը. անշուշտ կ'հասկանալ իրան  
նա, որին ուզում է անպատճառ հաս-  
կացրած լինել: «Խեղդւողը ծղոտից էլ է  
բռնում», ասում է առածը:

Ես, որ մի ժամանակ այնքան արհամարհում էի առածները, տես թէ այժըմ որպիսի շռայլութեամբ եմ գործադրում. մինչև անգամ քիչ է մնում, որ առակներ էլ գրեմ. բայց վերջիններիս ժամանակն անցել է, որպէս անցել է և՝ բանաստեղծութեան (այն է՝ վայրեն ուժ եան ըստ Լոմբրօզօ-ի) ժամանակը! Քիչ չեն այնպիսի երկարականջ քուռակներ, որոնք բանաստեղծութիւնը համարում են մի բոլորովին աւելորդ բան, որով պարապւելը ամօթ է նոյն իսկ: Եթէ Ապօլօնը կենդանի լինէր, անշուշտ պիտի աղաչէր Արէսին, որ այդ մժղուկներին կտոր-կտոր անէ, որովհետեւ նրանց տզզոցը երկինք է հասնում:

'Ի գեպ, Մաշալի կարծիքը բանաստեղծութեան մասին. «Ես ոչ մի կարծիք չունեմ, բացի այն, որ ամեն ինչ լիմարութիւն է աշխարհիս երեսին, բացի սիրուց. ես չգիտեմ, թէ ինչ բան է բանաստեղծութիւնը, բայց եթէ սիրով մա-

սին չէ, ապա ուրեմն այն էլ լիմարութիւն է»: Եւ կ'սկսէ փաստերի մի անվերջ շարք բերել. էլ ինչ պէտք է պահանջես նրանից, եթէ չես ուզում փորձանքի ենթարկել. կանալք հէնց այդպէս են էլի, մի անգամ էլ է, համախոհ չեն լինիլ հետո. և հէնց որ առիթ տրւիր նրանց խօսելու, պէտք է վերջ ՚ի վերջով ինքու անիծես քեզ լիմարութեանըդ համար. այնքան կ'խօսեն, այնքան անկիրթ կերպով կ'վիրաւորեն քեզ, որ այլևս չես ցանկանալ առողջանալ կրկին չ'վիրաւորած լինելու համար: Երեկ մի օրի որդ զզւանքս բերաւ ուղղակի, և ես ստիպւած եղալ այդ ասելու նրան. անցեալ օրը մի տիկին քիչ էր մնում միանգամայն անընդունակ գարճնէ լսողութեանս գործարանը. երեք օր առաջ... բայց ժե՞լ հարկաւոր չէ, միայն կ'ասեմ այն, սիրելի՛ տղամարդիկ, որ այդ արարածներից ազատւելու հնարաւորութիւն եթէ չ'կար, գոնէ զգուշ եղէք պառաւած աղջկներից

և երեակայող կանանցից, որովհետեւ նրանց  
մէջ է թագնւած շատախօսութեան, բամ-  
բասանքի, սրան ու նրան գաղտնիքդ հա-  
ղորդելու, մեծամտութեան, իմաստակու-  
թեան և եօթը մահացու մեղքերի ով-  
կիանոսը, ուր կարող ես մինչև կոկորդդ  
խրւել և ապա խեղդւել: — Զեր մասին  
չէ խօսքս, քաղաքավարի, քնքնիշ, հաս-  
կացնող տիկիններ և օրիորդներ, որ իդէալ  
էք դարձրել համեստութիւնը, խոհե-  
մութիւնն ու ուղղամտութիւնը և դեռ  
աճօաօք սէրը. ես ձեզ շատ եմ յար-  
գում, և ինձ թուլ չեմ տալ ձեր համբոլ-  
րը արատաւոր համարելու. դուք սիրտ  
ունէք, հոգի ունէք:

Եւ ահա օրիորդ Մաշան լոլսերից  
խաբւած՝ մի մուլթ երեկոյեան ցած իջաւ,  
ուան շէմքում կանգնեց և կանչեց անցը-  
նող Եաշալին, որը մօտ գալով ստացաւ  
նամակը, համբուրեց, ծոցը դրաւ և լուռ-  
անխօս հեռացաւ: Մաշան էլ չկարողա-  
նալով ամօթից մի խօսք արտասանել՝

փախաւ վերև՝ սենեակը: Ի՞նչ կ'զգար նա-  
ալնտեղ, ով է երեակալում. — իհարկէ  
նա, ով նրա գրութեան մէջ է ընկած  
երբեկից: Բայց չէ որ երիտասարդը համ-  
բուրեց Մաշալի նամակը... Դու եզրա-  
կացը գրանից, որ նա քեզ սիրում է,  
ալնպէս չէ, Մաշա... և հանգիստ էիր.  
իհարկէ պիտի հանգիստ լինէիր, որովհե-  
տեւ քեզ ի՞նչ հոգ, թէ Միշան երկար  
ժամանակ սպասեց նամակիդ, չ'ստացաւ,  
սկսեց կասկածել, տեղեկացաւ ամեն բան,  
և արդէն հիւանդ կուրծքն աւելի բոր-  
բոքւեց հիւանդութիւն կուլող մահւան  
գործիքով. հիւանդացաւ և ի՞նչ... Կըն-  
քեց իր մահկանացուն: Բայց դու ալդ  
չ'գիտէիր, քո ի՞նչ գործն էր այդ ամենը,  
դու սպասում էիր միայն մի բանի. «պա-  
տասխան, պատասխան», հառաչում էիր  
գիշերները՝ բարձդ թրջելով աղի կաթիլ-  
ներով. արդար էիր թէ ոչ, ալդ ոչ ոք  
չէ կարող ասել, միայն ալդպէս էլ պէտք  
է լինէր անկասկած: Բայց մի բան էլ

կալ. Միշային հողի ծոցում հանդիստ  
տվին, մեռաւ, չքացաւ նրա շունչը,  
բայց լիշտակն իր հետ գետնի տակ ըլ  
տարաւ, նա գեռ կենդանի է. այո՛, թէ-  
կուզ դու ոտնատակ տվիր, բայց ոտի  
տակ տրորւողն էլ չէ կորչում. քանի՛-  
քանի՛ անդին բաներ կան, որոնք թա-  
ւալելով փոշու մէջ՝ պահպանում են  
իրանց գոյութիւնը. եղի՛ր սրատես և  
ահա կ'տեսնես, որ Միշայի վերջին խօս-  
քերը ոտներիդ տակ աղաղակում են՝ գը-  
թութիւն հայցելով, ուստի չ'զարմանաս,  
եթէ երբեկցէ ուշադրութիւն դարձնես  
նրա լիշտակի վրայ: Ա՛խ, Եւայի գուտ-  
տըր, տեսնում ես, որ քո նոր սիրելին  
միշտ անցնում է լուռ, առանց ուշադր-  
րութիւն դարձնելու վրադ, առանց ժըպ-  
տալու կարծածիդ հակառակ, ուրեմն էլ  
ինչո՞ւ ես ուշացնում. երես ունեցար նա-  
մակդ յանձնելու, երես ունեցիր և՛ բե-  
րանացի բացատրութիւն պահանջելու.  
պէտք չէ քաշւել, բոլորից արդարացը-

ւած է ալդպիսի մի վարմունք, ինքդ էլ  
անմեղ ես կատարելապէս: Ուզում ես,  
որ ինքը՝ սիրելին մօտենալ և ասէ.  
«Մաշա, սիրում եմ քեզ!...»  
Բայց նա տղամարդ է, կոշտկոպիտ արա-  
րած է, նրա սիրտն ընդունակ չէ այդ  
աստիճան զգացւելու, նուրբ, փափուկ,  
վիրաւորւող, կասկածող, տառապող չէ...  
Ինչպէս պիտի լինէր, այնպէս էլ  
եղաւ. թէև կանացի հպարտութիւնը մի  
քիչ թուլ չէ տալիս գլուխ խոնարհել  
տղամարդու առաջ, այլ պահանջում է,  
որ կոպտութիւնը վիզ ծուէ քնքշութեան  
մօտ, բայց այնուամենանիւ... «անճարը  
կերել է բանջարը», — երբ տղամարդու  
կոպտութիւնը քնքշանալու հնարաւորու-  
թիւն չ'ունի, կանացի քնքշութիւնն  
ստիպւած է լինում պաշտելու տղամար-  
դուննրա կոպիտ գեղեցկութեան համար...  
Կանալք շատ հազիւ են խոստովանում  
իրանց սէրը. այդ ոմանք վերագրում են  
նրանց համեստութեան (միթէ միրելն

անհամեստութիւն է), ոմանք ժուժկալութեան, և ոմանք ուրիշ բաների, բայց ես կ'ասեմ, որ այդ նրանց երես տալուցն է։ Մաշա, կարծեմ կ'ներես, որ ճշմարտութիւնն եմ յախնում, որքան էլ դառը լինի, այնուամենայնիւ ճշմարտութիւն է։

Այս, Մաշան չ'կարողացաւ էլի՛ համբերել, արաւ իր ինդիրքը, կամ աւելի ճիշտն ասած՝ իր պահանջը, որովհետեւ կանայք ինդիրել չ'գիտեն, եթէ ոչ խօսքով, գէթ հոգով։ Մաշա, եթէ իմանամ, որ մի օր յանդիմանութիւն պէտք է կարգաց երեսին՝ համարելով խօսքս սիսալ, սուս, զուրկ որեւէ հիմքից և վերջապէս զրպարտութիւն, այս ըոպէիս թղթի կը-տորտանքները քամու բաժին կ'դարձնեմ. բայց կարծելով՝ որ ոչինչ չես ունենալ գէմս գուրս բերելու, որովհետեւ կանայք —ինչպէս հաւատացնում են տղամարդիկ— համեստ են և քաղաքավարի, և եթէ իրաւունք են ունենում մինչև անգամ

մէկին վիրաւորելու, այդ իրաւունքից հրաժարւում են, կամ աւելի ճիշտը իրանց ձայնը տալիս են որեւէ տղամարդու, այդ պատճառով ազատ եմ զգում ինձ կանացի յարձակումներից, իսկ տղամարդկանց հետ հեշտ է հաշիւ տեսնել. աւելի լաւ կ'համարեմ, որ վրաս յարձակեն տասնուերեք ինձպիսիներ, քան թէ կէս կին։ Այնպէս կ'տամ ինձ վիրաւորող տը-զամարդի վզակոթին, որ հօր հարսանիքը միտն ընկինի։ Օ՛, ես սարստիկելի մարդ եմ. երբ կատաղութիւնն եկաւ, հազարաւոր ա խ մ.ա խ ն ե ր չեն կարող գէմս կանգնել, բոլորին կ'փշեմ կուռ բազուկ-ներովս, և եթէ այդ էլ չ'օգնէ, պապիս մելիքական թրովը։ — Պապի, եթէ իմանալիք գերեզմանիդ մէջ, թէ ինչպէս է վառւում քո արիւնը թոռանդ մէջ, անշուշտ մելիքութիւնդ ինձ կ'տալիր. բայց ով գիտէ, գու կ'մտածես. «Է, ինչ էք դուք՝ գաճաճներդ, որ Մելիք-Աւան-Խանի տեղը բռնէք»! Ողջան ոսկորներիդ

քո թռոնիկի կողմից, հանգիստ եղիր, մելիքութիւնդ զօռով չենք խլիլ քեզնից, դուք քո փառակեղութեամբ գերեզմանիդ մէջ էլ Մելիք-Աւան-Խանն ես և Շահի Եպեանը, իսկ մեզ շահը չէ էլ ճանաչում։ Թագը տւէք, սիրելի՝ ընթերցողներ (երկու սեռի), որ գրիչս երբեմն խաղալ, որովհետեւ առանց այդ գւարձութեան շուտով կ'մօտենալ մեզ ծերութիւնը։ Մի դատապարտէք ինձ, ահա դառնում եմ օրիորդ Մաշալին։ — Հա, ի՞ դէպ ասեմ, որ մի անգամ Մաշա անւան փոխարէն Սոֆիա էի գործածել, բայց մի ընկեր ինձ խորհուրդ տւաւ, որ աւելի լաւ է հէնց իսկական Մաշան վերցնեմ, որովհետեւ նա այնպիսի մի լաւ սովորութիւն ունի, որ սիրում է միայն այն տղամարդկանց, որոնց անունն իր անւան հետ նոյնահանդ է. ես ուզում էի հէնց Սոֆիա անունը գործածել, բայց նրան նոյնահանդ տղամարդի անուն չ'գտալ, այդ պատճառով լսեցի ընկերոջս խորհրդին և

հրապարակ դուրս բերի Մաշալին ու Միշալին և ապա թէ Եաշալին, դուցէ քիչ լետոյ էլ բերեմ Սաշալին, Գրիշալին, Պաշալին և մի քանի ուրիշներին։

«Պատասխան», պատշգամբից կանչեց Մաշան այս անգամ լսելի ձայնով փողոցով անցնող գլխակոր Եաշալին, որը մի անգամ վեր նայելով ժպտաց թեթև, գլխով դրական նշան արաւ և նորից հեռացաւ առանց կանգ առնելու։

«Տեարք և տիկնալք» և օրիորդներ. ձեզ հետ էլ է պատահել այս կամ սրա նման մի դէպք։ Եթէ այս, ապա ուրեմն մտաբերեցէք, թէ ինչ դրութեան մէջ էիք և կ'տեսնէք, որ Բօկկաչիօն եթէ կենդանի լինէր, անշուշտ մի գողտրիկ նօվելլա պիտի հիւսէր ալդ մօմէնտների վրալ հիմնւած։ կամ եթէ Մանտեգացան իմանար, պիտի մտցնէր իր «Սիրոլ Փիզիօլոգիա» աշխատութեան մէջ և վերջը մի ալտպիսի աֆօրիզմ կազմէր — «Սիրոյ մէջ սպասողական դրութիւնից աւելի

ծիծաղելի բան չկայ!» — Իսկ դուք չ'մեղա-  
դրէք ինձ, որ ուզում եմ սիրոյ վրայ քիչ  
ծիծաղել, որովհետև կեանքն է ինձ ալս-  
պէս պրօզալական գարձրել, ես ինչ մե-  
ղաւոր եմ: Եթէ ալսպէս շարունակւի,  
ով գիտէ, դուցէ մի օր վարդապետ դառ-  
նամ. այն ժամանակ... ով սիրավառ կա-  
նալք, ինձ ձեր խոստովանահայրը կ'շե-  
նէք, չէ, որովհետև սիրոյ գաղտնիքների  
հետ ես էլ բաւական ծանօթութիւն  
ունեմ:

Գլուխս փորձանք չ'բերելու համար՝  
կրկին սկսեմ խեղճ Մաշայի արկածներից:  
Ժամանակը բոլորի համար նոյն տես-  
զութիւնը չ'ունի: Միենոյն ժամացոյցի  
սլաքը միւնոյն ժամանակամիջոցը մէկին  
ըռպէ է երևացնում, միւսին ժամ, եր-  
բորդին էլ աւելի երկար: Մաշայի պէս  
սպասողական դրութեան մէջ ընկած ա-  
րարածին՝ հասկանալի է որ ժամն օրից  
երկար կ'թւար: Նայում է խեղճը ժա-  
մացոյցին, նայում, կարծես իր սիրոյ ա-

ոարկան լինի, և չէ կշտանում: «Ա՛յս,  
ի՞նչ կ'լինէր, եթէ ժամացոյցի սլաքը ես  
առաջ տանէի, ժամանակն էլ հետն ա-  
ռաջ գնար!..» Բայց դու տանջւիր, Մա-  
շա, շատերին ինչ, ընդհակառակն դժգոհ  
մարդիկ ևս կան, որոնց համար քո ժա-  
մը վայրկեան է: Եթէ դու ունենալիր  
Հերակլէսի համբերութիւնը, որը մինչեւ  
այժմ էլ գեռ մեխւած է մնում Կովկաս-  
եան շղթայից, անշուշտ ժամացոյց էլ  
չէիր գործածիլ, մանաւանդ որ բախտա-  
ւոր մարդիկ ժամացոյց չեն գործածում:  
Սակայն և այնպէս թէև դու գեռ պա-  
տասխան չես ստացել, բայց համոզւած  
ես, որ այդ պատասխանը լինելու է դը-  
րական. ով կ'յանդգնէ մի արատ դնել  
քո գեղեցկութեան վրայ. չէ որ դու ըր-  
ջանիդ ծաղիկն ես, չէ որ վերջապէս քեզ  
շրջապատող բոլոր օրիորդների մէջ ամե-  
նից ազատամիտն ես, որ մի միջոց է հա-  
մարձակօրէն դուրս թափելու սրտիդ ծալ-  
քերում դուն դրած զգացմունքը. իսկ

թէ որ աստիճանի է այն, դրա համար  
էլ կարելի է ասել, որ ոչ ոք այնքան  
չ'ունի: Դու կարող ես նոյն խսկ հոգեսէր  
վարժապետներին սիրահարեցնել վրադ,  
ուր մնաց Եաշալի պէս մի dandy-ին: Նա  
այնքան էլ ամուռ բնաւորութիւններից  
չէ, համոզւած ես դու. աւելի լաւ, որ  
օր առաջ այդքան տեղեկութիւններ ես  
հաւաքել նրա մասին. բայց չէ՞ որ դու  
լսել ես և այն, որ նա անբարոյականին  
մէկն է, սրան—նրան խաբում է, կեան-  
քըն անց է կացնում շւայտութեամբ...  
թէ դու լաւ գիտենալով կանանց բամ-  
բասասէր բնաւորութիւնը՝ հաւատ չըն-  
ծալեցիր ամեն մի խօսքի: Բայց եթէ  
յանկարծ կանալք ալս դէպքում արդա-  
րացի դուրս գան! այդ դէպքում ինչ  
կ'անես. միթէ կալ մէկը, որ ցանկանալ  
իրան ուրիշի ձեռին խաղալիք դարձնել:  
Դու սպասում ես... Վերջապէս ցանկու-  
թիւնդ էլ կատարեց. որքան էլ անվերջ  
թւաց ժամանակը, այնուտամենայնիւ վերջ

ունեցաւ: — Գուշակեցին, որ մօտիկ 1899  
թւականի նոյեմբերին մեր աշխարհն  
էլ պէտք է վերջ ունենալ, որովհե-  
տեւ յոգնել է մեզ պէս մարդիկ ծնելուց:  
Իրար միս ուտել, իրար ոտի տակ քան-  
դել, իրար վրայ ծիծաղել, ահա թէ որ  
պիսի՞ գաղան է մարդը: Մէկը սիրում է  
միւսին, միւսը գրա փոխարէն ատում է  
նրան, կամ արհամարհում է, կամ շատ  
— շատ միայն յարգում է: Որքան տար-  
բերութիւն սիրելու և յարգելու մէջ:  
Մէկն ինձ սիրում էր, իսկ ես ատեցի  
նրան հէնց այն պատճառով, որ նա ինձ  
շատ էր սիրում: Ահա այսպիսի գատարկ  
պատճառներն են իւրանքանչիւրիս դըժ-  
բախտացնում: — Ergo, շատ լաւ կ'լինէր,  
որ աշխարհս վերջ ունենար: Բայց որ-  
քան ցաւալի բան! այդ գուշակութեանը  
հետեւց ակադեմիական մի ազգարարու-  
թիւն, որով ոչնչանում է գուշակութեան  
զօրութիւնը, և բանից երևում է, որ  
աշխարհը մեռնող ջանակար չէ եղել:

Օրքան էլ գլուխ կոտրես, պէտք է ապրես  
տանջելու և տանջւելու համար. ես կար-  
ծում եմ, որ երկու դէպքում էլ պէտք  
է համարւես եղեռն առըծ: Եղի՞ր  
ամենազնիւ մարդը, բայց էլլի չարագործ  
ես, որովհետեւ էլլի տանջում ես մէկին,  
այն է՝ քեզ, որովհետեւ ազնիւ մարդը  
չէ կարող չ'տանջւել այս հանգամանքնե-  
րի մէջ: Սրանից չ'եզրակացնէք, թէ ա-  
նազնիւ մարդիկ չեն տանջում. նրանք  
տանջում են հէնց նրանով, որ չեն կա-  
րողանում հասնել իրանց բոլոր ցանկա-  
ցածին, սրան ու նրան տապալելուն:

Եւ ահա Մաշան նայում է պատու-  
հանից անընդհատ գողալով, կասկածը  
լուսի հետ խառը: Անցում է նա, Եա-  
շան. ահա, ահա վերև նայեց . . . գլխով  
նշան արաւ Մաշալին, որը ներքև վա-  
գելով կանգնեց մեծ դրան շէմքում:  
«Վերցրէք», ասաց շփոթւած երիտասար-  
դը՝ նամակը Մաշալին տալով: Օրիորդը  
վերցնելով շտապ վեր բարձրացաւ և նըս-

տեց իր փափուկ թիկնաթոռի վրայ, ուր  
հազիւհազ կարողացաւ սիրտ անել և  
բանալ . . . Զ'անցաւ մի վալրկեան, և նա  
կատաղի լուսահատութեան մէջ հեծկըլ-  
տալով՝ մըմնջում էր նամակի չորս բա-  
ռերը. «Ես քեզ չեմ սիրում» . . .

## II.

Քեզ եմ կանչում այժմ, Սաշա, հասել է այն ժամը, երբ պարտք է դուռը վրադ դուրս գալու հրապարակ։ Մաշա անունը վտանգաւոր անուն է, չնայած որ իմ ասած Մաշան գուցէ հենց ինքդ ես, միայն այդ անւան տակ թագնւած։ սակայն և այնպէս ուրիշներն այդպէս չ'ընդունեցին և անարդար կերպով իրանք իրանց վիրաւորեցին՝ իրանց վերաբերմամբ անիրաւութիւն անելով։ Ի գլխի համար ուղում էին գլուխս փորձանքի մէջ գցել, բայց այդ լուգումները շարժեցին ծիծառս ու արհամարհանքս, իսկ վիրաւորել—ոչ երբէք, որովհետեւ միտք չէի գտնում դրանց մէջ։

Դէպի գործ ուրեմն, Սաշա, միայն այն պայմանով, որ վրադ ընդունես այն, ինչ որ յատկացրել եմ Մաշաին։ — Այդ

ինչպէս թէ... գուցէ բացականչես դու—  
— չէ որ նա ուրիշ է, ես ուրիշ... —  
Բայց թո՛յլ տուր 'ի սէր ճշմարտութեան  
ասել, որ դու թէև ցոյց ես տալիս քեզ  
իբր զարմացած, բայց այդ կեղծ է, որով  
հետեւ շատ լաւ գիտես, որ Մաշան հէնց  
ինքդ ես, միայն անունիդ մէջ Սի փո-  
խարէն Մ է եղել դրած, գուցէ նոյն  
իսկ սխալմամբ։

Ուրեմն դու լալիս ես տակաւին։  
չարանենգ նամակն այնքան խոր խոցեց  
քեզ, որ ամբողջ երեք օր է՝ գլուխով  
կորցրած ես, և երբեմն անսպասելի կեր-  
պով արցունքը վագում է կարմրած ա-  
չերիցց։ Միթէ այդքան չքնաղ աչերին  
նեղութիւն կ'տան. 'ի սէր գեղեցկութեան,  
դադարիք, ինչ լալու-մղկտալու ժամանակ  
է, միթէ գատապարտւած ես ոչնչացնե-  
լու գրաւչութիւնդ։ Տես, մէկ նալիր ու  
մխիթարւիր, թէ քանի երկրպագուներ  
ունես. ահա մի սե, բայց տանջւող երի-  
տասարդ. նա իր կրծքի տակ երկրպա-

գութեան տաճար է կառուցել և նրա  
սեղանի վրայ իր անձը խոշտանկման է  
ենթարկում, միայն թէ լիշեցնեն ալդ  
կսկիծները, որ աշխարհումս գոյութիւն  
ունես գու քո սպառնալից հրապուրովդ։  
Մէջ փառք է, չէ . . . Ահա մի ուրիշը,  
բարակ զբժունքներով, նեղ փորով, մի-  
ջահասակ, մթնած աչքերով, մի խօսքով  
սովորական մի մարդ. նրան ինչ կ'ասես,  
չէ որ նրա աչքերը մթնած են հէնց քեզ  
համար։ Է՞հ, իհարկէ ոչինչ չ'պէտք է  
տեղի ունենայ, միայն բնականաբար նա  
էլ փառքիդ վրայ փառք կ'աւելացնէ։  
Մի երրորդը — երկարահասակ, երեսը բը-  
ծերով ծածկւած, կապուտ աչքերով, նեղ  
ճակատով և նոսր — ցանցառ միրուքով.  
Նա պատրաստ է քո մի հայեացքի տակ  
իսկոյն մեռնել, կամենում ես, փորձի՛ր  
մէկ և կ'համոզւես խօսքերիս ճշմարտու-  
թեան մէջ։ Ե՞լ ասեմ . . . բայց ոչ, բաւա-  
կան է, ինչ կարիք կայ ամբողջ օրերով  
ետևիցդ գող կատւի պէս շրջող ասպետ-

ներին մէկ-մէկ թւել. միայն լիշատակու-  
թեան արժանի է հետդ թրեւ եկող կաս-  
կածելի պարոնը, որի մասին ասում են,  
թէ վրադ սիրահարւած է. բայց գու մի-  
ամիտ մնա, ինքս սովորութիւն չ'ունեմ  
այդպիսի լուրերին հաւատ ընծալելու,  
իսկ ուրիշներին կ'խնդրեմ ընկերաբար,  
որ ինձ հետևեն գոնէ այս գիպւածում։  
Ես կարծեմ զուր տեղից քեզ հրա-  
ւէր կարդացի սիրախաղութիւններով ըգ-  
րադւելու, թէև ինքդ այնպէս ես հա-  
մոզւած, որ այդ սովորական սիրախաղու-  
թիւնից զատ ոչինչ գոյութիւն չ'ունի  
տիեզերքի մէջ՝ կեանքը մի կերպ վերջա-  
ցընելու համար. « իզուր հրաւիրեցի » եմ  
ասում այն պատճառով, որ գեռ շատ  
ժամանակ չէ անցել այն օրից, երբ իսրդ-  
ճիդ առաջ խոստացար, որ ուրիշներին  
չես սիրելու այլ ես, եթէ մինչեւ անդամ  
մերժում ստանաս։ Եթէ խօսքերդ ասած  
լինէիր մի քանի տարի առաջ և յետու  
մեղանչէիր, կարող էիր պատճառաբանել,

թէ մոռացել ես, բայց այս դէպքում  
գոնէ ՚ի պատիւ պատւի հաստատ պիտի  
մնաս ասածիդ, գովելի՛ է, շատ գովելի՛  
(ուրիշ խօսք չ'ունեմ ասելու) ալդպիսի  
մի վարմունք, թէւ կան մարդիկ, որոնք  
խստասրտօրէն ալդ միայն պարտք են  
համարում և ոչ առաւելութիւն, իսկ այդ  
սովորական «պարտքի» դէմ մեղանչողնե-  
րին տալիս են ս տ ո ր անունը, բայց  
ես նրանցից չեմ, ես շատ զիջող եմ, ալդ-  
պէս է ստեղծել ինձ նախախնամութիւ-  
նը, և գոհ եմ:

Օ՛ հրաշք (իմ խօսքերը չեն թէ այս,  
և թէ շարունակութիւնը), օ՛ անլուր  
արարք. նա, երևակալեցէք, որ քիչ ա-  
ռաջ լոեցրեց իր խողճը մի ճակատագը-  
րական խոստումով, թէ այլ ևս ոյժ չը  
պէտք է ունենալ նւիրւելու մի ուրիշն,  
նա, որ իրան համարում էր վերջնակա-  
նապէս նւաճւած և սիրոլ կոտրւած,  
ընկճւած, նա ալսօր, քանի դեռ արցուն-  
քի հետքերը չեն չքացել ալտերից, ալսօր,

ասում եմ, նա նայում է մի ուրիշի վը-  
րայ փոքրութեամբ և ոչ անտարբեր  
հայեացքով: Ալդպէս ուրեմն: Բայց շատ  
էլ հեշտութեամբ չ'եղաւ ալդ, նախ՝ Սա-  
շան մոռանալ ուզեց նրան, որը ոչինչ  
համարեց իր աղերսանքը և օդը ցնդա-  
ցըրեց իր լուսերը... և այդ կարծում էք  
թէ ալնքան էլ դժւար չէ... որքան էլ  
լինի, բայց կալ էլի՛, եթէ ոչ շատ, գոնէ  
քիչումիչ հեշտ չէ: Նախ և առաջ պէտք  
է օձի սիրո ունենալ, երկրորդ՝ ըստ  
ոմանց զգացմունք ծախել իմանալ, իսկ  
ներողամիտների կարծիքով՝ միայն փոխել  
երրորդ՝ պէտք է կեանքի նպատակը տես-  
նել միայն սիրախաղութեան մէջ և ապ-  
րել միայն ՚ի սէր սիրոյ, այն էլ ինչպիսի  
սիրով.—Իհարկէ սովորական... չորրորդ՝...  
բայց այս ինչ անմտութիւն է, ինքս ինձ  
փորձանքի մէջ եմ գցում. կանանց բա-  
րուականը մերկացնելիս՝ պիտի վերջին  
ծալը գգոյշ լինել. գիտէք ինչու... հէնց  
այնպէս... որովհետև նրանք կին են...

Գուցէ չ'բաւականանաք այս որոշումով,  
կ'ասեմ ուրիշ կերպ.—կանալք շատ բծա-  
խընդիր են և ցուցամոլ, և բաւական է  
մի չնչին վիրաւորանք հասցըր նրանց,  
կամ մինչեւ իսկ այնպիսի վիրաւորանք,  
որ միայն բատ երեւութին է, կամ մինչեւ  
իսկ այնպիսի վիրաւորանք, որ բոլորովին  
նրանց չէ վերաբերում, նրանք կ'կանգ-  
նեն դէմդ պատւի համար և քեզնից  
բաւարարութիւն կ'պահանջեն այնպիսի  
եղանակով, որ ողջ աշխարհին յատնի կը  
դառնայ նրանց վարմունքը, և այդպիսով  
նրանք իրանց հասած կ'համարեն իրանց  
նպատակին, այն է՝ ցուց տալ աշխարհին  
իրանց գոյութիւնը։ Գուցէ մի համեստ  
ընթերցող ծածկաբար ականջիս կ'ասէ,  
թէ՝ «Եղբայր, դու էլ ես փոփոխամիտ,  
գիտես. քիչ առաջ կարծում էիր, որ կա-  
նալք համեստ են և այդ իսկ պատճառով  
ազատ էիր զգում քեզ նրանց յարձա-  
կումներից, իսկ այժմ...»—Այժմ հակա-  
ռակն եմ համոզւած, կարծիք փո-

խելն ամօթ չէ, ամօթ համոզմունք փոխողներին! . . .

Ուրեմն կանալք շատ յանդուգն են  
և ցուցամոլ։ Այդպէս է և՝ Մաշան իբրև  
սովորական կին, հետեւապէս պէտք է վա-  
խենալ ամեն բան ասելուց։

Եւ ահա Սաշան մոռանալ է ուզում  
անսիրտ Եաշալին և... մոռանում է։ Նա  
այժմ ուրիշին է պաշտում, բայց միայն

այն պայմանով, որ նա էլ իրան պաշտէ:  
Եւ իրաւ, միթէ կարելի է ապրել և չը  
սիրւել. այդ առնւազն դժբախտութին է,  
այնպէս չէ, Սաշա, թէկուղ նոյն իսկ  
շատերը մերժեն, ինչ վնաս, մէկը մեր-  
ժեց, միւսին կարելի է դիմել, ոա էլ  
մերժեց, երրորդին, և ալսպէս հօ կը  
գտնւի մէկը վերջապէս, որ կ'հասկանայ  
դիմողին, իսկ եթէ չի գտնւիլ, հարկաւ  
կարելի է սպասել, որ նորը ծնւի: Սիս  
գուցէ հէնց քեզ մի փոքր չափազանցու-  
թիւն երևալ, որովհետև դու երդւել ես  
արդէն Գրիշալի (Սաշալի նոր սիրելին է)  
մօտ, որ նրան երբէք չես դաւաճանելու,  
որովհետև նա այնքան բարի էր, որ ըն-  
դունեց առաջ արկութիւն դ —  
այն է՝ սիրել և սիրւել:

Սաշան ու Գրիշան սովորութիւն  
էին գարձրել ամեն երեկոյ հիանալ մի-  
միանցով բաց երկնքի տակ, օրիորդը պա-  
տրզգամբում կանգնած, իսկ պարոնը փո-  
ղոցում, երբեմն նամակներ փոխանակել

և երբեմն իջնել մեղ ծանօթ գրան մօտ  
համբոյրներ փոխանակելու համար :  
Համբոյր... օ՛, մարդկային անհանգիստ  
զգացմունքի առաջին մեղսալիք պտուղ,  
ով քեզ դուրս բերաւ հրապարակ, որ-  
պէսզի թոյլ սրտերը պղտորես անխնայա-  
բար. եթէ կարելի լինէր ամբողջ մարդ-  
կութեանը խմել տալ Լետալի ջրից, ես  
այլ ևս աշխարհ չէի բերիլ այդ չար սա-  
տանան, յագեցման այդ զէնքը, արբուց-  
ման այդ դեղը — համբոյրը: Ի դէպ, Սա-  
շա, թէկ ասում են, որ համբոյրը սիրոյ  
ծարաւը մեղմացնելու միակ միջոցն է,  
բայց և այնպէս նրա ճաշակողներն աւե-  
լի են ծարաւում, չը... Քեզնից եմ հար-  
ցընում այս այն պատճառով, որ դու շատ  
լաւ գիտես այդ և խօսքս միայն քեզ հետ  
է այս ըովէին, որպէս և միտքս, որով-  
հետև գիտել եմ ուզում քալլերդ, որ չը  
լինի թէ ճանապարհ փոխես, կամ փի-  
լիսոփայօրէն ասենք — կրօնդ փոխես: Թէկ  
այդպիսի բան չեմ սպասում քո կողմից,

բայց էլի, մարդն անլուսալի է, շատ էլ չէ կարելի հաւատ ընծալել արցունքով կնքւած խոստումներին, որովհետև մեր դարում թղթի վրայ եղած հաստատութիւնն աւելի մեծ արժէք ունի, քան սրտինն ու զթունքների վրայինը. իսկ դու էլ այս դարու հարազատ ծնունդն ես, որև մեծ պարծանք է քեզ համար:

Կրկին եմ զգուշացնում քեզ, Սաշա, չարանենդ գեի խաբէութիւնից: Երբ տեսուչ ինձ նկատողութիւն է անում (գըգ-բախտաբար գեռ աշակերտ եմ!), միշտ վերջում աւելացնում է. «Զգուշացնում եմ քեզ!» Նոյնը ես եմ ասում Սաշային, թէե տեսուչ չեմ: Ես գոնէ տեսչիս զգուշացնելու վրայ ոչ մի ուշադրութիւն չեմ դարձնում, էլի մնում եմ նոյն անտանելի աշակերտը, նոյն փչացած մարդը. բայց որովհետև ես Սաշայի տեսուչը չեմ, այդ իսկ պատճառով իրաւունք ունեմ կարծելու, որ Սաշան կ'լսէ ինձ, որովհետև ես 'ի պաշտօնէ ստիպւած (ex officio)

չեմ անում նկատողութիւններս և զգուշացումս, այլ Սաշայի բարիքն եմ ցանկանում, իսկ տեսուչս պարտաւոր է անպատճառ նկատողութիւններ անելու, եթէ նոյն իսկ նկատելու բան էլ չ'լինի. ապա ինչումն է կայանում նրա տեսչութիւնը:

Զուր է իմ զգուշացնելը, Սաշան նշաննում է ուրիշի հետ, այսինքն՝ ոչ թէ ինքը, այլ ծնողներն են նշաննում: Սաշան թողել է իր երազները, այլ ևս չէ ձգտում հասնելու անհասանելի իդէալական աշխարհը, սիրոյ եղեմը, նա գործնական է գարձել, նրա իդէալն է այժմ հաստափոր, գաճաճ վաճառականի մեծ հարստութիւնը. «Ալդքան շուտ...» գուցէ կ'ասեն շատերը. «ալդքան շուտ դաւաճանել մէկին! գոնէ նամակների տըպալաւորութիւնը կորչէր և ապա մոռանար ամեն ինչ. այդ թեթեամտութիւն է, մինչև անգամ...» Է՛, բայց ինչու, ալդպէս է պահանջում օրիորդի կարիերը,

նվ կարող է նրա ձեռքից բռնել և արգելել անելու այն, ինչ որ ազատ համարւող կամքի գործն է, այնպէս չէ։ Եթէ կարելի լինէր մարդկային կամքի վրայ բռնանալ, այն ժամանակ աշխարհին միայն մէկը կ'տիրապետէր։ Սաշան կարող է ամենքին ասել. «ի՞նչ գործ ունէք հետո, ես ալսպէս եմ ցանկանում...» Եւ իրաւ, իրաւունք ունի նա որպէս սիրելու, այնպէս էլ թողնելու ոչ միայն Գրիշային, այլև նրա նման շատ—շատերին։ Սաշան զգաստ է, նա չի գործիլ այն, ինչ որ իրաւունք չ'ունի. միթէ նա իր բախտի մասին այնքան չէ մտածում, որքան ուրիշները։ Զարմանալի է մարդուս բնաւորութիւնը. մէկ էլ տեսար բոլորովին անտեղի կերպով կոտրած գդալի պոչի պէս ուրիշի գործերի մէջ խառնւեց. հետաքըրքիր է իմանալ, թէ ումնից է նա դատաւոր կարգւում։

Գրիշան կորցնելով սիրոյ առարկան, մի ըոպէ կորցրեց նաև տղամարդութիւնն

ու լաց եղաւ Սաշայի առաջ։

— Ի՞նչ ես արտասում, քեզ ի՞նչ եմ արել, հարցնում է Սաշան. — Հեռացիր այստեղից։

— Օրին՛րդ, իսկ նամակներդ... միթէ չես ճանաչում ինձ... ոչ, երեկ դու ձեւանում ես, թէ չէ ինչու երեկւայ մեր ամբիծ համբուրը պիտի արատաւորես այսօրւայ մերժումովդ։

— Ո՛չ, ես չ'գիտեմ, թէ ով ես, հեռացիր, կ'լսեն մեզ... .

— Ինչպէս հեռանամ, միթէ հեշտ ես կարծում, ոչ, դու նորից պիտի սիրես ինձ։

— Հեռացիր, անամօթ... .

Եւ հեռացաւ Սաշան, հեռացաւ նաև Գրիշան։ Վերջ... Բայց ոչ, մի քանի խօսք ես, և նրանց սիրային պատմութիւնը վերջացած կ'համարւի՝ որպէս մի կարճ ճանապարհ, որ շտապով կտրում է անհամբեր սուրհանդակը։ Ահա թէ ինչ. Գրիշան ունէր մի միջոց, որով կա-

բող էր վրէժինդիր լինել, բայց նա այդ չ'արաւ, չ'օգտւեց նամակներից, նա չէր ուզում փեսացւի աչքում դցել նրա ապագայ ամուսնացւին, որովհետև այդ աննպատակ և ցած մի գործ էր համարում: Բայց նա ունէր մի բարեկամ, որ գիտէր նրա բոլոր գաղտնիքները. այդ հոգածու բարեկամը գաղտնաբար վերցըրեց նամակները և տանելով՝ ցոյց տւառ փեսացւին օրիորդի ներկայութեամբ: Սակայն բոլոր մարդիկ նոյն հոգին չ'ունեն. մէկը տաք բնաւորութեան տէր է, միւսը սառը, երրորդը երկուսիցն էլ մի քիչ սեփականեցրած. փեսացուն ամենայն մեծահոգութեամբ ներեց Սաշալին, ասելով՝ որ սովորական բան է մէկին սիրահարական նամակներ գրելը, անկասկած ջահէլ աղջիկը չէ կարող առանց լուզերի ապրել, թէև այդ չէ նշանակում զրկւել մաքրութիւնից. իսկ այժմ Սաշան իրան է սիրում: — Կեցցես, Սաշա, շատ լաւ ընտբռութիւն ես արել, շատ. այդպիսի նե-

րողամիտ և հասկացող փեսալ ունենալ, մի գաղափարակից մարդու հետ կապւել և դեռ չ'պարձենալ իր երջանկութեամբ, չ'գոհանանալ սիրոյ Աստծուց: Բայց քո արածն ինչպէս էր. դու էլ պակաս չես. այդ նշանակում է քննադատել Ամուրին, ոչինչ համարել նրա սխալ որոշումը, նրա նետը մէկ սրտից հանել, մի ուրիշ սիրտ կոխել. չէ որ Ամուրը փոփոխականութիւն չէ ընդունում. նա իր արձակած նետն այլ ևս չէ ճարում, որ մէկ էլ հանէ, որովհետև կոլը է. իսկ դու, Սաշա, գոյացրել ես մի նոր Ամուր, որի աչքերը միշտ չորս կողմն են դիտում և ամեն օր նոր-նոր ընտրութիւններ անում: Ո՞վ կարող է քեզ հետ մրցել, քո սիրտը միայն մէկի համար չէ բարախում անշուշտ, մինչև անգամ առանց ծիծաղելու կարելի է քեզ անւանել ալ'տրուխտ. բայց աւելի զւարձալի կ'լինէր, եթէ մի քանիսին միանգամից սիրէիր . . . Սակայն թող չ'զարմացնէ այս շատերին,

ով գիտէ, աշխարհ է, կարող է այս էլ պատահել մի օր... բայց, 'ի սէր Աստուծում, ալդքան շուտ կարծիք չ'կազմէք Սաշալի մասին, որովհետեւ այս, ինչ որ ասում եմ, ուղեղի մի խաղ է լոկ, գուցէ ըստ ոմանց՝ հիւանդ ուղեղի խաղ, գուցք ասածիս իրագործումն աւելի անհաւանական համարեցէք, քան լինելի. ինչ անենք, թէ Սաշան սոսկ հաշւի համար է մէկին սիրում, ալսինքն նա սիրում է լոկ իր հաշիւը և ոչ որևէ անձնաւորութեան. այս էլ ներելի է, նա միան մի բան է սիրում, այն է՝ իր հաշիւը, և ոչ թէ երկու, ալսինքն հաշւի հետ նաև փեսացըւին: Բայց օ... ինչե՞ր չի կարելի անել փողով. — սեփական, յատկապէս իրան պատկանող փառալեղ տուն, կառքեր, ծառաներ, տան առաջը Շամիրամեան պարտէզ, պարտիզի մէջ տեղը մարմարեալ շատրւան, շատրւանի շուրջը ծաղիկներ, ծառեր, մանաւանդ ինձորենի ու տանձենի, որոնց պատուզները շատ է սիրում

Սաշան, ծառերի տակ սեխ ու ձմերուկ, վարունկ, — իսկ գդում չ'արժէ... և վերջապէս ինքնուրոյն դառնալուց լետոյ կարելի է այնպէս տչքերը փոքրացրած նայել ուրիշների վրայ (թէե ալժմ էլ է անում, բայց քիչ), այնպէս քիչ խօսել ուրիշների հետ (թէե գուցէ համբերութիւնը հատնի), այնպէս զուգւել — զարդարել (իսկ հայրը ալժմ ժլատութիւն է անում)! բայց ինչ, միթէ օրինաւոր ամուսնուց զատ գոնէ մի հատ ապօրինի ամուսին ևս չ'պէտք է ունենալ... — Զը գիտեմ, ճշմարիտ, իսկոյն կ'տեսնէք, որ Սաշան այն չէ, ինչ որ կարծում էք:

Սաշան ամուսնացաւ իր վերին տափանի ներողամիտ փեսալի հետ. նրանք օրինակելի ամուսիններ են — կատարեալ ֆիլեմօնն ու Բաւկիդան: Սաշան ալժմ աշխարհալին կին է գուրսը, իսկ ներսը տանտիկին, և այն էլ ինչպիսի տանտիկին, ով է երևակայում... սովորական տանտիկին — սիրտը ծանրացած, հոգսերով

ծանրաբեռնւած... բայց ի՞նչ հոգսերով.  
— նա ձանձրացել է ամուսնուց, ցանկա-  
նում է ուրիշին սիրել! ... «Հա, հա, հա,  
հա...» — ինչու էք ծիծաղում, միթէ  
այնքանը ներելուց յետոյ անկարելի կ'լի-  
նի այս էլ ներել. ի՞նչ անենք, նա իր ա-  
զատ կամքն ունի, որ շատ համակրելի է.  
մի կտոր հացն ամեն տեղ կ'գտնեի, միայն  
մի կտոր զգացմունքն է, որ չի գտնեի.  
իսկ նա կարօտ չէ այն բանին, ի՞նչ որ  
հեշտութեամբ է ճարրում. նա ծարաւ է  
այն բարձր, բայց անհրաժեշտ կարիքին,  
որը դժւար է ձեռք բերել. այդպէս է  
լինում միշտ, հազւագիւտ բանն աւելի է  
ցանկալի, թէկուզ նա թոյն լինի: Մանա-  
ւանդ որ Սաշակին արգելւած է անելու  
այն, ինչ որ հակառակ է ամուսնու շա-  
հերին, նա ամուսնու հետ ինչ յարաբե-  
րութիւն ուզում է՝ պահպանի, քարը  
գլուխը, միայն թէ ուրիշին չսիրէ զուր  
տեղից: Բայց որ արգելւած պտուղը քաղ-  
ցըը է, ով չ'գիտէ, Սաշան կարող է ծա-

ծուկ սիրել. այսինքն՝ «սիրել» ասելով,  
նա հասկանում է գրկախառնութիւն,  
համբոյր, խոստումներ և այլ արագիսի  
շատ խեղկատակութիւններ, որին հաս-  
նելն այնքան էլ դժւար չէ Սաշակի հա-  
մար, որովհետև միևնունն է նրա համար,  
ինչպէս ասւած է, մէկը չի ընդունիլ իր  
գրկի մէջ, միւսն աւելի վեհանձն կը  
գտնեի. յոյսը կտրելը լաւ բան չէ. ամեն  
բանի մէջ պէտք է մի պստիկ էլ էլափիս-  
տիկ և յամառ լինել. «Չիք վրկութիւն  
արտաքոյ» այսոցունց լիմարութեանց:

Ապա, Սաշա, դէհ, ժամանակ է, շատ  
էլ չ'պէտք է յապաղել հիսթափումից յե-  
տոյ, սկսիր գիմումներդ, բայց լրջօրէն,  
մեղքացիր Դօն-ծուանների վրայ, որքան  
կարելի է շնոր սկսիր որոնումդ, որպէս-  
զի եթէ անաջողութեան հանդիպելու  
լինես, ոյժ ունենաս կրկին շարունակելու  
բարի գործդ, որ երկար ժամանակ չոր  
ու ցամաք չ'մնաս առանց նոր յոլգերի,  
առանց սրբազն կրքի: «Իսկ եթէ...

չ...աղողւի! . . . » կասկածով հարցնում  
ես դու. « այն ժամանակ պէտք է թոյն  
խմել . . . բայց մըտեղից ճարել այդ թոյ-  
նը . . . » Որպիսի՛ մեծահոգութեամբ ես  
վերաբերում դէպի անյայտ ապագալիդ  
խնդիրը, որպիսի՛ սառնասրտութեամբ ես  
մտածում մահւան վրայ. բայց հոգում ես  
թոյնի մասին, որ դժւար է գտնել. որ-  
տեղից ճարել! Կարծես ուրիշ միջոց չ'կայ  
ազատւելու կեանքի ծանրագոյն լծից.  
իսկ ինչի՞ համար են սուր պողպատը, ա-  
րիւնուշտ գնտակը կամ աստւածալին  
բարձր ժարութը:

Տեսնո՞ւմ ես, թէ որպիսի անհոգ  
մարդ եմ. կարծես քո կեանքը մի ճանձի  
կեանքից էլ աւելի անգնահատելի է:  
Բայց իզուր ես այդպէս կարծում. ես այս-  
պէս անհոգութեամբ մեռնելու միջոցներ  
եմ առաջարկում այն պատճառով, որ  
շատ լաւ համոզւած եմ, թէ դու դրան-  
ցից ոչ մէկը գործադրողը չես, և ոչ նոյն  
իսկ քո ուզած թոյնը կընդունես, եթէ

գտնւի. եթէ մի օր չարաճճին մէկը պա-  
տահմամբ քեզ թոյն ցոյց տալ, հարկաւ  
դու նրան « դահիճ » կ'անւանես: « Կինը  
թոյլ արարած է, պէտք է ներել այդպիսի  
դէպքերում, » կասես դու. — ներում եմ,  
մէկի կամքը բռնաբարելու սովորու-  
թիւնը չ'ունեմ, թող ուրիշներն ևս նե-  
րեն, ես հակառակ չեմ, որովհետեւ եր-  
կընքի տակ բացարձակ մեղաւոր չ'կայ,  
ամեն բանի մէջ մալր — բնութիւնն է մե-  
ղաւոր, ինչու մեզ աշխարհ բերաւ, որ  
մենք էլ մեր սեփական տանն զգանք մեզ  
և այն անենք, ինչ որ հաճելի է մեզ  
համար: Ես մինչև անգամ զարմանում  
եմ, թէ ինչ հիման վրայ են աւազակ-  
ներին պատժում. չէ որ նա էլ մարդ է,  
նա էլ պէտք է ապրէ բոլորիս պէս իր  
հաճուքներով, իր անհատական ազատու-  
թեամբ... եթէ նրա արհեստը միայն ձեզ  
դուր չէ գալիս, աշխատեցէք փոխել, և  
ոչ թէ պատժել նրան ու կրկին թողնել  
նոյն արհեստով պարապւելու. շինեցէք

նրան թէկուզ վաճառական... էհ, բայց  
վաճառականութիւնն էլ աւազակութեան  
աստիճաններից մէկն է. շինեցէք թէ-  
կուզ... ինչ ուզում էք՝ շինեցէք, բայց  
ոչ բանտարկեալ—անկրթին կրթում են,  
հիւանդին բժշկում, հաշմանդամին ձեռք  
մեկնում. «տուք, և տացցի ձեղ» :

«Անգոյն կեանքը հաւասար է զրօի.  
Եթէ անկարելի է բարիքների ձգտելը,  
գոնէ պէտք է չարութիւն գործել». այս  
քո կարծիքն է, Սահա, ալնպէս, ինչպէս  
Հերոստրատն ալրեց Դիանայի տաճարը,  
որպէսզի անունն անմահանալ. նա հա-  
սաւ իր նպատակին. բազմաթիւ դարեր  
են անցել, և վերջին դպրոցականն ան-  
գամ դեռ լիշում է նրան, յարգում նրա  
լիշտակը. գուցէ կ'զայ մի նոր աշխարհ,  
որի հսկայի սիրտ ունեցող մարդիկ նշա-  
նակութիւն չեն տալ մեր այժմեան բա-  
րե գործ կոչւող գաճաճներին, ուր  
մնաց չարագործներին. բայց քանի դեռ  
չ հասել այն դարը, կարող ես համար-

ձակապէս կեանք վարել այնպէս, որպէս  
ցանկանում ես, ամսինքն՝ քեզ խօսակցու-  
թիւնների առարկալ դարձնել գոյութիւ-  
նըք ցոյց տալու նպատակով։ Դու կար-  
ծում ես, թէ զգացմունքդ չեն գնահա-  
տում. ապա ինչ կ'ասես փորձերի դէմ.  
միշտ աջողութիւն ես գտել և լնդհա-  
կառակն՝ ուրիշներին ես սեացրել, իսկ  
ինքդ մնացել միշտ հպարտ (նախանձելի՝  
հպարտութիւն...), միշտ քմահաճ, միշտ  
անմատչելի, այսինքն այնպէս, ինչպէս  
թելազրել է խղճմտանքդ... բայց ճիշտը  
չ'գիտեմ, թէ դու էլ խղճմտանք ունես,  
թէ ոչ, միայն ալսքանը գիտեմ, որ այդ  
խղճմտանքը ստեղծւած է յատկապէս աղ-  
քատ, խեղճ, թոյլ արարածների համար,  
որոնց կեանքը արիւն է արտադրում,  
որոնք որևէ մէկին չնչին վիրաւորանք  
հասցնելու համար պատրաստ են փղձկալ  
անկողնի մէջ և իրանց անձն սպանել  
անկոչ մտքերով։

Սահան գտել է արդէն մէկը, գրաւ-

ւած է մի գանգրահերով — նրա հաշիւը  
գանգրահերների հետ է, ուրիշ ձեփ մարդ  
տեսնել չէ ուզում։ Բայց այս գանգրա-  
հերին չպէտք է խառնել ուրիշ գան-  
գրահերների հետ, որոնք գործ են ունե-  
ցել Սաշալի հետ երբեքցէ։ սրա անունը  
մի տարօրինակ անուն է (երեակալեցէք,  
Կաշա է), որը հէնց հրաւիրել է իր վրայ  
Սաշալի ուշադրութիւնը, և յետոյ նոյն  
իսկ սէրը։ Խորհուրդ եմ տալիս հոգածու  
ծնողներին՝ իրանց նորածիններին սովո-  
րական անուն տալ և այնպէս անել, որ  
տգեղանան՝ որքան կարելի է, թէ չէ Սա-  
շա — Մաշա — ները խաղ կ'անեն նրանց  
կեանքով։

Դառնանք տիկին Սաշալին, իմանա-  
լով՝ որ նա ճարեց մի սիրոյ մուրացկան,  
յանձին Կաշալի։ Նա այլ ես հօր տան  
ստրկուհին չէ, ալժմ ազատ կին է, ունի  
իր տունը, և ամուսինը բացակալ է լի-  
նում ցերեկները, կարող է սիրելի պարո-  
նին համարձակօրէն ընդունել իր տանը։

Ալդպիսով սկսում է նրանց խաղաղ յա-  
րաբերութիւնները։ յազմանդամ, բայց  
վախկոտ սիրահարն ամեն օր ալցելում է  
իր քնքով սիրուհուն, նրա շրթունքնե-  
րից վարդեր քաղում և էլի հանգիստ  
սրտով յետ գնում։

— Որքան երջանիկ եմ, Սաշա.

— Չէ, ես քեզնից աւելի եմ երջա-  
նիկ։

— Ես էլ պակաս չեմ։

— Ո՛չ, ես կ'ապացուցեմ, որ մենք

հաւասար չենք։

Ապացուցը կայանում է նրանում, որ  
Սաշան ամուր գրկում է Կաշալին, համ-  
բուրների հեղեղ թափում նրա աչքերին,  
երբեմն ամբողջ ըսպէներով չի հեռացը-  
նում շրթունքները Կաշալի կրակոտ շըր-  
թունքներից, որոնցից փափուկ բարձերը  
քիչ է մնում որ ալրւեն, բայց երևում  
է, որ Կաշան էլ յետ չէ մնում Սաշալից։  
Ալդպէս շարունակում են այս գործողու-  
թիւնները մինչ մի դժբախտ ըսպէ, որ

շնտ կոտրում է Սաշալի եթերասնունդ  
սիրտը, և... բայց սպասեցէք, ահա  
բոլորը:

Զար հարեանները լուր են տալիս  
Սաշալի ամուսնուն, թէ նրա բարի կինը  
միշտ իր մօտ է ընդունում ինչ որ կաս-  
կածելի պարոնի: «Ո՞վ պիտի լինի ալդ  
պարոնը! — հարցնում է կիսամօթահար-  
ւած ամուսինը. — պէտք է բռնել նրան  
ծուղակով, որպէս աղէսն են բռնում:»  
Եւ նա սկսում է միջոցներ մտածել այն  
աղէսանման մարդուն բռնելու համար,  
որ ապօրինի կերպով արատաւորել է նը-  
րա ընտանեկան պատիւը, շփոթել, պէտ-  
տորել է նրա նախանձելի վիճակը: Պէտք  
է բռնել, բայց ինչպէս. կինն իմացել է  
նրա մտադրութիւնը, այլ ևս չի ընդու-  
նիլ ատելի պարոնին, քանի որ կարող է  
մտածել, թէ ամուսինը ներս կ'գալ և  
աղմուկ կ'բարձրացնէ: Եւ ահա դժբախտ  
ամուսինը խորհրդի է բռնուում փոքր  
և մարդկանց հետ և որոշում է կնո-

ցը խարել, թէ ուզում է մի քանի օրով  
հեռանալ քաղաքից ինչ որ գործով, որը  
չէ ուզում հաղորդել կին—մարդու խել-  
քի բան չ'լինելու պատճառով: Իսկ Սա-  
շան անլապաղ նամակ է գրում իր կո-  
րած—մոլորւած սիրելուն.

«Խմ պաշտելի էսակ, իմ կորու-  
սեալ դրախտ, երջանկութեան  
փակւած գոները կրկին են  
բացւել մեզ համար: Նախա-  
խընամութիւնը լաւ է ճանա-  
չում Իր արարածներին: Նա  
գիտէ, որ առանց քեզ անկա-  
րող եմ ապրել ահա ամուսի-  
նըս վերջապէս հեռացաւ քա-  
ղաքից, երեկոյեան անմիջապէս  
թոփր ինձ մօտ, կ'սպասեմ  
անհամբեր: Ընդունիր անթիւ  
համբոյներս և շտապիր ստա-  
նալու նրանց իրականապէս:  
Քեզ նւիրւած քո Սաշա:»  
Սաշան իրաւ երեկոյեան մենակ չէ

մնում. սունկի պէս բանում է նրա առաջ իր սիրած կաշան, և ահա պատրաստ են հրճւելու, որչափ թոյլ է տալիս իրանց օրէնքը։ Համբոյները, որ Սաշան ուղարկել է միայն մի քանի գրերով երեսակայապէս, իրականանում են այժմ. հոսում են նրանք, հոսում, և միայն հետքերն են մնում զբժունքների, երկընքի այդ դռների վրայ։ Մի քանի ըոպէ ևս, և սենեակում կիսամռայլ է տիրում . . .

Բայց ախ, տեսական չէ նոյն իսկ երկնաշնորհ վայելչանքը։ — Թզուկ ամուսինը դուրս է պրձնում մահճակալի տակից՝ կոմբալագլուի դագանակը ձեռին. — որքան պրօզայական տեսարան ! ! . . նակատաղած է աւելի, քան երբեիցէ կատաղել է իր կեանքում։

—Պարո՞ն, այստեղ ի՞նչ գործ ունես, հարցնում է հսկայամարմին սիրահարին, որ սառած կանգնած է և դողդողում է անընդհատ՝ մահճակալի վրայ ուշաթափ

լնկած մերկանդամ Սաշալի մօտ։  
—Ե՞ս . . . ներեցէք, եթէ ես իմանալի . . . որ այսպիսի բան է պատահելու, ը՞լ, երբէք չէի գալ, ազնիւ պարոն . . . ներեցէք . . . թողէք դուրս գնամ . . . ալ ես չեմ գալ, ձեզ ի՞նչ . . . եմ ատարելը . . .  
—Լոիր. կեղտո՛տ, գծո՛ւծ մարդ, ահա, ա՛ռ քեզ,

և փայտի հարւածն իջնում է սիրահարի ճակատին, որ վա՞յ գոռալով սարսափահար դուրս է նետում։ Հազիւ — Հազ բանալով դուռը, բայց մութ նախասենեակում սատանալի պէս ինչ որ բան նկատելով վախից շրխկում է դրան առաջ։ Սակայն մարդ տաքացած ժամանակ դժոխքովն էլ կ'վազէ, թէկուզ կտրտեն էլ նրա ոտները. սիրահարը մի քանի հարւածներ էլ ետեից ուտելով, կամ դրութեան փոփոխութիւնը ցոյց տալու համար ասենք՝ սիրահարը փայտահար դառնալով, մի—գլուխ պոկ է գալիս դէպի սարերն ու ձորերը։ Խղճալի՛ մարդ . . .

Հաւատացէք, պիտի խղճալ արդպիսիներին. պէտք է ասել, որ շատ անմարդավագիւլ գործ տեսաւ Սաշալի ամուսին Պաշտն կաշալի վերաբերմամբ։

Միւս օրը տարածւում է ողջ քաղաքում, որ տիկին Սաշան իր ամուսին Պաշալին թողել՝ գնացել է հօր տունը և ապահարզան է պահանջում, որովհետեւ ամուսինը տգէտ վաճառական է, բան չէ հասկանում, մինչև անդամ իրան ծեծում է՝ որպէս տարածել էր բամբասանքով մարդ ուտող քաղաքում. իսկ իր մէջ ասում էր, որ նա բռնակալ է, որովհետեւ արդելք է լինում իր զգացմունքի ազատ արտայալտման, որ իր կամքը ոչինչ է համարում և այն չէ անում. ինչ որ ինքըն է կամենում, բայց երբէք մտքովը չէր անցցնում ընդհանրական մեղքից իրան ևս բաժին յատկացնել։ Այդ շատ վատ սովորութիւն է, մենք բոլորս էլ ատում ենք այդ սովորութեան տէր մարդկանց. ես որ զգւանքով եմ վերա-

բերում. երեխալ ժամանակ լսած արաբական հէքիաթների վիշապներից այնքան չէի վախենում, որքան վախենում եմ այդպիսիներից։ Մի ժամանակ, երբ ես զժբախտութիւն ունէի ծեմարանի աշակերտ լինելու («Եհ, ի՞նչ հետաքըրքական բան է աշակերտի կեանքը», կ'առէք դուք. բայց թո՛լ տւէք ասելու, որ նա էլ մարդ է!), ես ունէի զանազան գաւուներից հաւաքւած զանազան ձևի դասակիցներ. ալէքսանդրապօլիցիներն աչքի էին ընկնում բազմաթիւ անմիտ յատկութիւններից զատ նաև վերը լիշած յատկութեամբ. ահա թէ ի՞նչն է պատճառը, որ ես ոչ մի տեղացու այնքան չեմ ատում, ինչքան ալէքսանդրապօլիցիներին։ Թիւհ, որքան սխալներ է անում ընութիւնը. հետաքրքիր է իմանալ, թէ ինչու համար է նա աշխարհ բերել այդ թեթեսովիկ կենդանիներին։ — Թո՛ղ ամեն մի ալէքսանդրապօլիցի չկարծէ, թէ վատ է ինքը. առածն առում է՝ «Երուսաղէմ

շուն չ'կալ»։ Փլշկւելու է աշխարհն այս-  
պիսի առածներ ստեղծելու համար. գո-  
նէ մի քիչ քաղաքավարի լինէր, խօսք  
չէի ունենալ. բայց բանն այն է, որ լաւ  
ալէքսանդրապօլցիներն էլ կ'նեղանանինձ-  
նից վատ ալէքսանդրապօլցիների հետ  
միասին։ Օ՛հ, այս վատերը. ծեմարանի  
տեսուչն անգամ վախենում էր նրանցից,  
և նրանց խօսքը օրէնք էր նրա համար։  
Եթէ նրանք մեղանչէին որևէ գէպում,  
նա միշտ կ'ասէր. «Ոչինչ, թիւրի մա-  
ցութիւն է տեղի ունեցել, մի տուան-  
ձին բան չ'կալ! . . .» Ա՛խ, որքան էին  
ատում նրանք՝ մեզ՝ զարաբաղցիներիս.  
Եթէ կարելի լինէր, մեր արիւնը կ'ծծէ-  
ին և դեռ մի քիչ էլ աւելի։ Բայց թող-  
նենք, սատանան նրանց հետ։

Սաշա, չ'գիտեմ, «մնաս բարով» տ-  
սեմ, թէ «ցտեսութիւն . . .» Օ՛հ, եր-  
կուն էլ քեզ եմ ուզզում, որն ուզում  
ես՝ ընտրի՞ր. Եթէ երկրորդը վսանգաւոր  
ես համարում, համեցէք, կընդունեմ

առաջինը, այլ ևս չեմ յանդրգնիլ կեան-  
քիդ շըջանը ոտք կոխելու . . . Իսկ եթէ  
երեւիցէ երևամ կրկին, անցուշտ պիտի  
ներես, որովհետեւ այդ քո համոզմունքն  
է, թէ սխալը պէտք է ներել. գուցէ ին-  
քըդ սխալանքի մէջ ես ընկած՝ այդ պատ-  
ճառով ես ալդպէս դատում, յամենայն  
գէպս ես իրաւունք ունեմ քո առաջ ա-  
նելու այն, ինչ որ հակառակ չէ համոզ-  
մունքիդ։ Բայց գժւար թէ երեւիցէ նո-  
րից պատահենք միմիանց, այդ պատճա-  
ռով պարտքս եմ համարում օր առաջ  
խստասիրաներին խնդրել, որ ներեն քեզ,  
որովհետեւ գուտ տակաւին սխալդ ուզզե-  
լու ոլժից զուրկ չես։ Ուրեմն կեցցէ  
հաշտութիւնը և խաղաղ ապագան . . .  
Իսկ ընթերցողներիս հետ չ'գիտեմ՝ իրա-  
ւունք կունենամ հաշտւելու, թէ ոչ. կա-  
նալք շատ բարեսիրտ են, նրանք անմի-  
ջապէս կ'ներեն, գիտեմ . . . էհ, ՎՏՈՂԵ, չէ  
որ ես էլ պէտք է ժամանակս մի բանի  
վրայ գործադրեմ. մի բանաստեղծ

(ալ էք սանդը բապօլցի !) ազատ կերպով գրում է յառաջաբանի մէջ. «որովհետեւ երկար ժամանակ անդործ էի, ուստի մտածեցի բանաստեղծութիւններ գրել՝ ժամանակ անցկացնելու համար»:— Ես որ բանաստեղծութիւն չեմ գրում, կարծեմ չէք տրտնջալ, որ եթէ նոյն իսկ սպառնամ ձեզ մի երրորդ . . . դլխով: Ներեցէք, որովհետեւ ուզում եմ հաշտած բաժանւել ձեզնից :

## III.

Կրկին եմ ցանկանում դուրս գալ երագների աշխարհից և մի կարճ, շատ կարճ զքօսանք կատարել ժամանակակից կնոջ կենսական տատասկոտ ճանապարհի վրայ: Չնայած՝ որ այժմ այլ ևս տշակերտ չեմ (որի համար ամեն օր երկու ջուխտ մոմ եմ վառում, որովհետեւ նախ՝ որ գրածս ալժմ ուրախութեամբ կ'կարդաք՝ համարելով կեանքի մէջ մտած մարդու մտքի արտադրութիւն, և երկըրորդ՝ որ ազատ եմ զգում ինձ տեսչական զանազան անհամ սաստումներից:)— Այս, թէե այժմ այլ ևս աշակերտ չեմ, բայց և այնպէս ալնքան էլ հեռուն չեմ գնալ, առանց այն էլ վախենալու է. մի մահկանացու շատ էլ չպէտք է յանդգնէ հետախուզել այն արարածի կեանքը, որը կարող է շանթել իւրաքանչիւր թըշւա-

ուականի, թէպէտ ես լանդգնութիւն չեմ  
ունեցել երբէք դուրս թափելու այն բո-  
լորի գէթ չնչին մասը, որ տեսել եմ մի-  
այն իմ աննշան շաւղից։ Եւ իսկապէս,  
ասացէք խնդրեմ, ես ճշմարիտ չեմ մի-  
թէ, չէ որ խորհրդաւորը միշտ սարսա-  
փելի է. իսկ ինչն է կնոջից աւելի խոր-  
հըրդաւոր։

Անշուշտ խօսքերս կ'ընկնեն շատերի  
ձեռքը, կ'կարդան, կ'բացականչեն, ինձ  
«անկիրթ» կ'անւանեն, գլխիս քար ու  
կարկտի պէս անէծքներ կ'տեղան, չնա-  
յած որ ասածս շատ քիչ կ'լինի։ «Վայ քո  
օրին», կ'ասեն մի քանի բարեսիրտներ  
խղճալով։ — Բայց մէկի ան կ ը թու-  
թիւնը կայանում է հէնց նրանում,  
որ նա իր համոզմունքին հակառակ եղող  
ամեն մի դատաստան համարում է ցնոր-  
ւածի բարբանջում, կ ը թւած ուղե-  
ղի անտեղի զիգզագ, որ առաջանում է  
մտաւոր դատարկութեան ներկայութիւ-  
նից, համարում է մի ահագին զըրօ, մէջ

տեղն էլ մի հատ կէսարշինանոց մի-  
նուս, և անփոյթ քրքիջով կնքում ամեն  
բան. նա և՛ համբերատար է և ո՛չ համ-  
բերատար. համբերատար է, որ լուրջ  
կոփւ չէ սկսում զղիկներին ցեղակից  
կենդանիների պարագօկուալ՝ կարծիքի  
դէմ, և ո՛չ համբերատար է, որ շտապում  
է արհամարհանքով անել իր դատաս-  
տանը։ — Ինչ ուզում է լինի, ես ուզում  
եմ մօտենալ կնոջ ճանապարհին, այս էլ  
հօ լողարան չէ, որ նկատողութեան են-  
թարկեն ինձ! Մի անգամ, երբ դեռ այն-  
քան լաւ լողալ չ'գիտէի, որքան այժմ,  
ծովի վրալից վերադառնում էի լետ,  
հետս զղագութիւն պատահէց, և քիչ  
էր մնում խեղդւէի. մեր լողարանը հաս-  
նելու ամենակարճ ճանապարհը կանանց  
լողարանի առաջովն էր, ուստի վախենա-  
լով խեղդւելուց և ալդ պատճառով աշ-  
խատելով շուտ տեղ հասնել, անցաւ կա-  
նանց լողարանի առաջով։ Բայց վերջն  
անպէս տուժեցի, որ սկսեցի զղալ չը

խեղգւելուս համար: Լոզարանատէրը մի լաւ հայհովեց ինձ և նոյն իսկ սպառնաց ոստիկանատուն քաշ տալ. այդ խալտառակութիւնից ինձ ազատողը մի կին էր. շնորհակալութիւն կանանցից, որոնց ճանապարհին մօտենալ եմ ուզում: Բայց կնոջ ճանապարհին մօտենալու համար պէտք է բռնել կուպիդոնի փեշից, որպէսզի տեղ հասնես, թէ չէ շատ շուտով կ'մոլորւես անթիւ բաւելոների մէջ: Այս էլ պէտք է ասել, որ փեշի որ կողմից ուզես, չես կարող բռնել — ալսինքն կարող ես, բայց իրաւունք չ'ունես, կամ եթէ իրաւունք էլ ունենաս, կարող ես կրկին հանդիպել սիսալի: Ես բռնում եմ կուպիդոնի փեշի այն ծալըից, որ կարած է չինական թէլի տերևներից աֆրիկական կակտուսի փշերով մնցնից իննհարիւր իննատուն և ինն դար առաջ, որից եթէ մի փոքր անինայ կերպով քաշես, կտորտանքները ձեռքումդ պիտի մնան: Ուրիշ կերպ էլ չէ կարելի մօտենալ Սաշալի

պէս արարածին... Ներողութիւն, ոչ թէ Սաշալի, այլ Մանիալի, որովհետեւ ես միօրինակութիւն չեմ սիրում՝ չ'նայած որ ինքս մի օրինակ եմ: Խնդրեմ առժամանակ Մանիալին (Փու, ի՞նչ ջուդական անուն) Սաշալի տեղ ընդունէք, հետեւապէս և' Մաշալի, և այնու սկսեմ պատմութիւնս: Գուցէ կան այս անունը չ'հաւանող մարդիկ. բայց այս հօ բարեգործական ընկերութեան ժողովի նախագահի ընտրութիւն չէ, որ քւեարկել տամ. ով չի հաւանում, կարող է տեղն ուրիշ անուն դնել:

(Անմոռանալիներդ իմ վարդեր, որ այդպէս համերաշխութեամբ գրկել էք իրար բաժակիս մէջ, ովք գիտէ, եթէ դուք չլինեիք, չ'պիտի լիշեի սէրս և սրտիս խորքից մի խորիմաստ հառաջանք չ'թուցնէի. Ես խօսում եմ ալսքան ելկար ուրիշների սիրով մասին, բայց իմս մոռացութեան եմ մատնել. ինչու, միթէ միայն այն պատճառով, որ սիրտս քարա-

ցաւ, որ հոգիս մռալլով պատեց, որ ես յոգնեցի այսքան վաղ աննպատակ և թշւառ կեանքիցս, բայց փոլթ չէ, դեռ առկայծւում է մէջս յուսոյ մի վերջին կայծ, դեռ ապրել եմ ուզում թէկուզ առանց սէր, առանց բարեկամ, մենակ ու մոռացւած, երբ այդ կայծն էլ կ'հանգ-  
չէ, այն ժամանակ կ'լուէ և՝ ձայնս, բա-  
րախելուց կ'դադարէ և՛ սիրտս: Ինձ ան-  
հրաժեշտ է այժմ լալ, որ գոնէ քիչ  
հանգիստ ձեռք բերեմ, բայց ես արցունք  
չունեմ, ուստի ծիծառում եմ, որ դրա-  
նով կարողանամ մի քանի կաթիլ ստեղ-  
ծել: Եւ ահա երազում եմ այն սրբազն  
ըսպէն, երբ արցունքները յանկարծակի  
կ'հետեւն սրտիս փղձկալուն և մեղմի՞կ  
կ'հոսեն այտերիս վրալով՝ ետքից թող-  
նելով արծաթէ շերտեր... օ, այն ժա-  
մանակ ես կ'վերականգնեմ և այլս ինձ  
ամենաթշւառ էակը չեմ համարիլ այս  
օտար աշխարհում):

0-, չկարծէք թէ այս մի խոտորու-

մըն էր մեր պատմութիւնը. քաւ լիցի,  
ես այդպիսի բան անել չ'գիտեմ, իբրև  
հալ հեղինակ. մանաւանդ որ այժմ ես  
էլ կեանքի մարդ եմ, հետեապէս աւելի  
ճշտօրէն դատող, գործող, և ոչ թէ գիծ-  
նազիստ, որ ամբողջ օրը խօսում, ա-  
մեն հարցի պոչից էլ բռնում է, բայց  
վերջը լսողը գլուխը թափահարելով է  
հեռանում. ես չեմ ուզում, որ մէկը քը-  
թի տակ մռմռալ, թէ՝ «այս ինչ բան  
է, իր ցաւերն է մեզ ուտացնում:» Բայց  
ես կ'ասեմ, որ ցաւը չէ կարելի ուտացը-  
նել, և ոչ էլ նոյն իսկ խմացնել, այլ մի-  
այն պատմել. իսկ այս, ինչ որ պատմում  
եմ, մենակ իմ ցաւը չէ, այլ և քո՛, մա-  
տաղ ընթերցող կամ ընթերցողուհի. գո-  
նէ այն միսիթարութիւնը կ'ստանաք, որ  
կ'տեսնէք ձեզ նման տառապող մի ուրի-  
շին ես, կ'զգաք, որ մենակ չէք: Բայց...  
Հայդէ, ժամանակ է!)

Սարսափելի է մեր դարը... Բայց  
այն որ դար է, որ սարսափելի չէ եղած:

Գիտենք, որ ապականութիւնն ամեն տեղ  
է եղել և կալ, բայց գրա հետ չէ պա-  
կասել և՝ կռիւը, վատը միշտ ունեցել է  
իր օպազիցիան (կատարեալ կաքինետա-  
լին դարձւած): «Ամեն բան ժամանակի  
գործն է, ալս բոլորը գիտեն... միայն և  
միայն ժամանակն է, որ կարող է փո-  
փոխութիւն մտցնել հանգամանքների  
մէջ, իսկ մարդը ոչինչ է», ասում են  
խելօք մարդիկ: — Սակայն չէ որ ժամա-  
նակը մի դատարկ էութիւն չէ, չէ որ նա  
մի մասով մարդկային կեանքի «Ետևէ —  
ետևութիւնն» է (մի աստւածաբանից եմ  
սովորել չակերտներում բանտարկած բարդ  
բառը), առանց մարդուն ժամանակը  
թերի է, միայն նրա կեանքով է լրումն  
ստանում: Հետևապէս՝ «ժամանակն ըն-  
դունակ է ամեն բան տակնուվրայ անե-  
լու, եղածը հիմնայտարկ կործանելու և  
աւերակների վրայ կառուցանելու փառա-  
լեղ նոր շէնքեր» ասելը նոյնն է, թէ  
այդ բոլորի մեծ մասը կարող է կատա-

րել մարդը, որովհետև նա բնութեան  
ամենամեծ գործիքն է (կացին կամ ու-  
րագ չկարծէք): — Ուրեմն մարդ մի ա-  
ռանձին ինդիվիւդում չէ՝ լայն  
մտքով վերցրած, մի ինքնուրոյն սուբը-  
եկտ չէ (շէք, ինչ ընտրովի երո-  
պական բառեր) հեռու բնութեան օ-  
րէնքից, այլ այդ բնութեան մի մասն  
է, որ գեր է կատարում նրա և՛ ընձեռ-  
ողական, և՛ կատարողական (միայն հոգեբանութեան մէջ գործածող  
տերմիններ են որանք) բաժիններում,  
հետևապէս զուր չէ նրա մաքառումը,  
որի հետևանքը բոլորս գիտենք, և...

Նունչս կտրւեց: Քրտնեցի: Տէր Աս-  
տբւած, այս որքան հեռու գնացի ցոյց  
տալու համար, որ իմ ճիզն աւելորդ չէ  
Մանիալին ողջ աշխարհի և աւելի իր  
առաջ գնելու համար. թէե ինքը բոլո-  
րիցս էլ լաւ գիտէ իր կեանքը, բայց գու-  
ցէ չէ նկատում զրա մէջ մի անբնական  
երեսիթ, որով կարող է փլատակ անել

շատ-շատերի բախտը. գուցէ և նկատում է, բայց կարծում է թէ ուրիշներից ի-մացւած չէ, հետևապէս դեռ կարող է օգտւել ընդհանուր՝ այսպէս ասած՝ ան-տեղեկութիւնից և կեանքը շարունակել այնպէս, ինչպէս իրան հաճելի է. իսկ ուրիշները!... Էհ, եւ շերտу, ինչ ուզում է, թող լինի, մի բան՝ որ ինքը չէ տու-ժում: Եթէ Մանկալից հարցնես, թէ ինչո՞ւ ես սրան թողնում՝ դրան սիրում, դրան էլ թողնում՝ նրան սիրում, նա կ'պատասխանէ. «Եթին առաջանում է գե-ղեցկութիւնից. այսօր սիրում եմ մէկին, ո-րովհետեւ նա բոլորից գեղեցիկ է թւում ինձ, վաղը պատահում եմ մի ուրիշն, որ նրանից աւելի գեղեցիկ է. ուզեմ — չուզեմ, պէտք է թողնեմ առաջինին...» Ի՞նչ կ'ասէք սրա դէմ, պարոն Ման-տեղացցա, որ քարոզում էք առաջին և վերջին սէր. երեխ այս, թէ՝ «ամուս-նանալ միայն նրա համար, որ գեղեցիկ ամուսին ունենաս, նոյնն է՝ թէ մեծ

գին տալ մի կտոր հողի, որտեղից գի-տում են այն երկինքը, որն ամբողջ աշ-խարհին է պատկանում:» Արա՞ դէմ ինչ կ'ասէք, ընթերցողներ և լսողներ: Լը-ռե՞նք բոլորս էլ:

Մանիալի վրայ վերջին չարաբաստիկ գէպքը կարծես ոչ մի կործանիչ ազգե-ցութիւն չէ արել. նրա պատուհանի տա-կով անցնողը պատիւ կ'ունենալ միշտ տեսնելու, թէ նա ինչպէս ուրախ երգում է, նւագում և երբեմն նոյն իսկ պարում, փոքրիկ երեխաների ականջին փսփսում, թէ այս ինչը չէ իր սիրելին, այլ այն ին-չըն է, այն ինչն էլ չէ, երբորդ ինչն է, կամ տասներորդ ինչն է. նա միշտ «ին-չերով» է զբաղւած: Բայց յամենալին գէ-պըս նա չէ կարող առանց ամուսին մը-նալ, նախ՝ որ մահճակալալին կեանքի համն առել է, և երկրորդ՝ որ ջահէլ կը-նոջ ամուսին չ'ունենալը մեծ ամօթ է համարւում նրա երկրում. բայց և չի առնիլ նրան իր քաղաքացիներից ոչ ոք, որով-

Հետեւ ամբողջ քաղաքը ծանօթ է նրա  
կեանքի հետ, շատերին խրտնեցնում է  
մանաւանդ վերջին գէպքը. և ապա՝ որ  
գլխաւորն է, նա ամուսնուց օրինաւոր  
կերպով չէ բաժանւած, ապահարզան չը  
կայ մէջ տեղ, ուրեմն դեռ այրի և ա-  
զատ չէ, ուրիշի անունը կրող տիկնոջ  
վրայ ովկ կ'իշխէ տիրանալ: Բայց պէտք  
էր մի բան անել... այն, անել... այս-  
տեղ մի փոքր մտածեցէք... լաւ է,  
բայց ի՞նչ անել. չէ որ նրան ոչ ոք չէ  
կարող առնել, իսկ նա ցանկանում է կըր-  
կին ամուսնանալ անպատճառ, ինչ էլ որ  
լինի: Կրակ ու պատուհաս է՝ հաւատա-  
ցէք՝ այն մարդկանց համար, որոնք ան-  
համբերութեամբ սպասում են Մանիալի  
մի հաստատուն վիճակ ունենալուն, նրա  
գրութիւնն ու գիրքը միանգամայն որոշ-  
ւելուն: Բայց ի՞նչ, միթէ ալդչափ շու-  
տով կարելի է ամեն բան գլուխ բերել.  
նախ պէտք է գլուխ կոտրել և ապա  
գլուխ բերել մի ալդպիսի ծանրակշու-

գործ, որ եթէ քաշէք, ծանրութեան չա-  
փը չէք էլ կարող որոշել, չ'սակած որ  
Մանիալի աչքում գուցէ կէս մսխալ էլ  
չ'երևալ:

Հազար, տասը հազար ամօթ այն-  
պիսիներին, որոնք իրանց հետ կապ չ'ու-  
նեցող մի բան իրանց են վերագրում,  
ինչ էլ լինի այդ բանը... Մանիան լոյ-  
սը գեղեցկութեան վրայ գրած՝ կործում է  
թէ զգացմունքը միայն իր համար է բա-  
տեղձւել, որով պիտի պսակւի իր կեան-  
քի բոլոր շրջանը: Լաւ, ասենք թէ ի-  
րաւունք ունի այդ ասելու, բայց միթէ  
բաւական է այդ իւրաքանչիւրին կախարդ-  
ւած գրութեան մէջ պահելու համար,  
որի մէջ համոգւած է նա: Ալդպէս չա-  
րաշար կերպով են սխալում նրանք, ո-  
րոնց ուղեղը ցնորքներով է պարուրած.  
բայց չէ որ ալդպիսի ուղեղի մէջ մի օր  
վերջապէս երեան են գալիս դատարկու-  
թիւնն ու աւերը: Աստւած ոչ տնէ,  
թող չ'գալ այն օրը, երբ Մանիան հիաս-

թափութեան մէջ կը մրմնջայ. « Ներիք,  
երկի՞նք, ես սխալւած էի, բուռն կրքերի  
անմեղ զոհ եմ, բախտս ինձ խաբեց և  
միայն վերջը ցոյց տւաւ, որ դաւաճան  
է: » Զէ, Մանիան չէ ուզում, նա հա-  
մոզւած է, որ չէ կարող այդպէս պա-  
տահել. նա գեռ սպասում է, գեռ ա-  
մուսնացուներ է ընտրում, երբեմն նոյն  
խսկ այնպէս՝ հանաքով ակնարկում է ա-  
մուսնանալու մասին ընտրեալների մօտ,  
բայց տարաբախտաբար նպաստաւոր պա-  
տասխան չէ ստանում: « Օ՛հ, Տէր իմ,  
այս ի՞նչ է նշանակում, չէ որ ես իմ ա-  
զատ կամքի տէրն եմ, ինչ ուզեմ, այն  
կ'անեմ, չէ որ կապ չ'ունեմ թողած ա-  
մուսնուս հետ, ես ով, նա ով, ինչո՞ւ  
ինձ կին չեն առնում, միթէ ազատու-  
թեան մէջ էլ կապանք կալ: » Այդպէ՞ս  
է, ի՞նչ էք ասում. գուցէ կ'ասէք Մա-  
նիային՝ «զոր ինչ կարծես՝ կարծէ, զայդ  
մի կարծեր», բայց ձեր խորհուրդը կէս  
գրօշ գին չի գնալ նրա մօտ, հետևա-

պէս աւելորդ է, թող ինչ ուզում է՝ այն  
անէ. ազատութիւն, ազատութիւն տը-  
ւէք կանանց . . . Այդ է դարուս ազա-  
տութիւնը . . . Ես կարծում եմ, որ երբ  
խելքը գլխին տղամարդն ամուսնանում  
է, ամբողջից կոտորակ է դառնում, այն  
է՝ մի ամբողջ մարդը դառնում է կէս  
մարդ, որովհետեւ իրան ամբողջութեան  
մէջ պահող ազատութիւնը կէս է անում  
իր կնոջ հետ. ամենախելօք կին—մարդն  
ևս ենթարկում է նոյն վիճակին, որով-  
հետեւ ամուսնանալուց յետոյ իր բոլոր  
պակասաւոր կողմերը հանում է երեան  
(Երեան քաղաքը չ'կարծէք, որ մեծ  
եռով է գրւում). ահա թէ ինչու է Մեծ  
Մարդն ասել. «Եւ եղիցին երկոքեան ՚ի  
մարմին մի: » Բայց հետաքրքիր է իմա-  
նալ, թէ ինչի է հաւասարւում առանց  
այն էլ ամբողջից փոքր կոտորակ ներկա-  
յացնող մարդը, երբ ամուսնանում է, չէ  
որ նա դարիս պահանջի համեմատ պէտք  
է իր կնոյն ազատութիւն տայ, իսկ

այդ ազատութիւնը մեր մէջ ուրիշ տեղից չէ ձեռք բերում, այլ եղածիցն է տրում։ Յամենայն դէպս ամուսնանալը վտանգաւոր բան է, այդ լաւ են հասկանում ամուսնացածները։ Գիտեմ, որ կան մի քանի հատ ընտրեալներ, որոնք ուրիշ կերպ են գատում։ մինչև անգամ մի պարոն այս հարցն էր տալիս. «Ինչը համար ամուսնացած տղամարդիկ միշտ ասում են, թէ ինչ լաւ կ'լինէր, եթէ քիչ էլ շուտ ամուսնացած լինէին, իսկ կանաք—թէ ինչ լաւ կ'լինէր, եթէ քիչ էլ ուշ ամուսնացած լինէին»։ Բայց ես հարցնում եմ. արդեօք՝ երկուսն էլ չեն կեղծում, առաջինները՝ կանանց ինքնասիրութիւնը գրգռելու, և երկրորդներն՝ ամուսինների վրայ ճնշում գործ դնելու, իրանց թանգ ծախելու նպատակով։ Հէնց բաւական է միայն պատահել մի այնպիսի կնոջ, որին երեկոյեան ես պատահեցի. օքրանց շաղակը բատութիւնը, որ չափ ու սահման չունի, օքրանց մեծամտու-

թիւնն ու մեծախօսութիւնը, որ ինայել չ'գիտեն։ Նատ հասկանալի է, որ կնոջ համար ձեռնտու է այնպիսի ամուսին ունենալ, որին ես նոյնպէս երեկոյեան տեսայ. թոյլ տալ այն անելու, ինչ ցանկանում է կինը, յարգել և մինչև անգամ սիրել այն ցանցառ մարդուն, որ յալտնի կերպով կապեր է հաստատում իր կնոջ հետ — աշա ժամանակակից կնոջ օրինակելի ամուսինը։ Բայց դու հօ չես ցանկանալ այդ աստիճան ստորացնել քեզ, ամուրի ընթերցող. զու կ'ուզես ունենալ խելօք, հաւատարիմ, միայն և միայն քեզ սիրող, բայց և չքնաղ կին. սակայն այս բոլոր յատկութիւններով օժտւած մէկը ո՞րտեղից գտնես։ Ասենք թէ այս ինչը գեղեցիկ է, թւում է թէ և՛ համեստ, խելօք է և հաւատարիմ. բայց դուցէ այդպէս չ'գուրս եկաւ! այն ժամանակ մնում է միայն վայ տալ գլուխդ, ատել բոլոր ուժով, բայց և անկարող լինել նրանից ազատւելու. ապահարզան

ՃԵՌՔ բԵՐԵԼ չԵՍ կարող առանց յալտնի  
փաստերի, իսկ քաղաքական ամուսնու-  
թեամբ կապւելն էլ ամօթ է մեզ մօտ.  
բայց դէ այդ մահից էլ վատ է հօ! Իսկ  
եթէ կինդ մեծ օժիտ ունի, բայց ինքդ  
աղքատ ես եղած! Այ, ՅՈՒՅԵ ՏԵՇ Ա ՐՈՂԱ!  
ԶԵ, ԵՍ ԽՈՐՀՈՒՐԴ չԵմ տալիս խելօք  
մարդուն ամուսնանալու գէթ մեր եր-  
կըրի օրէնքներով. «լաւ է առն ամուս-  
նացելու՝ եթէ կախիցի երկան իշու ընդ  
պարանոց իւր և ընկղմիցի՝ ի խորս ծովու։»

Կան մարդիկ, որոնք կեանքում  
միշտ անաջողութիւնների հանդիպելով՝  
գալիս են այն համոզման, թէ իրանց  
բանը ոչ մի անգամ չէ աջողւելու երբ-  
եիցէ, և իրաւ որ չէ էլ աջողւում. կան  
և՛ ընդհակառակն՝ այնպիսիները, որոնք  
կեանքում միշտ աջողութիւններ գտնե-  
լով՝ գալիս են այն համոզման, թէ ի-  
րանց բանը ոչ մի անգամ անաջողու-  
թեան չէ հանդիպելու, և իրաւ որ այդ-  
պէս էլ լինում է։ Դրանք բախտի երես

տւած որդեգիրներն են, որոնք որչափ լի-  
մար՝ ալնչափ աւելի բախտաւոր են։ Մա-  
նիան մինչեւ այժմ այդպիսիներից է եղել,  
Աստած տալ, որ նոյնը մնայ միշտ. բը-  
նութիւնը Մանիալի պէսներին միշտ է  
լում։ Օրերից մի օրում մի օտար վա-  
ճառական է լոյս տեսնում (մամուլի տա-  
կից չ'կարծէք)։ Բայց որքան գեղեցիկ է  
փեռացուն (Ներեցէք այս խօսքն  
անժամանակ գործածելուս համար. ա-  
պագայում կ'տեսնէք, որ իրաւունք ու-  
նէի), այնքան գեղեցիկ, որ փողոցով ան-  
ցընելու ժամանակ բոլորի ուշադրութեան  
առարկան է դառնում։ — Հասակը նման  
արագիլի վզին թէ իր երկարութեամբ և  
թէ հաստութեամբ, պարանոցը կէս ար-  
շինից մի քիչ պակաս, քիթն անապելի  
երկար ու մեծ (որ կարելի է ամեն տեղ  
՚ի ցոյց հանել իբրև անտիք քթի օրի-  
նակ), գէմքը պղնձից եթէ ոչ կարմիր,  
գոնէ պղնձագոյն, աչքերը մի ընտանի  
կենդանու աչքերին ցեղակից, շրթունք-

Ներն աննման ու աննկարագրելի, իրանց սարսեցուցիչ հաստութեամբ յար և նըման և ազգակից այն կենդանու շրթունքներին, որին շատ մօտ է մարդս . . . մի խօսքով՝ մի ճաշակաւոր անձնաւորութիւն! Բայց նրան պակասում է մի բան, — ափսոն որ գանգրահեր չէ . . . Մանիալին այդ վիշտ է պատճառում, բայց ինչ արած, եթէ կարողանալ գոնէ այդ պատառը ձեռք գցել, բաւական ախորժակով պիտի վայելէ: Նա տեղեկացել է, որ վաճառականն ամուրի է, այդ պատճառով սկսել է վազօրօք պատրաստութիւն տեսնել հարսանեաց պարզ հանդիսի համար: Ի՞նչ, կարծում էք, թէ շատ բան է պակաս, որ նա չ'պատրաստւէ վազօրօք. — ի՞նչ է մնում. — մնում է միայն իմանալ, թէ արդեօք վաճառականն ամուսնանալու ցանկութիւն ունի, եթէ չ'ունի, գոնէ մտադրութիւն ունի (բայց ինչու չի ունենալ, լիսուն տարեկան է և դեռ ամուրի), և յետոյ՝ կ'համաձայն-

վի Մանիալի հետ ամուսնանալ (ինչու չէ, ի՞նչն է պակաս որ, բոլորովին ազատ կին է նա, կարելի է մինչև անգամ ասել փեսային, թէ ուղղակի Մանիալի ամուսինը մեռած է): Եւ իսկապէս, ի՞նչ էք կարծում, ինչպէս պիտի լինէր, այնպէս էլ եղաւ. միշտ այդպէս է, — մի բան, որ լինելու է, լինում է, իսկ եթէ չէ, չէ լինում. գարմանալի է! Մանիան պիտի անպատճառ ամուսնանար Վանիալի հետ և . . . ամուսնացաւ:

~~Հաւատացէք՝~~ որ տիկին Մանիան շատ ազատամիտ կին է, որպէս ազատամիտ է և՛ պարոն Վանիան. տիկինը չը ցանկացաւ գնալ Տիրոջ տաճարը, կանգնել Աստուծոյ սեղանի առաջ, այնտեղ երգւել, որ պիտի միշտ հաւատարիմ մընալ իր ամուսնուն և նրան պոզեր (եղջիւրներ) չ'պարգևէ երբեմն-երբեմն, որովհետեւ առանց երդումի էլ հաւատարիմ կ'լինի. պարոն Վանիան էլ զիջաւ նրա խնդրանքին, ասելով որ կարելի է

վերադառնալ հայրենիք, այնտեղ ազգականների ու բարեկամների ներկայութեամբ արժանանալ անթառամ պատկին:

Ես միանգամայն համոզւած եմ, որ Մանիային մի հաստատուն վիճակ ցանկացողները ցնծութեան մէջ են այժմ, և հարս ու փեսալի հետ միասին իրանք ևս տօնում են նրանց հարսանեկան հանդէսք: Քէֆս գալիս է, քէֆս, երբ տեսնում եմ, որ մէկը միւսի համար ալդքան ցաւում է, նրա վշտերին՝ վշտակից, իսկ ուրախութեան ուրախակից է լինում: Ես էլ եմ ալդպէս. քանի որ Մանիան տարտամ դրութեան մէջ՝ փեսալ էր որոնում, ես շտապեցի անմիջապէս լոյս գցել Վանիային և վերջը նոյն իսկ ամուսնացնել, այն էլ այնքան շուտ, որ հարսանիքի համար մի փլաւ անգամ չէ կարելի եփել: Ի՞նչ անեմ, ես էլ շտա համբերողներից չեմ, մանաւանդ մեծ թշնամի եմ դժբախտութեան: Ես Մանիային բախտաւորացը, Աստւած էլ ձեզ բախտաւո-

րացնէ, այ տանը մնացած օրիորդներ և ջահէլ ալրիներ:—Սսենք պառաւ ալրիներ էլ կան, որոնք էլի ամուսնանալուցանկութիւն ունեն, ես դրանց գործին չեմ խառնւում, թո՛ղ ինչ ուզում են՝ անեն. ես ջահէլ եմ, բան ու գործս էլ ջահէլների հետ է: — Ուրեմն Մանիան երջանիկ է:—

Բայց!... «ԷՇ հ, ի՞նչ բանայց...» կ'ասեն շտերն՝ իրանց ատամները կրծտացընելով.—«ամուսնացաւ պրծաւ էլի՞, էլ ի՞նչ ես ուզում, կամենում ես, որ նորից դժբախտանայ»:—Իսկի էլ չեմ կամենում ես ալդ, բայց «բայց»... Ի՞նչ արած, Աստւածանից միսիթարւէք. նա երբ է եղել բախտաւոր. և միթէ կարելի բան է իսկապէս բախտաւոր լինել. հանեցէք ալդ թիւը համոզունքը ձեր ուղեղից, չ'կայ, չ'կայ տևական երջանկութիւն, ամեն բան մի փոքրիկ բայց էլ է՝ թագցրած ունի իր մէջ, առանց ալդ բայց ի ոչինչ չէ եղել, չ'կայ և չէ լի-

նելու:— Ուզում եմ քաշքշել ձեր համբերութիւնը և մի քիչ ուշ բացատրել այդ բառը, որպէսզի մի լաւ զւարձանամ, բայց (այս այն բառը չէ) մէկ էլ մտածում եմ, թէ գիրքս կ'պատուտէք և ցասմունքի բռնկման մէջ վեր կ'թռչէք տեղներիցդ՝ ինձ հայհոյելով և ատամ զրճտացնելով: Ահա այդ բառը Մանիալի ինքնախաբէութեան օրից չէր անցել գեռ ևս մի շաբաթ, որ քաղաքում շանթի արագութեամբ լուր տարածւեց, թէ խարւած Վանիան . . . գիտէք ինչ է եղել . . . ուղղակի իս ել ագա արւել է՝ չկարողանալով տանել Մանիալի առաջին ամուսնու խայտառակ պահանջը: Իսկապէս որ շատ վատ բան է, երբ կինդ խլում են ձեռքիցդ, կամ մինչեւ իսկ ուզում են խլել: Վանիան խլեց Պաշալի ձեռքից Սաշալին (թէև անգիտակցաբար), իսկ Պաշան էլ ուզում է խլել Վանիալի ձեռքից Մանիալին: Հեռւից գիտողի համար շատ գւարճալի տե-

սարան է, համաձայն եմ, ալդպէս է և մօտիկից դիտողի համար. բայց ախր կան — ճշմարիտ — այնպիսիները; որոնց սրտերից արիւն է կաթում:

Այս գլուխը շատ փոքրիկ գուրս եկաւ, չնայած որ ուզում էի սրանով վերջ տալ, որովհետեւ կարծում էի, թէ Մանիան հաւանականաբար կ'դադարէ հետաքըրքական կեանք ունենալուց. բայց մէկ էլ մտածում, տեսնում եմ, որ վիմարութիւն է ալդպէս կարծելը, որովհետեւ ամենախաղաղ մարդու հետ նոյն իսկ յաճախ տարօրինակ երեութներ են պատահում, ուր մնաց Մանիալի, որ հէնց ինքն իր ամբողջ գոյութեամբ սովորականից դուրս մի բան է: Բացի դրանից՝ ինչու գրեչը վայր դնել այն ժամանակ, երբ նորնոր եմ մտել իմ երազած աշխարհը, երբ արդէն թողել եմ աշակերտական գաղաքարի կեանքը: Այս, գարշելի է

աշակերտական կեանքը, որովհետև գար-  
շելի է և՝ ուսուցիչների ու աշակերտնե-  
րի մեծ մասը. մանաւանդ եթէ միջոցներ  
չունես, էլ բաներդ բուրդ են. Հոգա-  
բարձուները քանիսին են դուրս անում  
նոյն իսկ ամենաբարձր դասարանից ու-  
սումնավարձը տալ չ'կարողանալու պատ-  
ճառով: Դուրս անելլ գեռ ոչինչ, ապա  
սպառնալիքները!... Դպրոցական կեան-  
քումս լիշում եմ մի քառակուսի մսա-  
գունդ, որի երկարութիւնն ու լայնու-  
թիւնը հաւասար էին, գուցէ վերջինս  
իր հաստութեան պատճառով արգելք  
հանդիսանար նրա իսկական քառակուսի  
լինելուն. նա հոգաբարձու էր, այսինքն  
դպրոցի շինութիւնը իր հոգուն էր բար-  
ձել՝ արքալութիւն տանելու նպատակով:  
Դրանից ծիծաղելի մարդ շատ դժւար էր  
գտնել, երբ լորդորում էր աղքատ աշա-  
կերտներին ուսումնավարձը բերելու:  
Կուզենալի ալդ մարդու ամբողջ պատկե-  
րը նկարել, բայց դանակ չկայ որ մա-

տիտս կտրեմ, և թուղթս էլ վերջացել  
է, ահա այս էլ որ գրեմ, կմնալ մի վեր-  
ջակէտ դնելու տեղ:

---

ԿԿ

## IV.

Քրիստոսի 1897 թւականին, կամ  
աւելի ճիշտը՝ միևնոյն Քրիստոսի 1894  
թւականին, որովհետև «սխալ էր Դիո-  
նոսիսի հաշիւը և սխալ էլ մնաց», գը-  
րում է մեր քահանաներից մինը, երբ  
ցանկանում է խօսել Դիոնեսիսի ձեռ-  
քով Քրիստոսի թւականը սահմանելու  
մասին։ Բայց ինչպէս ընդունւած է, թող  
մենք էլ այն գործածենք։ — Ուրեմն 1897  
թւականին, յունիս ամսի 30-ի և յուլիս  
ամսի 1-ի գեշերը (Հին տօմարով իհարկէ)  
զգացմունքներս գերի ընկան, նրանց  
հետ գերի ընկալ և' ես ինքս, բայց միւս  
օրը ես թօթափեցի կապանքներս, իսկ  
մուսաս չ'համաձայնւեց բաժանւել իր  
պտուղներից և ինձ հետ միասին գուրս  
պլծնել բանտից։ միայն զիջանելով խըն-

դրանքիս՝ թողեց ինձ մօտ որպէս յիշա-  
տակ իր ստերը։ Բայց իմ ստերն ինչ  
կարող էր անել, թէ մուսայիս ստերն  
ինչ անէր։ Աւելորդ չի լինի կարծեմ, եթէ  
յիշեմ, որ զգացմունքներս երկրորդ ան-  
գամն էին գերութեան մատնւում. առա-  
ջին անգամ նրանք գերւեցին մի քանի  
ժամով միայն, երբ ես ճանապարհորդում  
էի, և թուրք աւազակները վրայ թափ-  
ւեցին ու կառքից վայր գլորեցին զգաց-  
մունքիս տոպրակը՝ ոսկու տոպրակ կար-  
ծելով։ Ես փախալ գնդակի հարւածից,  
զգացմունքներս էլ մի քանի ժամից յե-  
տոյ ետեիցս հասան հետևեալ կայարա-  
նում, ուր կանգ էի առել։ Բայց այս  
այնքան էլ հետաքրքրական չէ, թէև  
կարող էի տապալւել գնդակի հարւածից,  
բայց էլի կենդանի մնացի։ Ուշադրու-  
թեան արժանի է նրանց երկրորդ գերու-  
թիւնը, որ տևեց ամբողջ 9 ամիս,  $4\frac{1}{2}$   
օր։ Թէ այդ ինչպէս եղաւ, հարկ չեմ  
համարում պատմելու երկար և ոչ էլ

Համառօտք: Միայն չէ կարելի մոռացութեան տալ այն լուրջ հանգամանքը, որ եղբ զգացմունքներս մուսայիս հետ միասին գիրկու նետւեցին, տեսայ որ առաջինները հնացել են մասամբ, մօդայից գուրս են եկել, իսկ երկրորդը խոխել է իր երեսի գոյնը: Ես գրկախառնւեցի կորած — մոլորած մուսայիս հետ և մենք լաց եղանք միասին: Այս վերականդման առաջին արցունքն էր: Այնուհետև մուսաս երկար երկար պատմեց այն տառապանքները (որոնց մասին երբէք չէր խօսում առաջ), որ տալիս է մարդը մարդուն. ես լսում էի և չէի զարմանում. զարմանալու ի՞նչ հարկ կալ, դարս տարօրինակութիւնների դար է: Նոյն իսկ Ապօլոնը խոռվել է իր ընտրեալ քրմերից և այժմ սափրիչներին է քնար ուղարկում, այն էլ ոչ թէ Պառնասի կտարից, այլ Բագրւե նաւթահորերից. այդպէս է ժամանակը. «որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի, և որ խոնար-

հեցուցանէ՝ բարձրացի» ահա թէ ինչու է շատերին տիրել յոռեաեսութեան թախծալի ոգին: Եւ իրաւ, ինչպէս կարելի է չնախանձել ամբողջ օրն ածիկով անցկացնող պարոններին, երբ նրանք օրը ցերեկով փառք են վաստակում . . . ազգային թերթերի մէջ . . . Այս ի՞նչ անեն այն վառվուն երիտարգները, որոնք իրանց ճակատագիրն են համարում ծառայել եօթը քոյրերին, այն անմեզ մեղաւորները, որոնց մէջ «խանդը, աւելնը, հուրն ու բոցը սաւառնաթե կ'սլանան»: և տեսնում են իրանց թեկերը կտրտած: Բայց որքան կրակոտ են նրանք. — աւենք սափրիչները նրանցից պակաս կրակոտ չեն, ապա որքան վտանգաւոր են նրանց ձեռքի ածլիները, որոնց մէջն է նստած. հաւանականօրէն անհեթեթ մուսան և նրա կողքին Կուպիդոնը, Էրօտը, Աստղիկը. Մաստղիկը և այլ հարիւր ու մի ծոտի-պատի բաներ:

«Ա՝ իս այդ կրիտիկոսները ախ այդ

Հրով ու սլով թուղթ մըստողները», կա-  
սէ սափրիչ-բանաստեղծը: Ասենք թէ  
իրաւունք ունի նա (բայց ոչ իմ վերա-  
բերմամբ, ես կրիտիկոս չեմ). մեր կրի-  
տիկոսները զէնք են ընտրում իրանց հա-  
մար փաստերի հետ գործ չ'ունենալը —  
այսինքն՝ ուզում եմ ասած լինել, որ մէկ  
էլ տեսար քեզ պէս մի խեղճի գրւածքը  
լաւ անւանեցին՝ առանց ցոյց տալու այդ  
լաւութիւնը, կամ վատ անւանեցին՝ ա-  
ռանց նոյն իսկ կարդալու. կամ թէ չէ  
մէկ էլ տեսար գրւածքդ շուռ ու մուռ  
տւին, մի քանի նախադասութիւն ար-  
տագրեցին, այն էլ ծուռ ու մուռ,  
թարս, գլուխը ոտների տեղ դրին,  
ոտներն էլ գլխի տեղ և, է՛յ քէֆ է,  
հա, evrica, այս ինչ գերքն անպէտք է:  
Իսկ եթէ ոտանաւոր ես գրել!.. է՛հ-  
բաւական է, էլ ոչինչ պէտք չէ մեր  
կրիտիկոսին, որ իր մէջքը ծռել է հա-  
մալսարանի շէմքում. օրը ցերեկով ա-  
փաշկարայ նա վանկեր կ'աւելացնէ, վան-

կեր կ'պակասցնէ, յետ-ը հետ կը  
շնէ, յետ և ի ց-ը՝ հետ և եց, և-ը՝  
ես, բուն-ը՝ բան, և այսպէս և այ-  
լըն, և կամսէ. «ուր է այս ոտանաւորի  
ներդաշնակութիւնը, հնչիւնականութիւ-  
նը, երաժշտականութիւնը», և այլ այս-  
պիսի մի շարք — ութիւններ, որոնց թագ-  
ցընում է իր խղճով լի գրանում: Կրի-  
տիկոսների մասին երբ մտածում եմ, ա-  
կամայ միտս է գալիս մի թերթ, որն իր  
մէկ կը թիւ կոսի մտքի արդիւնքին  
տեղ տւալ իր մէջ «նամակ խմբա-  
գլը ութեան» վերնագրով. կրիտիկա և  
նամակ! քար ու քոլ! այդ նամակ-կրի-  
տիկան ուղղւած էր անցեալ տարի հրա-  
տարակած ոչ այնքան էլ պէտքական  
գրւածքիս դէմ, որը բախտ ունեմ ինքս  
արխիւը գցած լինելու. այս, գրւածքս  
պէտք չէր, բայց այդ ինքնակոչ քննա-  
դատը ցոյց տւալ, որ ոչ թէ գրւածքս  
չէ պէտք, այլ իր կրիտիկան: — Եւ այս-  
պէս՝ «հին դարմանը քամու տալ չ'արժէ,

նոր բան ունես, այն ասա», կ' նկատէք գուք. բայց «լուսնի տակ նոր ոչինչ չըկալ»: — Լաւ, լաւ, շատ էլ մի նեղանաք, այս բոպէին ձեր հետաքրքրութեանը գոհացում կ' տամ գուցէ. դուց է եմ ասում, որովհետեւ ով գիտէ, ձեզ տւած գոհացումս գոհացում կ' լինի արդեօք. ամեն բանի մէջ քիչ էլ պէտք է սկեստիկ լինել: — Մի ուսուցիչ ունէի (իհարկէ՝ երբ դեռ աշակերտական սեղանի վրայ նստած էի), որի անունն էր . . . բայց ինչնրիդ է պէտք անունը. Այ, ենթագրենք Մարկոս կամ Կիրակոս: — Այդպէս, պարոն Մարկոսը կամ Կիրակոսը երբ կարդում էր մեր առաջ հին մատենագիրներից, պատահում էր որ չէր հասկանում տեղ — տեղ, և ահա արդարանալու (կամ աւելի ճիշտը ստելու) զէնքը պատրաստ է. «այստեղից թերթ-է ընկած», կ' պատճառաբանէր նա. բայց ես նախապէս կ' ասեմ, որ եթէ, բան է, տեղ — տեղ շուտ հասկանալի չ' լինի գրւածքս, չ' ասէք թէ՝

«թուղթ է պոկւած այստեղից», օ երբէք, ես թոյլ չեմ տալ, որ իմ գրքից «թերթ պոկւի»: — «Ե՛, բայց ինչպէս, չէ՞ որ Մաշա — Սաշա — Մանիալի մասին էր խօսքը, ապա այս ուր տարար մեզ. ինչ կապ կալ Մ. — Ս. — Մ. -ի կեանքի և քո «Զգացմունք» -ի VI մասում մինչեւ ալժմ ասածների մէջ. երեկի մէջ տեղից թերթ է ընկած:» — Յիշում եմ, որ կրօնի ուսուցիչս միշտ կ' ասէք. «Համբերութիւնը կեանք ա, բալա ջան, որ Համբերեսցէ խսպառ, նա կեցցէ!» Եւ իսկապէս, ես զարմանում եմ, թէ ինչո՞ւ մարդիկ այսքան անհամբեր են լինում. գործինակ հէնց մեր տաճկահայերը, որոնց մի ոմն Ատրպետ անւանում է տաճիկ հայեր! . . . տօ, տնաշշէններ, քիչ էլ սպանուեցէք և ապա հանգիստ պահանջեցէք է. ախր ինչ է հինգ վեց հարիւր տարին, այդքան հօ եւրոպացին էլ է համբերում, իսկ գուք հաստագլուխ ափացներ էք էլի, ինչ էք որ: Ճա-ը,

თაკია დაბლა; აռისტე ირ არისტ է, բաნ-  
თხ მცგ ნა է ლ է կეანք ქარისმ, ձեզ  
წნუ է ხელ, կապիկნერე მხეտ აერთოւმ  
ხნ հარაւაլիნ կրაկի მცგ, և չენ է ლ  
ადგთოւმ მცკ հիსხიս ღნკნელ. բա հիსხ-  
սაյნ սպეციალი არგერები խაբარ չისნეք,  
ირ ამაռ—ამხო პატინე ირ საორეგი მცგ  
ხნ թაւალისმ :

Ախր არისტე, არგն იւ կապիկը  
գրւაծքիս მცგ წნუ գոრծ იւნხիნ է, ես  
չ' գիտեմ: Այս բոլորն ասելու գո՞ւ აռիթ  
եղար, սափրի՞չ—բանաստեղծ, հայ թեր-  
թի անգուգական պարծանք, ուր քեզ  
խայտառակութեան սիւների վրայով բար-  
ձերացրին յաւէրժ փառաց տաճարը, մի  
քի է լ դէնը. ուրեմն ღնդունիր արցերի  
և սրանց նման չորքոտაնիների grand  
merci-ն, և հրճւիր, არგերը բարեում  
ხն քեզ: Դու քո մուսայիդ պոչն ես,  
არցերն է լ քո՞ պո... ախ, ուզում է ի ա-  
սել, թէ՝ մուսադ քո՞ պոչն է, իսկ ար-  
ցերը մուսայիդ. ահ, երանի քեզ, որ

այգքան երկարութիւն ունես, մի ամբողջ  
ընտանիք էլի:

دنيا بر اچخ پنجراء

هر گلن باخار کیدار

(Աշխարհը մի բաց լուսամուտ է,  
Ամեն եկող կ' նայի. կ' գնայ),  
ասում է թերքական երգը: Եւ՝ եթէ այդ-  
պէս է, մարդիկ պէտք է იր լաւ աչքեր  
ունենան և ոչ թէ ինձ պէս, որպէսզի  
բաց լուսամուտով լաւ տեսնեն մուլթ  
սենեակում թագնւած շատ բաներ: Կան  
մարդիկ, որոնք այդ սենեակի ներսը գե-  
տելով՝ հեռանում են արցունքն աչքերին  
(ինչ աւելորդ փափկասրտութիւն). Կան  
մարդիկ, որոնք եղած—չ' եղած մէկ հա-  
շիւ են համարում, որովհետև ամեն ինչ  
սովորական է թւում նրանց. Կան մարդիկ,  
որոնք ապշութիւնից կորցնում են իրանց.  
Կան մարդիկ, որոնք գլուխները շարժե-  
լով են հեռանում, ասելով թէ՝ « ինչ  
կար որ այնտեղ, մենք գոնէ ոչինչ չ' տե-  
սանք». Կան մարդիկ ես, որոնք արսզի

պէս ծիծաղել գիտեն միայն. — Ես այդ-  
պիսիներից եմ: Բայց ոչ միայն ինքս եմ  
ուզում ծիծաղել, այլ և կամենում եմ,  
որ լացողներն էլ ծիծաղեն. բայց հօ ին-  
քըս պարտաւոր չեմ ծիծաղ պատճառե-  
լու, ես իմ եղբօր հետ միասին կ'գնամ  
իմ ճամբան բայց լուսամուտի առաջով  
և ինչ որ կ'նկատեմ հիւանդ աչքերովս,  
բոլորը քեզ կ'տամ, տառապոլ հոգի: Օ՞ն  
ուրեմն, առաջ, մոռանանք արջն ու  
սափրիչը, մուսան ու ոսկէ գրիչը, մեր  
գրիչը փուշն է, իսկ մուսան՝ մարդը:

Մանիա... Մանիա ասեմ, որ ինչ  
գտանայ, Մանիա չէ, այլ գ ա ր գ ու-  
ր ա լ տ ի: Զէ կարելի, որ կրկնակի մկրը-  
տութիւն կատարենք! ալսինքն, թէն ես  
քահանայ չեմ, և մեր ազգումն էլ քա-  
հանալ չէ եղել, բայց թո՛լ տւէք ինձ  
Մանիալին նորից մկրտել և անւանել  
այս անգամ... այս անգամ... ը՛ը...  
ինչ... Դէ ինչ որ կ'լինի, կ'լինի էլի.  
թէկուզ հէնց... Բայց... էհ, թող լի-

նի... ահա ձեզ մի քանի անուններ կը-  
տամ, որն ուզում էք, ընտրեցէք. Եւա,  
Կեկէլ, Գրէտիսէն, Զօնջոլի, Մօնջոլի, Զոյ-  
րա (այսինքն օքյ) — գիտէք, այս իմ թու-  
րութիւնս է, որ աշխատում եմ ցոյց տալ  
ամենքին, թէ տեսէք, տեսէք, ես թուրքե-  
րէն գիտեմ, որպէս անում է մի ազգային  
թերթի համրաւասր ֆելիքտօնիստ Մը-  
րէշը լատիներէն տառերով մեծ տպաւո-  
թիւն գործելով. թէ ե---ասենք ընդունւած  
հին գարձւածով — փորումը լատիներէնի  
շեքիլթու (կտոր) չկալ, ով չգիտէ լատինե-  
րէն o tempora, o mores! կամ... կամ...  
ըը... նայեմ բառարանին... պատրաստ  
է, մէկի տեղ երկուսը — կամ' զաօսque  
tendem և se non é vero, trovato...  
բայց ինչպէս թէ trovato, այս բառից  
ինչ որ իտալական հոստ է փչում... ախ,  
բառարանում նշանակւած է, որ այս գարձ-  
ւածն իտալերէն է և նշանակում է „թէն  
ճշմարտութիւն չէ, բայց... է՛հ, բառա-  
րանըն ռամերէն է կազմած և այսպէս է

մեկնած լիշեալ նախադասութիւնը-если  
и неправда, но ловко выдумано.—  
Ուրեմն լրացնեմ իմ խոստացած լատինե-  
րէն դարձւածների երկու թիւը—Jiat  
justitia et pereat mundus:).

Ալսքան երկար փագագծալին նա-  
նախադասութեան համար չգիտեմ պա-  
րոն Մըրիչն է մեղաւոր, թէ իմ որոյ  
անունը. լամենայն դէպս ոչ ես, ոչ ես:  
Հա, ուրեմն ձեզ մի քանի անուններ ես  
տամ, որ ընտրութիւնը կանօնաւոր լինի.  
Զոհրա, Մօնջօլի, Զօնջօլի, Գրէտիսէն,  
Կեկէլ... բայց այս հօ ասել եմ. սենեա-  
կիս օդը շատ վատ է, որովհետեւ հա-  
րեանս ջուդ է, այդ պատճառով գլուխս  
խառնւել է, ներեցէք, որպէս պարտա-  
ւոր էք ներելու: Մի վերակացու ունէինք,  
որ միշտ կ'կըկնէր. „Եթէ ինձ այնքան  
կոպէկ տալին, որքան մի օրում „ներե-  
ցէք“ են ասում Պարիզում, ես միլիօներ  
կ'դառնալի:“ Զինի թէ իմ „ներեցէք“—  
ների համար ես նոյն բանն ասէք. բայց

ես յանցաւոր եմ գտնում ինձ ձեր համ-  
բերութիւնը չարաչար գործատրելուս  
համար, իսկ Փրանսիացիք ներելու ոչինչ  
չունենալով են „ներեցէք“ ասում, այն-  
պէս որ պարոն, կամ տիկին, կամ օրի-  
որդ ընթերցող, եթէ գուք մի օր պա-  
տահամբ Պարիզ չէ Փրանսիայի սահ-  
մանը ընկնէք, ստիպւած կլինէք մի  
քանի ժամում մի քանի տասնեակ „նե-  
րեցէք“—ներեցէք լսելու, և որպէսզի  
տեղիք տւած չլինէք զուը տեղից „նե-  
րեցէք“ ասելու, բախտ կունենաք մի  
քիչ անախորժութիւն տանելու. այսինքն  
այնտեղ՝ Փրանսիայում չարագործութիւնն  
է հետեւում ներողութեանը, և ոչ թէ  
ներողութիւնը չարագործութեան, կամ  
թէ չէ Փրանսիացիները „ներողութիւն“  
ասելով՝ ձեզ հրաւիրում են ազատ կեր-  
պով վիրաւորանքներ կրելու իրանցից և  
չվիրաւորւելու, այլապէս չէ կարելի հաս-  
կանալ նրանց միլիօնաւոր անտեղի „նե-  
րեցէք“—ները:

, ,Ա.՝ քեզ սովեստութեան կլասիք օրինակ.՝ կասեն շատերը. — „Եղբայր, բան ունես, ասմա, . քնչ ես խաղացնում մեզ: “ Նատերն էլ գիրքս կշպրտեն օդի մէջ և չեն կարգալ. բայց համեցէք, ուզում էք Մանեալի մասին, իմանալ, ես ձեզ կ'պատմեմ. բայց մի հարց մնաց գեռ չլուծւած. այդ էլ՝ ձեզ կրկնակի նեղութիւն տւած չլինելու համար ինքս կ'ըլուծեմ. թող Մանեան կոչւի Կատեա. շնորհակալ չէք լնտրութեանս համար: Մեր թերթերից մէկում մի գերասանի մասին գրել էին, թէ նա իր խօսքերն արտասանելուց յետոյ բեմի վրայ իրան այնպիսի մի գիրք է տալիս, որ կարծես ասում լինի, . . շնորհակալ չէք խաղիս համար: “ Համարեա նոյն բանն ասում եմ ես, որովհետեւ ինքս էլ գերասան եմ, իսկ իմ պիեսան է կեանքը: , ,Առաջ ընթանանք ձեռք ձեռքի տւած: “

Մաշա—Մաշա—Մանեա—Կատեալի, կամ որպէսզի այսքան երկար անունը

կամ աւելի ճիշտը՝ անուննեզի երկայն շարքը կրկնելու դժբախտութիւնը չունենանք, Կատեա կամենք ուզզակի. — Թէ՛, ասում են, թէ նիւթից հեռանում եմ. ախր ինչպէս չ'հեռանամ, ուզզակի բառը շատ բան է միտս գցում. . . Ճանապարհ գնալը մէծ փորձանք է. ինչ որ տեսնես, չես կարող չ'հետաքրքրւել կամ ինչպէս ասում էր մի ասաւծաբան, հետաքրքրւել բառը սիալ ենք գործածում, այս գէպքում պէտք է լինի շահ գրգռւել — խոստափանիմ և հաւատամ: Բայց աւելի լաւ է ուզզակի — ն թողնենք մի կողմ, ուրիշ անգամ կըխօսենք սրամասին, այժմ գառնանք գէպի Կատեան: Թէև Մանեալի անունը Կատեա կնքեցի նոյնահանգանելու նպատակով, բայց տեսնում եմ, որ նպատակիս չեմ հասել անեա և ատեա ավելաւորութիւններն այնքան էլ չեն բռնում իրար. բայց ինչ արած, մէկ էլ փոխել չեմ կարող, , , էլ հեծնելը

մէկ ամօթ, իջնելն էլ երկու ամօթ.“  
միւս անգամ կաշխատեմ աւելի զգոյշ  
լինել, թէ գուցէ չ'աջողվի, որովհետեւ  
դրա համար „քիչ մ'ալ բանաստեղծ“  
պէտք է լինել: Ասելու բան շատ կայ,  
բայց լետոն, լետոն. այսօր առաջ, միշտ  
առաջ, դարս առաջադիմութեան դար է,  
ես օբսկուրանտների հետ գործ չունեմ,  
որպէս մեր քաղաքացիական իրաւունք  
ստացած մի թերթի բազմաթիւ խմբա-  
գիրները, որոնց եթէ միասին գումարես,  
մի ութերորդական խմբագիր չի ստաց-  
ւիլ գումարում:

Կա՛տեա, ուշեմն նոր փեսադ էլ մե-  
ռաւ. ով կարող է քեզ չարագործ անւա-  
նել, մարդիկ ափաշկարար գողութիւն են  
անում (միթէ ափաշկարար գողութիւն  
անել չէ կարելի) և էլի պաշտպաններ  
են գտնում, քեզ ինչ է եկել, որ խիզճդ  
տանջի է. մարդ է, մեռաւ, մեռաւ էլի,  
խօմ միշտ չէր ապրելու, վերջապէս մի  
օր պէտք է մեռնէր, շատ թէ ուշ, այդ

միւնոյնն է, առանց այն էլ աշխարհում  
ոչինչ մխիթարական բան չ'կայ: „Ապա  
ես քիչ մխիթարութիւն էի նրա համար,“  
կասես գու: Լաւ, թող այդպէս լինի.  
բայց հօ նա քո մխիթարութիւնը չէր.  
քո մխիթարութիւնը ամբողջ աշխարհն է,  
ինչ անենք, թէ քո մխիթարութիւնից  
մի աննշան կտօր հողի հետ հաւասար-  
ւեց, աշագին երկրագունդը հօ մնում  
է դեռ ողջ առողջ, միթէ քիչ կան ան-  
տէր մարդիկ:

Ո՞վ է մեղաւոր, Կատեմն, թէ բզ-  
գացմունքը: Պատասխանը տես վեր-  
ջում... Իմ „վերջումը“ Փաւստոս Բիւ-  
զանդի „ստորոտ ամենայն պատմու-  
թեանց“—ը չ'դառնայ! Մի խօսք ես.  
գուցէ ընթերցողներից շատերը լաւ նըկա-  
տել են, որ իմ նախընթաց և լետընթաց  
խօսքերի կապը կտրած է, կամ աւելի  
խիստ կապ չ'կայ մինչև անգամ. ես ու-  
զում էի մի թոկ կապել մէջ տեղից,  
բայց մէկ էլ վախեցալ, թէ երկար թւալ

ձեզ այն ճանապարհը, որովանցնելով  
պիտի հանդիպէք Կատեալին։ Խսկ որով-  
չեաւ այժմ Կատեալի մօտ էք, ես կար-  
ծում եմ, որ ժամանակ է յետ դառնալ  
ինձ և երկու անկապներ իրար հետ կա-  
պել։ Թէ ես մեղատրում էի միայն սափ-  
րիչին երկարաբանելու համար, բայց  
ոչ ոք մեղատր չէ, բացի... ոչ ոքից.  
ականջիդ ասեմ, որ մուսայիս չեմ ու-  
զում մեղագրել։ Բանը նրանում է, որ  
ես Կատեալի մասին գրելու վազուց էի  
մտագիր. բայց գերւած մուսայիս սուգն  
էի պահում. այժմ սուգ պատճառողը  
լարութիւն է առել և ինձ հարկադրում  
է կրկին գրիչ ձեռք տոնել։ Մի ուրիշ  
հանգամանք ևս կայ, որ ոչ պակաս քան  
ըւառական մուսաս՝ ինձ օդնում է գրիչս  
շուտ—շուտ շարժելու, դուք կ'մտածէք  
երեւի, թէ այս մարդու Ֆիզիքական ուժը  
շատացել է, որ գրիչն աւելի արագ է  
շարժում։— Խսկի էլ չէ, դուք չ'գուշա-  
կեցիք. ես կ'բացատրեմ ահա, ես միշտ

պատրաստ եմ։— Ա, չա թէ ինչու. այդ  
նրանից է, որ սիրում էի ես մի կնոջ,  
խսկ այժմ ոչ այդ կնոջն եմ սիրում, ոչ  
էլ մի ուրիշ կնոջ. այնպէս է, թէ ոչ.  
այժմ իրաւունք չունեմ միթէ գրիչս  
այնպէս շարժելու, որպէս իմ քէֆն է  
տալիս։ „Որ ունեցի ականջս լսելոյ՝ լու-  
իցէ!“ Սէր, սէր. օօօ սէր! Ի՞նչ ես դու,  
ես չ'գիտեմ, բայց մէկը պատասխանում  
է իր “L'amour qu'est ce quça“ հարցին  
„Любовь--это въчная борьба, потому  
она и носить название непобѣдимой：“ Չ'գիտեմ, թէ առաջին նախագա-  
սութիւնը որքան ճիշտ է, բայց երկրորդը  
հիմնովին սխալ է։ Նախ և առաջ՝ սէրն  
„անյաղթելի“ անունը երբէք չէ կրել  
իր վրալ, և եթէ կրած էլ լինի նոյն  
խսկ, այդ գեռ չի նշանակիլ, թէ իրա-  
ւունք է ունեցել կրելու։ Ապացուցանց  
ապացուցի իրուկը չիօսելուց վատ է—  
ապացուց. հէնց մէկը ես. կամեցաւ չը  
սիրել և ալ ևս չեմ սիրում ուղղակի...

կրկին ուղղակի! բայց թողնենք: „Այդ  
սէր չէ եղել.“ ասում են մի քանի թըթ-  
ւած կանալք ու նոյնքան թթւած տղղա-  
մարդիկ. — „սէրը յաւիտենական է ամեն  
մի դէպքում:“ Միթէ!!! չեմ հաւատում  
ձեր ասածին, որովհետեւ գուք ինքներդ  
իսկի չէք էլ սիրել, որովհետեւ սիրել չէք  
կարող, թթւած մարդիկ: Այն, ես սիրել  
եմ աւելի մեծ ուժով, քան կարող են  
երեակալել ձեր բոլորի ուղեղները միա-  
տեղ, բայց այժմ չեմ սիրում, երկար  
տանջանքով ես մեռցի իմ մէջ այդ սէ-  
րը: „Չեմ սիրում“ ասելով՝ ուզում եմ  
ասած և հասկացրած լինել (իհարկէ ա-  
սելով կարելի է ասել և հասկացնել,  
թէև աշխարհիս վրայ այդ օրէնքի բա-  
ցառութիւնն աւելի մեծ ծաւալ ունի,  
քան ինքը օրէնքը), որ կանանց չեմ սի-  
րում. թէ չէ շատ եմ սիրում գօրօրինակ  
պարունակութիւնն է մեր լեզուն (բայց ո՞ր լե-  
զուն է տանելի): Երկու խօսք ասացիր,

երկու հարիւր տեսակ կ'մեկնեն. ինչո՞ւ  
չպէտք է տիկիններին էլ սիրեմ. բայց  
ես այն մտքով չ'ասացի, ինչ որ կըհաս-  
կանան շատերը. կանանց չեմ սիրում,  
բայց... մնացածը հասկանալի է. այ-  
սինքն չեմ սիրում նրանց սիրել. ուր ես,  
Պլատոն, գու միան կհասկանալիր ինձ:  
Հաշտում եմ խողված ընթեցողնե-  
րիս հետ և կրկին եմ դառնում դէպի  
Կատեան: Ի՞նչ սարսափելի անուն! ին-  
չու այսքան նման է մի ընտանի կեն-  
դանու անւան. ախր ուզում էի Մահիկ  
դնել է, բայց մէկ էլ վախեցալ, որ կա-  
րող էք մտածել, թէ աշխարհը նման է  
լուսանկարչական գործիքի կամ խեղկա-  
տակ ապակու, որ ամեն բան թարս ու է  
ցոյց տալիս, ուստի և այդ պատճառով  
—իկ պատկացնող մասնիկի վրայ պէտք է  
խոշորացոյցով նայել: Արդարեւ Կատեան  
(կամ երեակալական Մահիկը) բաւական  
մարդկանց գլուխ է կերել (եփել և ու-  
տել չհասկանաք, այս մի առանձին ոճ

է, որ նշանակում ի՞ն սպանել), բայց և  
այնպէս ինքը չէ եղել մեղաւոր, այլ  
պարոն—զգիտեմ՝ գուցէ տիկին կամ օրի-  
որդ—զգացմունքը։ Եթէ այս բառը  
թարգմանենք՝ ուսերէն страсть, այն  
ժամանակ պէտք է տալ նրան ГОСПОЖА  
ածականը, իսկ նթէ թարգմանենք ցւ-  
ցեած, այն ժամանակ „զգացմունքը“ ոչ  
տպահարդ է, ոչ էլ կնամարդ, այլ եր-  
կուսի մետամօրֆօզան։ Ինչ և իցէ։  
Կատեան առանց ամուսին ապրելու ոյժ  
չունի, որ և երբէք չէ ունեցած այն  
օրից, երբ տռաջին անդամ քահանան  
առաց յատկապէս նրան. „աճեցէք և  
բազմացարուք և լցէք զերկիք“... ամե-  
նայն յիմարութեամբ, քանզի ժամանակ  
բազմանալոց և բազմացուցանելով եհաս  
ի վերուստ։ Ամուսին տւէք Կատեալին,  
խնդրում, ազացում է նա յանուն մար-  
դասիրաւթեան։ „Աշխարհը մեծ, մար-  
դիկ էլ շատ, թե՞ղ գնայ և իր նման մե-  
կին ծարէ,“ ասում էք դուք։ Եւ չէք

սխալում ալդպիսի նպատակալարմար  
խորհուրդ տալով։ Իրաւ որ աշխարհը  
շատ մեծ է։ Կատեան ճանալարհ է  
ընկնում արտաստչման. . . այսինքն ոչ,  
ոչ, ալդ լետոյ է լինելու, ես շփոթեցի,  
ոչ թէ արտասահման, այլ հարեանի  
տունը։

„Ի՞նչ հողը տամ գլխիս“—ասում է  
նա Հարեանի կնոջ՝ իր երգեալ խոստո-  
վանամօրը, որի լսած խոստովանքն  
շուտ է հասնում դուրսը, քան երկն-  
քի որոտոցը մարդուն. . . (ի՞նչ անճոռնի  
համեմատութիւն արի!)—„Ապա այս տա-  
նելու բան է, տպա Ասուտծ վեր կառ-  
սի, որ ալսքան տգեղներն ամուսնանան,  
իսկ ես գուրկ մնամ! Զէ, երեկ Աս-  
տըւտծ ճակատիս ալս է զրել։“

—Խորհուրդ կտամ գնալ մի զիւզ  
և այնտեղ ամուսնանալ մի զիւզացու  
հետ. կոպիտ զիւզացին ինչ կ'հասկանայ  
օրիորդ ես, թէ տիկին. իսկ անտեղի  
քահանաներին հօ դժւար չէ մի քանի

ոռւբլով խելքից հանելլը, որ առանց  
հրամանի պսակեն ձեզ,—խորհուրդ է  
տալիս հարևանուհին:

—Իերանովդ կոպիտ ես ասում գիւ-  
ղացուն, և խորհուրդ տեսնում, որ նրա  
հետ պսակւեմ. ծաղրում ես ինձ, ինչ  
է. լուած բան է, որ ինձ պէս մի հա-  
րուստի աղջիկը, որ ուսանողների երե-  
սին չի նայում, ամուսնանալ գիւղա-  
ցու հետ:

—Ե՛, լաւ, մի տաքանար, ես, շատ  
պարզ է, որ հանաք արի. իմ խորհուրդու  
է հեռանալ այստեղից որևէ քաղաք. իսկ  
այստեղ բանդ վաղուց է պլծել:

—Այդ ես էլ էի մտածում. երկու  
չարեաց փոքրագոյնն է ընտրելի. գեղե-  
ցիկ, շատ գեղեցիկ, այսպէս կանեմ, գեղե-  
ցիկ, գեղեցիկ, հա, հա, հա. . .  
Մնան բարով, ասաց նա այն ծիծաղով,  
որ մարդուս վրան սարսուռ է աղդում,  
ամբողջ հոգին տակն ու վրայ անում:

Այդ կատեալի վերջին ,մնաս բա-

րով—ն էր հարևանուհուն. նա միւս  
օրը ճանապարհի վրայ էր: Բարի ճանա-  
պարհ, թշւառ կին, ոչոք քեզ համար  
արցունք չթափեց, ծնողներդ անգամ  
ուրախ էին, որ ազատ ես թողնում նը-  
րանց շլինքը, ոչոք քեզ մի քաղցր  
խօսք չուղղեց վերջին հրաժեշտի ժա-  
մանակ, բայց իմ սիրտը քարից չէ ձուլ-  
ւած, նա ցաւում է քեզնից հեռու քեզ  
համար. չէ որ գու իմ քորն ես, իսկ ես  
քո եղբայրը, չէ որ բոլոր մարդիկ քոյլ  
ու եղբայր են. գազան եղբայրներ, ան-  
միտ, մոլորած քոյլեր. . .

Տօ, մելանխոլիալի մէջ չընկնենք  
լանկարծ! այդ ախտը՝ գիտէք, համարեա  
թէ ընդհանրացած է մեր մէջ, ծնւում  
ենք թէ չէ, հոգով հիւանդանում ենք,  
ուշացած ծաղկի պէս գեռ երիտասարդու-  
թիւն չտեսած՝ ծերանում: Առանց այն  
էլ այնքան կարծ է կեանքը, որ իմ կար-  
ծիքով ծերերն էլ պէտք է երիտասար-  
դութիւն անեն, ուր մնաց թէ երիտա-

սարդներն անժամանակ ծերանան. Երևա-  
կալեցէք մի բոպէ, որ աչա արդէն մեռ-  
նում էք. . . մեռաք. . . ձեզ տրին գա-  
գագում. . . եկեղեցում. . . ապա գերեզմա-  
նում և հոգ ածեցին ձեր գըլխին. . . է՛շ, քէֆ  
արէք, քէֆ անենք, ինչպէս թէ ծերա-  
նալ. . . փթռոկ հօ չենք ուսում: Թէ չէ  
մտածել, որ պէտք է մեռնենք մի օր,  
այդ պատճառով չծիծաղենք. . . Դրան  
զարաբաղցին ասում է. . . Համ թղամա-  
րէն հոթննքան ընդէ, Համ Տնդալ ժը-  
մը Հացան: “Ուրեմն մենք ծիծաղենք. . .  
ապա ի՞նչ անեն նրանք, որոնք մոռացել  
են ծիծաղելու ձևը. . . չէ որ մենք  
տէսնում ենք, որ նրանք այլ ես չեն  
իմանում ծիծաղել, և միւնոյն ժամանակ  
չէ որ „բոլոր մարդիկ եղբայրներ են“ . . .  
Հա, Հա, Հա, եղբայրներ, եղբայրներ. . .  
ինչպէս չէ, եղբայրներ! այդպիսի Հա-  
լալ—ծգեր եղբօրց հոգուն մեռնեմ . . .  
շունն ու կատուն, գառն ու գալլ!  
Կեցցենք:

Մի ուսուցիչ ունէի... (Հնեղանաք,  
որ ուսուցիչներից եմ բռնում խօսքս, չէ  
որ նրանք են եղած մեր դաստիարակ-  
ները, մենք դաստիարակ—ծնող չու-  
նենք:) Սատանան գիտէ, թէ որտեղայի  
էր այդ իմ ուսուցիչը. Աս փոխ էր առել  
զարաբաղցուց ճկութիւն, զոկից անշա-  
հասիրութիւն, երեանցուց անոյշ խօս-  
քերով լիքը տոպրակ, թիվլիզեցուց Հա-  
մեստութիւն, ալէ բսանդրապօլցուց. . .  
թիւշ, չեմ ուզում, որ աշխարհիս ամե-  
նաանտիտան մարդն անգամ դրանցից  
որևէ բան փոխ առած լինի, մանաւանդ  
ախալքալքացիներից.—շամախեցուց միա-  
մտութիւն, պարսկահայից մաքրութիւն  
և տաճկահայից խօսելու լակոնական ոճ,  
մանաւանդ այս վերջին խատկութիւնը  
նրա ամենամեծ արժանաւորութիւնն էր,  
ալնպէս որ երբ խօսել սկսէր, պէտք է  
վերջապէս ինքդ ներողութիւն խնդրէիր,  
ասելով թէ „շատապ գործ ունեմ“, և  
չեռանալի թթու տրամադրութեան մէջ:

Ժպտով։ Ալո՛, ժպիտներն էլ որոշ դասակար-  
գութիւն ունեն։ Այդ պարոնը, որի մասին  
բախտ ունեմ ասելու, որ նա առաջ կամաւոր  
զինւոր էր եղած, ապա իւնկերս կան դպրոցի  
սան, ապա վռնդւած և քաղաքի համար  
ձրի երկրաչափ դարձած, ապա գրագիր, ապա  
ակցիզային ցածր պաշտօնեայ, ապա մաքսա-  
տան ստորին ծառայող, ապա կրկին բարե-  
գործ երկրաչափ և ապա չ'գիտեմ՝ էլ ինչ, ո-  
րից յոգնել էր և կամենում էր այնուհետեւ  
էլ ամուսնութեան պաշտօն վարել, ունէր  
մանր պաշտօնեաներին օտար մի գերով  
փոր, հաստ վիզ, կամ աւելի քաղաքա-  
վարի ասենք՝ պարսնոց, այնպէս որ կա-  
րելի էր ասել նոյն իսկ, թէ նա իսկապէս  
վիզ չունէր, ապա զլուխն ուզզակի դուրս  
էր եկած ուսերից, ունէր նա և՛ երկու  
հատ կարճիկ ձեռներ, երկու ծնոտ՝ այն-  
պէս՝ մաքուր մազերից, որպէս Մասիսի  
գագաթը փոշուց (ախ՛, ներեցէք՝ ինձ  
անշնորհչք համեմատութիւններիս հա-  
մար), նա ունէր և՛ երկու ոտներ, ամէն մէկը

ընկուգենու մի կոճղ, մսի մէջ կորած եր-  
կու ականջների հետ ունէր և միայն մի  
քիթ երկու արշին տարածութեամբ ... „Զէ՛  
մին չէ՛:“ Իրաւունք ունէք, երկու վեր-  
շոկ պիտի ասէի. այդ չտիտագանցութիւնն  
անելու պատճառ եղաւ մի օրիորդ, որին  
երբ նկատում էի հեռուից, ամենից առաջ քի-  
թըն էի տեսնում, և ակամալից բերանիցս  
դուրս էր թուչում հետևեալ բացական-  
չութիւնը. „Թօ՛, հօ՛, հա՛. ալ քեզ զոփի  
քիթ, որը պէտք է ցուցահանդէս հա-  
նել իբրև ութերորդ հրաշալիք!“ Մի խօս-  
քով այդ պարոնն ունէր մէկ “արջիթո-  
նիլ“ անունը կրող բերանի հետ և՛ երկու  
ճարպալից աչքեր, որոնք այնքան փոքր  
էին, որ հազիւթէ երեսային քնած ժա-  
մանակ. նա ունէր և՛... Բայց շատ բան  
ունէր նա, հօ չէ կարելի բոլորը մէկ-  
մէկ թւել: Ուզում էի ասել, թէ այդ  
մարդասէր պարոնը... ալո՛, իսկապէս որ  
նա մարդասէր էր, կամ ինչպէս եւրո-  
պացիներն են ասում՝ Փիլանտրօու. այ-

քեզ բառ, որի առաջին երկու վանկը մասնաւոր փոփոխութեամբ մեր սիրելի կենդանու արդ ու զարդն է կազմում: Այս, նա մարդասէր էր, երբ կամաւոր զինւոր դարձաւ, հայրենիքը կարօտ էր նրա օգնութեան. մարդասէր էր, երբ քաղաքի համար ձրիապէս երկրաչափութիւն էր անում, կամ ինչպէս ասում են՝ բայց ուրծեալեմ ու ուրածական կոմիսիա, պակաս մարդասէր չէր նաև իր ստորին ծառայութիւնների ժամանակ, որովհետեւ ապրուստի միջոց հայթհայթելով իր համար՝ նա իրան ապրեցնում էր յօդուտ մարդկութեան բազմանալուն: Եւ եթէ կատեան իմանար այդ բոլորը, անշուշտ նրա գիրկը կ'նետւէր, որովհետեւ. առաքինութիւնը քչով է զանազանում գեղեցկութիւնից: Բայց այդ միենոյնն է, նա բնակութիւն է հաստատել համարեալ կատեալի մօտ, նրա հարեանն է, և լուսամուտներից չեն հեռանում երկուսն էլ: Կատեան կամենալով իր վարկը բարձր պահել, մի կողմից

էլ հպարտութիւնից դրդւած, երբեմն ամբողջ օրերով չէր նախում լուսամուտով. բայց որքան՝ էր տիրում նա, երբ նոյն բանը նկատում էր և իր հարեանի կողմից: Վերջապէս կոյր բախտի բերմամբ նրանք ծանօթացան, և կատեան Միտեալին մի օր հրաւիրեց իր տունը խօսելու, Միտեան քաղաքավարութեամբ ընդունեց հըրաւէրը: Կօմեգեան սկսւած է, վարագոյրը բացւած, և բեմը գերասաններին է սպառում:

Երեկոյեան թէլի ժամանակ Միտեան կատեալին.

— Ի՞նչ նպատակով էք ալստեղ եկել, մամզել էկաթերին:

կատեան Միտեալին.

— Մտագիր եմ արտասահման գընալու, գիտէք, ես մի փոքր ազատ եմ կըրթւոծ, ալստեղ ուսանողուհու կեանք եմ վարում, ներեցէք, շուտով էլ իսկական ուսանող կոչւելու բախտը կ'ունենամ:

քեզ բառ, որի առաջին երկու վանկը մտսանաւոր փոփոխութեամբ մեր սիրելի կենդանու արդ ու գարդն է կազմում։ Այս, նա մարդասէր էր, երբ կամաւոր զինւոր դարձաւ, հայրենիքը կարօտ էր նրա օդնութեան. մարդասէր էր, երբ քաղաքի համար ձրիապէս երկրաչափութիւն էր անում, կամ ինչպէս ասում են՝ բայց ուրծէ գումար առաջաւագ էր իր ստորին ծառայութիւնների ժամանակ, որովհետեւ ապրուստի միջոց հայթհայթելով իր համար՝ նա իրան ապրեցնում էր յօդուտ մարդկութեան բազմանալուն։ Եւ եթէ կատեան իմանար ալդ բոլորը, անշուշտ նրա գիրկը կ'նետւէր, որովհետեւ. առաքինութիւնը քչով է զանազանում գեղեցկութիւնից։ Բայց ալդ միևնոյնն է, նա բնակութիւն է հաստատել համարեալ կատեալի մօտ, նրա հարեանն է, և լուսամուտներից չեն հեռանում երկուսն էլ։ Կատեան կամենալով իր վարկը բարձր պահէլ, մի կողմից

Էլ հպարտութիւնից դրդւած, երբեմն ամբողջ օրերով չէր նայում լուսամուտով. բայց որքան՝ էր տիրում նա, երբ նոյն բանը նկատում էր և իր հարեանի կողմից։ Վերջապէս կոյր բախտի բերմամբ նրանք ծանօթացան, և կատեան Միտեալին մի օր հրաւիրեց իր տունը խօսելու, Միտեան քաղաքավարութեամբ ընդունեց հըրաւէրը։ Կօմեղեան սկսւած է, վարագոյրը բացւած, և բեմը գերասաններին է սպառում։

Երեկոյեան թէլի ժամանակ Միտեան կատեալին.

— Ի՞նչ նպատակով էք ալստեղ եկել, մամզել էկաթերին։

կատեան Միտեալին.

— Մտադիր եմ արտասահման գընալու, գիտէք, ես մի փոքր ազատ եմ կըրթւած, այստեղ ուսանողուհու կեանք եմ վարում, ներեցէք, շուտով էլ իսկական ուսանող կոչւելու բախտը կ'ունենամ։

— Միթէ՛. շնորհաւորում եմ, շնորհաւորում եմ, բացականչեց Միտեան և երկու ձեռքով ամուր սեղմեց կարծեցեալ օրիորդ Կատեռի տղը՝ ինքն իրան ասելով. „քո հօրբողորմի, լաւ ուսանողուհի կդառնաս, այ՞»:

— Բայց . . . ասաց Միտեան:

— Ի՞նչ:

— Լաւ, այս Բայցի մասին յետոյ:

— Չէ, ասացէք ինդրեմ:

— Ախր . . . մի փոքր շուտ է, տալիք հարցս շատ մտերմական է:

— Վնաս չնենի, ես սիրում եմ, երբ մարդիկ բացսիրտ, անկեղծ են լինում:

— Բայց ալդքան շուտ . . . լաւ, ես ու գում եմ ասէ որ աւելի լաւ կանէիք, եթէ ամուսնանալիք: Արդէն մեծացել էք, արտասահման գնալ շարունակել նպատակով չարժէ իմ կարծիքով. իսկ եթէ շատ էք ցանկանում, կարող էք ամուսնանալ և ձեր ամուսնու հետ միասին գնալ:

— Ե՛, ինչ էք ասում, առաջինը ոլ՝ ես այնքան մեծ չեմ, որքան ձեզ է թւում, երկրորդը՝ ես առանց ուսման չեմ կարող ապրել, երրորդը՝ ասենք թէ ցանկացալ ամուսնանալ, բայց մեր աշխարհում ինչպէս գտնել մէկը, որ կարողանայ օրինակելի ամուսին լինել:

— Ա՛, ալդ դժւար չէ այնքան էլ. եթէ կուգէք, ես կարող եմ առաջարկել ձեզ փառաւոր զոյգ կազմելու համար ամեն բարեմասնութիւններով օժտւած մի անձնաւորութիւն:

— Ապա՛, ապա՛:

— Օրինակ . . . է է է . . . ես միթէ պակաս եմ. մեծ հարուստութեան տէր, խելքով փառք Աստուծոյ, յետ չեմ մնում իմ ընկերակիցներից, համեստութիւնս թողլ չէ տալիս ասելու, որ զուցէ քիչ էլ բարձր եմ. ը՛ը . . .

— Դու՛ք . . . Բայց . . . աէ՛ք Աստւած . . . ալդքան շատ . . . ես . . . վճռել չեմ . . . կարողանում . . .

— Թողէք, ես կ'վճռեմ այս ըսպէիս:  
Եւ Միտեան ցատկելով նստած տեղից՝ մի համբոյր դրօշմեց Կատեալի ալտին  
և ապա տեղը սառած կանգնեց:

— Ինչու դադարեցիք, ես ձերն եմ,  
տւէք ձեր ձեռը, ասաց Կատեան՝ Մի-  
տեալի վզին փարւելով և համբոյրների հե-  
ղեղ թափելով նրա շրթունքների վրայի:

— Ուրեմն ալսօրւանից մենք ամու-  
սիններ ենք, այնպէս չէ, ասաց Կատեան:

— Այս. բայց . . .

— Բայց ինչ. գուցէ պսակւելու  
խնդիր ես ուզում դցել մէջ տեղը. ճիշտը  
խոստովանեմ, ես միանգամայն հակառակ  
եմ ալդ անմիտ ծիսականութիւններին.  
կարծես եթէ մենք միմիանց չսիրենք,  
եկեղեցին մեզ սիրել է տալու!

Ախ՛ ոչ, ալդ չէ, ես ինքս էլ եմ  
հակառակ եկեղեցական պսակին. բայց . . .

— Բայց ինչ է:

— Ախ որ . . . դուք ասացիք, թէ  
հալուստ էք, չէ:

— Ես չասացի, բայց ասում եմ. իսկ  
դու:

— Ես ես, բայց չէ որ քո հարըս-  
տութիւնը մեզ երկուսիս է պատկանում,  
չէ, և քեզ, և ինձ:

— Այս, բայց ինչ տարօրինակ հարց  
է:

— Ախ՝ ոչինչ, ուրախութիւնից ես  
ինձ կորցրի. գիտես, այն ըսպէից, երբ  
քեզ տեսայ, սիրտս այլ ես իմը չէր . . .

Հետաքրքիր է իմանալ, թէ ումն էր:  
Երբեմն որքան լիմար են լինում մարդիկ  
. . . Ես հալումաշ էի լինում.  
վերջապէս հասայ նպատակիս:

— Ես էլ ճիշտն ասած, սկզբից ձեզ  
համակրում էի. ալսինքն՝ աւելի ճիշտը,  
սիրում էի. ես էլ հասայ նպատակիս:

— Ե,՝ ուրեմն երբ ենք գնում արտա-  
սահման:

— Առալժմ ալստեղիմնանք, այնպէս  
չէ. դրա մասին դեռ լետոյ. ուրեմն ալսօր-  
ւանից մենք ամուսիններ ենք:

—Ալի՛, այս՝

Եւ այնօրւանից նրանք ամուսիններ դարձան։ Նրանք հասան իրանց մուրա- զին, դուք էլ հասնէք ձեր մուրազին, հայ եղբայրներ։

Այնքան խառնաշփոթ է աշխարհը, որ մարդ գլուխը կորցնում է, բայց ոչ թէ այդ խառնաշփոթութիւնից, ապա նրանից, թէ այդ ինչու խառնաշփոթու- թիւն է։ Եթէ Կատեան իր գլուխը չէր կոր- ցըրել, գոնէ Միտեան կորցրել էր. բայց ով կարող է նրան մեղադրել. „Անմեղն ի ձէնչ՝ նախ նա ընկեսցէ քար ի վերայ դորա“։ Աշխարհը կարօտէ բարեփոխման. բայց արէ ու բոլոր մարդկանց գտասա- կարգերի բաժանիր, ճանաչիր ամեն մի դասակարգ և այնպէս աշխատիր մէկը միւսին նմանացնել։ Ասենք մարդիկ դասակարգերի են բաժանւած արդէն, դրա համար չ'արժէ նեղութիւն կրել— քանի մարդ, այնքան էլ դասակարգ, երկ- րորդ նպատակը գլուխ բերելն է նշա-

նակում գլուխ կոտրել։ „Աստօծ էլ վրէր վերը կեալ երբ զինքեան, էլ լ'հա կարել չի մաարթ' բիշնդին հախան կեալ. ընսան ա է, զարափաթ չի“, ասում է զարա- բազցին. „աթանցիգ տօդու—մօդու պա- ներան կերլօխը տիւս չը կեամ քի,“ կրկնում է շամախեցին։

Կարծեմ պէտք է վերջ տալ այս գըլ- խին և Կատեալի երջանկութիւնը գըլ- բախտութեան հետ չը խառնել, ամեն ինչ ծիծաղ ու լաց դարձնել։ „Հայկեան փանդռանց որոտընդոստ դռնչին բառ- բառք մարտափոռք,“ ինչ կ'լինի Կա- տեալի հալը, եթէ այդպէս շուտ լսէ այդ ախորժալուր երաժշտութիւնը։ Հարկաւոր է վերջակետ դնել այս գլխին, զիտեմ, գուք էլ խորհուրդ կ'տաք. մանաւանդ որ իմ մասին մի շրջանում խօսելիս ա- սել են, որ ես պաշար չունեմ. գուցէ և ճիշտ է, ով զիտէ աշխարհիս բաները։ Ուրեմն ց'տեսութիւն, կարի, լոյժ սիրելի

ընթերցող—ներ և —ուհիներ, ցըտե-  
սութիւն և քեզ, երջանիկ կատեա, շու-  
տով կտեսնւենք:

V

Սաածը շուտ վերջացնել! ահա՛ թէ  
ինչ է ցանկութիւններիցս ամենամեծը.  
ես չեմ սիրում մի բան ձգձգել, ամեն  
ինչ շուտով, շուտով թող կատարւի. թէև  
ուսուցիչներիցս մինը հասկացնում էր ինձ  
խօլերիկ տեմպերամէնտը, որ և սխալում  
էր, բայց ես մելանխօլիկ լինելով հան-  
դերձ (գուք կասէք զարմացած. „միթէ՛  
մելանխօլիկն էլ այսքան ուրախ կլինի.  
շատ ուրախ եմ, շատ, Աստւած ձեզ այս  
ուրախութիւնից թող՝ բաժին հանէ),  
ալո՛, ես մելանխօլիկ լինելով հանդերձ  
չեմ մոռանում տարին մի անգամ էլ  
սանգվինիկ լինել. իսկ ֆլեգմատիկ լինել...  
երբէք չէի ցանկանալ այդ գերմանակա-  
նութիւնն իմ թշնամուն: Սանգվինիկներն  
անհամբեր են. այդ երկու տեմպերա-  
մէնտներից որին էլ որ ենթարկւեմ, էլի

նոյն անհամբերն եմ։ Այդ պատճառով կը  
ներէք ինձ, որ հերոսուհուս երջան-  
կութիւնը շարունակելու աւելի երկար՝  
հարկ չեմ համարում։ Թող ինչպէս եկաւ,  
այնպէս էլ վերջանալ։

Ամուսնութեան հինգ երկրորդ օր-  
ւանից Կատեալի և Միտեալի... — թո՛լ  
տւէք սովորութեանս համեմատ նոր տ-  
նուններ տալ նրանց, որովհետեւ նորը  
միշտ ցանկալի է։ Կատեան ու Միտեան =  
են նադեալին ու Պետեալին։ — Ուրեմն  
ամուսնութեան երկրորդ օրւանից նա-  
դեալի և Պետեալի մեջ տուրուղմբոցն ըսկո-  
ւեց։ «տուրուղմբոց» բառի հետ չխառնէք  
մահակ կամ բռունցք, ոչ, այդ իսկի բուն  
ասիցիների մէջ էլ չէ ընդունւած այժմ,  
ուր մնաց եւրոպականացած մարդկանց  
մէջ, ոնց կարելի է։ իմ տուրուղմբոցը  
բանաւոր բնաւորութիւն ունի, կամ ա-  
ւելի պարզ ասենք՝ խօսքերի տուրուղմբոց  
է։

— Ինչո՞ւ դու ինձ խաբեցիր, որ կոյս ես։

Ես քեզ երբէք չեմ ասել այդ։  
”Եւ եղեւ երեկոյ, և եղեւ վաղորդայն,  
օր մի։“  
— Իսկ ին՞չ եղաւ քո հարստութիւնը։  
— Իսկ քննն ինչ եղաւ։  
”Եւ եղեւ երեկոյ, և եղեւ վաղորդայն,  
օր երկրորդ։“  
— Իսկ բնչ եղաւ արտասահման  
գնալը։  
— Գլուխս մի տանիք, երբ քեզնից  
զրկւեմ, այն ժամանակ կ'զնամ։  
”Եւ եղեւ . . .“  
— Այսօր ես իմացայ, որ գու ամուս-  
նացած ես եղել, այն էլ միքանի անգամ։  
— Այդ բոլորը շատ ճիշտ է, բայց  
քեզ ինչ վնաս։  
Եւ այսպէս օր չորորդ, օրեր հին-  
գերորդ, վեցերորդ, վեշտասաներորդ և ալլ-  
ներորդ, մինչեւ որ՝  
— Նադեա, մենք իրար հետ չենք  
կարող ապրել, ճիշտն ասած՝ ոչ ես եմ  
քեզնով բաւականացողը, և ոչ գու ինձ-

նով, արէ բաժանւենք, „մի լիցի կռիւ  
ընդ իս և ընդ քեզ և ընդ . . . ոչ ա-  
ւագիկ երկիրդ ամենայն առաջի քո է,  
մեկնաց լինէն (եթի լետս իմ, սատանալ),  
եթէ դու յահեակ—ես յաջ, եթէ դու-  
յաջ—ես յահեակ:“

—Քո մահը միայն օձիքդ կազատէ  
ձեռքիցս:

—Ինչ՝ ես ասում. իսկ եթէ ես ինքս  
քեզ թողնեմ առանց մահւան միջա-  
մտութեան!

—Դու չես կարող:

—Կարող եմ:

—Ես դատարանով կդարձնեմ յետ:

—Հրաժարիմք ի սատանալէ:

—Եւ յամենայն խաբէութենէ նորա:

—Ի չար պատրանաց նորա:

—Ի չար խորհրդոց նորա:

—Հրաժարելով հրաժարիմք:

—Ես կս:

Միւս օրը՝

—Նազեա, տես կապկապում եմ իրե-  
ղէններս:

—Իմն էլ կապկապիր:

—Բայց ես գնում եմ հայրենիք:

—Ես նոյնալէս:

—Ըսդէմ չեմ, բայց կարող ես ա-  
ռանձին գնալ:

—Ապա ի՞նչ կասեն ուրիշները, երբ  
տեսնեն, որ մարդ ու կին ջոկ—ջոկ են գնում:

—Ինչ մարդ ու կին! դու սխալւում  
ես:

—Ինչպէս եմ սխալւում, չէ որ  
բաւական ժամանակ է, որ միասին ենք  
ապրում:

—Այդ գեռ ոչինչ չէ նշանակում.  
մենք եկեղեցական օրինաւոր կապերով  
չենք կապւած:

—Այդ էլ գեռ ոչինչ չէ նշանակում:

Եւ կը կին „Հրաժարիմք“, մինչև որ  
նաղեան մի օր տուն վերադառնալով  
տեսաւ, որ իր օրինակելի ամուսինը փըրկ-  
ւել է իր ձեռքից: Ե՛կ դու տես որ նա-  
դեան լաց եղաւ: „Օ, что же находимъ  
мы въ женскихъ слезахъ?“ ասում է

Բարբնը ոռւս թարգմանչի բերանով.  
կ'զտնւթ արդեօք մի մարդ, որ այս հարցին չպատասխանէ՝ „ՅՈԴՍ“:

„Ի՞նչ ասել է յուսահատւել. այս,  
թէև կանալք թոյլ, անպաշտպան արա-  
րածներ են, „Հետևաբար և բնականաբար“  
շուտ պիտի յուսահատւեն, բայց այս  
դեպքում ես կին չեմ, ես տղամարդուց  
էլ քաջ եմ: Ոչ, պէտք է թողնել այս  
լիմարութիւնները և ապագայի մասին  
լրջօրէն մտածել“, խօսում է Նադեան  
ինքն իրան:

Եղիցի!

„Ախ՝ այս գրաբար խօսքերը. ախը  
ինչո՞ւ է գործածում այս պարոնը,“ կ'ա-  
սէ մեր սիրելի „Մշակը“. „չ՞ որ ազա-  
տամիտ մարդու ականջներն են ծակում:“  
— „Մշակն“ այդ ասելու իրաւունք ունի  
առալժմ. առայժմ եմ ասում, որովհետեւ  
այդ նրա ախօրւայ կարծիքն է, իսկ վա-  
զը կարող է հակառակ փոխել, որով-  
հետեւ այդ լրագրի մէջ ամեն օր մի նոր

փոփոխութիւն է մտնում, երեկուալ սպի-  
տակն այսօր սկ է դառնում, իսկ սկսն  
սպիտակ: Ապա ինչպէս են համբաւաւոր  
դառնում նրա երգւեալ մշտական աշխա-  
տակիցները, որոնք պարտատիր են ամեն  
օր մի „օրէցօր“ թխելու: — Թերեւս ես  
էլ ենթարկւեմ՝ Մշակի լեզով ասած  
„փողոցալին“ թերթերի վիճակին նոյն  
այդ Մշակի կողմից, բայց „որո՞ւ հոգ“,  
կոտրովը չեմ: Հիմալ Մշակը կասէ. „ինքն  
իր խօսքով է անում իր դատաստանը“:  
— Եղիցի! Աստւած տայ, որ այդ թերթն  
իր մասին միշտ այն կարծիքն ունենալ,  
ինչ կարծիք որ ունի պապն իր մասին:

Ե, հայդէ, շատ էլ պէտք չէ կանգ-  
նել, ուրիշների ինչին են պէտք մեր  
երեմիականները, ըոլորն էլ առանց մեզ՝  
գոհ են իրանցից: „Խաւար եմ ես որպէս  
գէշեր, իմ չորս կողմին փոթորիկ“, ա-  
սում է նահազիկն—այդ թեահատ ար-  
ծիւը մօտաւորապէս հէլինսկու նման.  
բայց արի ու տես, որ ամեն մարդ այդ-

պէս չէ մտածում. „ինչ գեղեցիկ է աշխարհը“ ասողներ ևս կան: Կեցցէ՛ տիմառութիւնը „իւր սարօքն հանդերձ“:

Ախր բնչ կարիք կար ամեն բան իրար խառնելու, քանի որ նրանք իրար չետ ոչ մի կապ չունեն. Նազեա և Մշակ!—սոխ ու սխտոր . . . այսինքն ինձոր էի ուզում ասած լինել: Մարշ դէպի նազեան:—Ախր, երբ կ'լինի այս գըլութիւնը կ'վերջանալ և նազեալի անունը կ'ըփոխեմ. թէ չէ այս ինչ որ . . . դուք չէ գալիս ինձ:

Նազեան պատրաստութիւն էր տեսնում արտասահման գնալու. բարի ճանապարհ! . . . բայց ոչ, դեռ քարի ճանապարհ!“ ասելու ժամանակը չէ: Հետաքըրքիր է իմանալ, թէ նա ինչպէս էր պատրաստութիւն տեսնում և ինչ էր մտքումը դրած: Թէ ինչպէս էր պատրաստումը շատ պարզ է, և կտրեւորութիւնը չէ ներկայացնում պատմելու. իսկ թէ ինչ էր մտագիր, այդ էլ շատ պարզ է—նա

մտածում էր, թէ կ'գնալ արտասահման, կ'ընկնէ՛ համալսարան, կ'լսէ պրօֆէսորներին, միտքը կ'սպառազինէ անչափ պաշարով և կ'դառնայ հայրենիք. օ, այս ժամանակ ովք չի ամուսնանալ նրա հետ: Եւ այսպէս նա գնաց, իսկ նրա յետևը ՝ ջիւնով պատած սարն ու ձորը մընացին“:

XIX դար. աչա վերջապէս անթիւ դարերից մէկը, որ „ազատութեան դար“ անունն է կրում այն պատճառով, որ դարուսշղթաներն աւելի ամուր կուելով պատճառ են գառնում ազատութեան մասին աւելի վառ կերպով երազելու: Ա. ի ազատութիւն, ազատութիւն. ինչէ՞ր, չի տալ մարդը քեզ համար. բայց դու այնքան թանգթանգ ես յայտնւում, որ մարդ ակամայից սկսում է ափսոսալ այն բոլոր ճիգերի համար, որ գործ է գրել քեզ ձեռք բերելունպատակով: Լաւ է ազատութիւնը խելագարի համար, որովհետեւ նա հնարաւորութիւն ունի աւելի գոհացում տալու իր անկոչ

քմահաճոյքներին. լաւ է ազատութիւնը ստրկի համար, որովհետեւ նա հնարաւորութիւն է ստանում առանց տանջանքի կլանել այն օդը, որն ստեղծւած է իրան Ստեղծողից իր համար. լաւ է ազատութիւնը ազատի համար, որովհետեւ նա իր տենչը կատարւած է տեսնում՝ անսահմանութիւն զգալով. լաւ է ազատութիւնը գրչի համար, որովհետեւ նա իրաւունք է ստանում լայն բաց անելու մտքերի հսսանքի ճանապարհը. լաւ է ազատութիւնը սրի համար . . . Բայց ինչպէս թէ լաւ է. ինչու. որովհետեւ նա աւելի մեծ դիւրութիւններ է ստանում աւերև և կոտորած առաջ բերելու. կարծեմ ոչ ոք չի ասիլ, թէ լաւ է ազատութիւնը սրի համար. բայց ինչու, եթէ լաւ չէ, ինչու շատերն իրանց սրերին ազատութիւն են տալիս,

—Ոչ, լաւ չէ ազատութիւն սրի համար. ուրեմն ազատութիւնը՝ բացարձակ լաւ բան չէ. այ, ուրիշ բան է

Նադեալի համար. ազատութիւն և Նադեա! երկուսն էլ դիտմամբ իրար համար են ստեղծւած. ազատութիւն առանց Նադեալի և Նադեա առանց ազատութեան! այդ չինելու բան է. Նադեան կատարելապէս ազատ է և գեռ պիտի լինի. չէ որ նա XIX դարու կին է: Ա. խ, որքան են շահել XIX դարու կանալք. կարմի երանելի ժամանակ, որ մարդիկ էին կանանց գլուխ ու տէր համարւում. իսկ այժմ . . . այժմ կանալք են մարդկանց գլուխն էլ, ոտներն էլ, ձեռներն էլ: Ես լսել եմ հաւաստի աղբիւրից, որ աշխարհիս բոլոր կանալք՝ սկսած հօթենիթուրուցուց մինչև Պարիզի արիստոկրատուհին իրար մէջ մի պայման են կապում, որ մի իրար մէջ մի պայման են կապում, որ մի խաւար գիշեր սրերով գուրս գան տղամարդիկ կոչող սիշատների դէմ և նրանց ստրուկեր դարձնեն (թէև այժմ էլ ստրուկեր են, բայց պաշտօնապէս են ուզում դարձնել). մարդով առեւտուր անողների աչքը լուս՝, կըկին ասպարէզ կ'բացւի

нынѣшнее племя, богатыры, не  
вы!..

Նագեան գնաց արտասահման. ծնող-  
ները պատրաստ էին ամեն մի զօհողու-  
թիւն անելու, միայն թէ նա աւելի  
չեռու գնալ: Կարիք չկայ, որ դուք էլ  
չետևէք նրան, որովհետեւ ճանապարհա-  
ծախս պէտք է անել. իսկ հետաքրքիր  
մարդիկ փող չեն ունենում, հարուստ-  
ներն էլ չեն տալիս, ձրի էլ չեն տանում:  
Զւյցերիալում ես մի բարեկամ ունեմ,  
նա կը արեհաճէ մեզ տեղեկութիւններ  
հաղորդել, որի նամակներից ես քաղւածք-  
ներ կ'անեմ: Ատանում եմ առաջին

Նամակը. աչա:

„Սիրելի բարեկամ.

Սի քանի ամիս է, ինչ որ նադեան  
մի տիկնոջ հետ միասին բնակւում է  
Լիւցերնում:“

Այստեղ պէտք է ասեմ, որ քանի  
որ է, գաղարել էի գրելուց՝ խօսքս հանգ-  
ցըրած լինելով Լիւցերնի վրայ, որովհետև  
ինչպէս մի անգամ իրշել եմ, հարեաններս  
հրէաներ էին, որոնց սենեակի օդը անց-  
նում էր իմ սենեակը. բայց յայտնի է,  
որ հրէաները սարսափելի հոտ ունեն.  
Հգիտեմ թէ ինչի նմանացնեմ այդ հոտը—  
գուցէ փթած սելէճկա—ի—բայց իսկա-  
պէս որ զարհուրելի հոտ է: Ճիշտ է,  
ամեն մի ազգ եր հոտն ունի, քեւ—շտ  
այդ միւնոցն է, զորօրինակ՝ հայի հոտը  
նման է քրտնքից առաջացած հոտի,  
ոսի հոտը կօշկաներկի հոտի, վրացունը  
կախէթի գինու հոտի ևալին. բայց թէ  
հրէական հոտի ուժգնութիւնը ոչ մի  
տեղ չեմ նկատել:—Հա, սենեակս վարակ-

ւելով հրէական հոտով ինձ միանգա-  
մալն անհանգիստ էր անում և չէր թող-  
նում, որ ուղեղս այդ հոտից դուրս գոր-  
ծէ. այդ պատճառով առաջատեան սենեա-  
կիցս դուրս գալով մէկ էլ քննելու ժա-  
մանակ էի վերադառնում. հաւատացէք  
որ եթէ գիշերապահներն արգելք չ'ինչին,  
հէնց փողոցներում էլ կ'քնէի, այնքան  
էի զգւել իմ սեփական բնակարանից:  
Բայց, փառք Ալլահին, ամիսը վերջացաւ,  
և ես ուրիշ տեղ սենեակ վարձեցի,  
անհամեմատ աւելի մաքուր և աւելի  
քիչ գարշահոտութիւն պարունակող.—  
այս, որքսն էլ չ'ինչի, էլի կայ այդ հոտը  
սենեակումս, որովհետև տանտէրը հրէա-  
է: Այստեղ՝ Բագւում չէ էլ կարելի ուրիշ  
մարդուց սենեակ վարձել, որովհետև  
բոլորը հրէաներին է պատկանում. մէկ  
էլ տեսար մի ահագին ընտանիք երկու  
սենեակ է վարձում տաս ըուբլով, մի  
սենեակում տեղ գտնում ինքը (որպէս  
խոզի ընտանիք, որն ընդունակ է տաս-

նեակ անդամներով մի աղբածակոռի  
մէջ բնակւելու), իսկ միւս սենեակը  
վարձով տալիս 15 ըուբով, որից հանում  
է ամբողջ բնակարանի վարձը և դեռ մի  
հինգ ըուբով էլ ինքն աշխատում. այս  
թէ ինչ մարդիկ են հրէաները—գործնա-  
կան, շատ գործնական ժողովուրդ . . .

Սլժմ քիչ հանգիստ եմ և գրիչս  
ձեռս եմ առնում ընկերոջս նամակը  
վերջացնելու նպատակով, որպէս և այս  
գլուխը, ալսօր, հէնց ալսօր կ'վերջացնեմ.  
բայց այստեղ էլ եմ մի հատ „գուցէ“  
դնում, որովհետև ով գիտէ, սենեակիս  
փոքրիկ հոտը կարող է հէնց ալսօր և  
եթ ալնքան մեծանալ, որ մինչև իսկ  
Բագրից հալածէ ինձ մի ուրիշ աշխարհ.  
Հիուզների վրայ լուս դնել չէ կարելի:  
Աղօթենք, որ այդ անախորժ դէպքը  
տեղի չ'ունենալ:

Հա,

»Սիրելի բարեկամ!

Մի քանի ամիս է, ինչ որ նադեան

մի տիկնոջ հետ միասին բնակւում է  
Լիւցերնում: Թէ ով է այդ տիկինը  
(որի անունն է Ալէքսանդրա Ալէքսան-  
դրովնա Ալէքսանդրօվսկայեա), չգիտեմ,  
բայց այսքանը կարող եմ տսել, որ ա-  
դեան նրա հետ ծանօթացել և ճանա-  
պարհորդակցուհի է գարձել Բեռլինից,  
միասին անցել են Լայպցիգ—Հոֆ—  
Աուգսբուրգ, ապա Միւնխեն—Լինդաու,  
ապա Բոդենի լճի վրայով անցել Ռոմանս-  
հօրն, անտեղից Վինդերթուր—Ցիւ-  
րիխ—Ցուգ և ապա Լիւցերն ընդամէնը  
մի օրում: Լիւցերնը հրաշալի քաղաք  
է, բնութիւնը կախարդական, կլիման  
առողջաբար, լեռնալին: Հրաշալի լիճն  
աչքիդ առաջ խաղում է, որի ափերին  
բարձրանում են ծաղկափթիթ լեռների  
և բլուրների շարքերը, դէպի ձախ  
երևում են Ռիգի շղթալի թովիչ կատա-  
րները, դէպի աջ ատամնաձև Պիլատն  
է և լեռների մէջ ընկած շքեղ այգիներն  
ու ծաղկանոցները: Շէլսի հոսանքի վրայ

յանք: Անթերցանից եւնելով՝ տիկինն  
ինձ խնդրեց ծանօթացնել քաղաքի ուշա-  
դրութեան արժանի տեղերի հետ: Ես  
ցոյց տւի նրան բողոքականների եկեղե-  
ցին, կաթոլիկների և Լէօգէգարը, որ  
շնւած է մի բլակի վրայ և ունի շքեղ  
տեսք. անցանք Alpen-strasse-ն, ուր  
Լիւցերնի ամենալաւ խանութներն են,  
ալդտեղից էլ անցանք Züricherstrasse-ն,  
տեսանք Մէլերի Իլօրաման, Լիվէնշտրաս-  
սէում” Մեծ Պանօրաման, որը պատկերա-  
ցընում է 1871 թւի ֆրանսիական զօրքի  
նահանջները Զւիցերիալում, մտանք  
Ստաուֆէրի թանգարանը, ալդտեղից էլ  
բարձրացանք քիչ դէպի հիւլիս և նա-  
յեցինք „Helvetiorum Xidei ac virtuti“  
արձանագրութիւնը կրող „Լիւցերնի Առիւ-  
ծին“, որը կանգնած է գնդապետ Ֆի-  
ֆերի առաջարկութեամբ ի պատիւ 1792  
թւականին Տուլլըրիի պալատը պաշտ-  
պանող գւցերացիների: „Առիւծից“ ներ-  
քեւ խիտ անտառն է և սքանչելի լիձը:

միայն քաղաքը պահպանում է հին դա-  
րերի մուալ հետքերը՝ միշտ դէպի  
աջ եթէ նայես, պիտի կախարդւես՝  
տեսնելով փառալեղ հիւրանոցներ, մաս-  
նաւոր օտելներ, վիլաներ, որոնք հատ-  
ւում են լայն փողոցներով, պճնւած  
ալշաներով, և ստւերախիտ ջրափեր,  
ուր խփում են կախարդական շատրւան-  
ները: Գիտեմ, որ մտադիր ես մի ոտք  
Զւիցերիա գցել, երբ կ'աջողւի ալդ, այն  
ժամանակ ինքդ քո աչքով կ'տեսնես բո-  
լորը և կ'սքանչանաս:

Դառնանք տիկին Նադեալին: Նրա  
հետ ես ծանօթացալ Կիրհառուդ—Կազի-  
նոում, որ գտնւում է Շվեյցերհօֆկէ ջրա-  
փի վրայ, ուր գնացել էլ մի փոքր ժա-  
մանակ տնյակացնելու և երաժշտութիւն  
լրելու: Մտայ ալդտեղի ընթերցանը,  
աչքիս ընկաւ մի կին, որը դիգում էր  
ինձ: Խսկոյն զգացի, որ Ոռւսաստանցի  
պիտի լինի: Ծանօթներից մինը ինձ  
ներկայացրեց նրան, և մենք ծանօթա-

Ապա տեսանք Alpendiorama-ն, մտանք  
Գլէզէրի ալգին, լեռոյ անցանք „Հին—  
քաղաքը“ ևայլն ևայլն . . .“  
Այստեղ ընդհատում եմ ընկերոջս նա-  
մակը (կրկին շարունակելու մտքով),  
որպէսզի ձեզնից հարցնեմ, թէ չ'ձանձ-  
րացաք արդեօք. այո՛, դժբախտաբար  
համարեա՛ միշտ այդպէս է լինում, մար-  
դիկ ձանձրանում են իրանց չ'տեսած  
բաների մասին չոր ու ցամաք ստա-  
տիստիքական տեղեկութիւններ լսելուց։  
Շատերդ՝ իհարկէ կարող էք գնալ և  
ինքներդ տեսնել այդ բոլորը, որովհետեւ  
փող ունէք. բայց դուք՝ հարուստներդ,  
ցաւօք սրտի պէտք է ասեմ, որ վերցրել  
էք միայն փողը, իսկ ցանկութիւնները  
խեղծերին թողել։ Ծանօթներիցս մինն  
ասում էր. „Ես աշխատում եմ համոզել  
մի հարուստ տիկնոջ, որ նա ներկայ  
գտնելի 1900 թւականին Պարիզում կայա-  
նալի ցուցահանդիսին և այնտեղ ի ցոյց  
հանէ հայ կանանց ձեռքի արդիւնքը։

Նա ինձ միշտ պատասխանում է. „Ե՞՛,  
բան չունես մի, հազիր տեղս հանգիստ  
նստած եմ!“—Միթէ իրաւ բոլոր հա-  
րուստներդ էլ այդպէս էք . . . Բայց այս  
ումնից եմ հարցնում, հարուստը դժւար  
թէ կարդայ նոյն իսկ այս տողերը, նախ'  
որովհետեւ դժւար թէ գնէ գիրքս, և  
երկրորդ՝ եթէ գնէ էլ, դժւար թէ աշ-  
քովն ընկնեն խօսքերս, որովհետեւ հայ  
հարուստը հայերէն կարդալու սովորու-  
թիւն չունի, թէեւ ուրիշ լեզուներով էլ  
մի բան չէ անում հա՛: Դառնամ ընկե-  
րոջս նամակին՝ վաղօրօք լայտարարելով,  
որ այժմ նրա խօսքը լատկապէս նադեա-  
լի անձնականին է վերաբերւելու։  
” . . . Ճիշտն ասած, բաւական  
ձանձրացայ տիկին նադեալի հետ, չը-  
նայած որ քաղաքավարութիւնս թու  
չէր տալիս այդ արտայալտելու նրա  
առաջ։ Ես կարծում էի, թէ նա մի մըս-  
խալ եւրոպական խելք կ'ունենալ, այ-  
սինքն գոնէ քաղաքավարութիւն, եթէ

կրթութիւն չկայ. բայց երեաց, որ տի-  
կին նադեան դուռնային մէկն է եղած: “

Այստեղ կըկին եմ ընդհատում նա-  
մակս՝ ծանօթութիւն անելու նպատակով.  
թէև ընդունւած է ծանօթութիւնը ե-  
րեսի վերջում մի առանձին տեղ անել,  
բայց սատանան ինձ դրդում է հէնց  
տիստեղ անել: „Ինչպէս թէ սատանան...  
ինչ սատանայ“, կասէք դուք. — „միթէ  
սատանան էլ գոյութիւն ունի:“ — Ախ,  
ես մի վարժապետ ունէի (ուղղակի կրօնու-  
սոյց). մի անգամ նրանից հարցը (այն  
ժամանակ չարաճճի էի), թէ „վարժապետ,  
իսկապէս սատանաներ կան աշխարհիս  
երեսին:“—„Իշարկէ կան“, պատասխանեց  
նա: Ես մնացի ապշած նրա պատասխանից  
և կանգնեցի քարացածի պէս, աչքերս  
չուած, որովհետեւ նախ քան հարցնելս  
համոզւած էի, որ նա պէտք է ասէ,  
թէ չկան: „Ո՞նց թէ կան, ապա ինչու  
մէկն էլ է չեմ տեսել կեանքումս, ուր  
է:“ — „Իսկ դու ինչ էս, հէնց ինքդ ուղ-

զակի սատանայ ես, էլի,“ պատասխանեց  
վարժապետս մի այսպիսի անմեղ հանա-  
քով: Ես վարժապետիս խօսքերն ընդու-  
նում եմ ինչպէս տասը պատւիրանները,  
որովհետեւ նա էլ հէնց տասը պատւիրան-  
ները սովորոցնողն էր ուղակի, ուստի  
և ընդունում եմ, որ սատանայ կայ, և  
եթէ որևէ կողքը հաստ (կամակոր ասել  
է) մարդ եմ տեսնում, իսկոյն մէջս ա-  
սում եմ. „Այ լաւ սատանայ . . .“  
ծաշմարիտ, շատ դժւար և անմիտ բան  
է ներկայ անհաւատ դարում կրօնի դա-  
սատու լինել . . . Ահա օրինակ. մի ան-  
գամ մի . . .

Հա, բայց ծանօթութիւնս մնաց.  
դուռնայ նշանակում է կրունկ . . .

Որովհետեւ դպրոցի չորս պատերից  
գեռ շատ ժամանակ չէ դուրս գալս,  
ուստի շատ բնական է, որ ամեն կերպ  
աշխատէի կատարել վաղուցւայ ուխտս—  
դպրոցականի ամենամեծ իդէալը—վրէժ-  
ինդիք լինել ամեն մի ուսուցչից, որը

որևէ կերպով վնասել է ինձ, Բայց ես սանգվինիկների հետ շատ մտերիմ բարեկամ լինելով՝ ներում եմ ամենքին վեհանձնաբար:

Հայ, որ տիկին Նաղեան դուռնալին մէկն է: — “Կաց, կաց, ալդպէս չես պրծնիլ, “ կասէք դուք՝ յարգելի ընթերցողներդ: ” գեռ մէկ ասա՞ւ, թէ ինչ կապ ունի վրէժխնդրութիւնից քո հըրաժարւելը և ընկերոջդ նամակը: ” Հըմ... կարծում էք՝ թէ արդարանալը գծւար բան է. այն կապն ունեն, որ երկուսն էլ նոյն թղթի վրայ են տպւած: Նարունակեմ:

”Ե՞՞չ, երկարացնել չարժէ, վախենում եմ չկարդոս նամակս . . . “ Այստեղ յայտնում եմ ընկերոջս, որ ոչ միայն ես եմ կարդում, այլ և ուրիշներին եմ կարդացնել տալիս. Բայց և ներողութիւն, անմոռանալի ընկեր, որ նամակդ տպել եմ տւել. շատերն իսկի ներողութիւն էլ չեն ինդրում: . . . Ամեն

օր տիկին Նաղեան որոշ ժամին գնում է լողարան, ալդանդից էլ ընթերցարան, ուր ստացւում են նաև մի քանի հատ ուռւսական թերթեր (պէտք է ասել, որ նա շատ է սիրում թերթեր, թէն—ականջիդ ասեմ—չի էլ կարդում), ալդտեղից էլ տուն, տնից զբունելու, և ապա տուն ևալն: Մենք սկզբում բաւական մօտ էինք, բայց քանի գնում, այնքան ինձ հեռու եմ պահում, մանաւանդ այն գէպքից լետոյ, երբ նա մի անգամ ինձ ասաց. ”Որքան եմ ցանկանում սիրել և սիրւել“ . . .

Այստեղ կրկին եմ ընդհատում ընկերոջս նամակը, որովհետև ինքը՝ ընկերս էլ է ընդհատում: Հիմայ ձեզ եմ կանչում, սուտ մարգարէներ, որ գուշակութիւն անէք տւածս տեղեկութիւնների հիման վրայ, թէ ինչ կլինի Նաղեայի վերջը: Թէև ճիշտ է ձեզնից ոչ ոք չէ ծառայել հնդկական Փակիրների մօտ, բայց և այնպէս կարող էք ապագան

գուշակել ձեր հոտառութեամբ, այդ  
ոգին մտել է նոյն իսկ մեր մամուլի  
մէջ. զորօրինակ՝ „Նոր—դարը“ միշտ  
գուշակութիւններով է զբաղւում և . . .  
ինչ էք կարծում հետեանքի մասին . . .  
հետեանքը գուրս է գալիս ճիշտ ալն-  
պէս, որպէս գուշակել է „Նոր—դարը“,  
որ աւելի լաւ կ'լինէր փոխել անունը  
և դնել „Հին—դար“: Եւ վերջապէս  
դարս գուշակութիւնների դար է. Ման-  
տեգացայի պէս գլուխը վերջիվերջու  
դարիս է այն համոզման, թէ բաւական  
չէ սենատօր լինել, պէտք է նաև գուշա-  
կութիւններ անելով զբաղւել: Ուր ես,  
Եսալի, մէկ աշխարհ մտիր է. գիտեմ,  
որ շատ շատ պիտի հիասթափւես՝ տեսնե-  
լով քեզնից աւելի հմուտ արհեստակից-  
ների մի լէգէօն:

Այս գլուխը քիչ երկարացնելու հա-  
մար պէտք է մի որեւէ բանի մասին ևս  
խօսել. անշուշտ չէք մեզադրիլ ինձ, որով-  
հետեւ ես անհամութիւն չեմ անում,

իսկ եթէ անհամութիւն է, ինչու մեր  
գրողներն այնքան մեծ սէր ունեն դէպի  
այն: Փաստ կ'ուզէք, կ'սկսեմ հէնց առաջին  
պատահած հեղինակից, որ սեղանիս վրայ  
է դրած (ալսինքն՝ հեղինակը սեղանիս  
վրայ չէ նստած, ապա նրա գիրքը):  
Ճեռս է ընկնում . . . X—ը . . . օ,  
այս շատ վատ եղաւ, ինչու ալդպէս  
եղաւ. այդ մարդը սովորութիւն չունի  
մէկին հաւանելու: Անցնենք: Միւսը  
վերցնեմ . . . թիւհ, ինչ վատ գիրք  
ընկաւ ճեռս. հեղինակի անունն անգամ  
տալ չ'արժէ: Անցիք: Վերցնում եմ մի  
երրորդ . . . չգիտեմ, թէ ինչ անւա-  
նեմ . . . էհ, բայց այս ինչ բան է.  
գիրք անւան հետ ինչ կապ ունի այս  
գիրքը: Զորբորդը, հինգերորդը . . .  
հարիւր հինգերորդը . . . բոլորն էլ  
ծալում եմ ու դէն դնում: „Ե՞՛, լաւ,  
եթէ ալդպէս են, ապա ուրեմն սեղանիդ  
վրայ բազմելու ինչ իրաւունք ունեն,  
կամ ինչ գործ ունեն այնտեղ,“ կասէք

դուք, և իրաւունք էլունէք: Ահա թէ ինչ.  
ես մի տգեղ սովորութիւն ունէի և ունեմ,  
այսէ՝ որ կարդում էի և եմ հայոց թերթեր.  
և ահա աչքովս էին ընկնում լաճախ հե-  
տեալ տողերը, ալսինչ գիրքը „Հրաշալի է,  
և կարող է ծառալել (կարծես վրացի լինի)  
իբրև ամեն մի հայի սեղանի զարդ:“ Ես  
էլ հալ լինելով և միւնոյն ժամանակ հա-  
ւատ ընծալելով մեր թերթերին, ցանկա-  
նում էի իմ հայկական սեղանն էլ զար-  
դարել այդ հազարդիւտ զարդով: Բայց  
ինչ էք կարծում, որ աստիճանի էր լի-  
նում հիսաթափութինս, երբ տեսնում  
էի, որ այդ զարդ կոչածը դարդ է եղել:  
Մինչև այժմ էլ դէն չեմ դցում իհար-  
կէ, որովհետեւ փող եմ տւել այդ արսոր-  
դին: Բայց ասեմ յուրախութիւն ձե՛ր և  
մանաւանդ իմ, որ այլ ևս հաւատ չեմ  
ընծալում ոչ ոքի և այդ զարդերով էլ  
չեմ զարդարում հայկական սեղանս. աւե-  
լի լաւ կ'համարեմ հայի սեղան չունե-  
նալ, քան թէ նորից խաբւել:

Մի քանի խօսք ևս, և այս գլուխը  
մօտ կ'համարւի իր վախճանին. վերջա-  
նալուց կ'սպասենք բարեկամիս երկրորդ  
նամակին, ոլով սկիզբ կառնէ մի նոր  
գլուխ իր ոտներով հանդերձ:—Սովորու-  
թիւն է, որ օրինակելի հռետորներն  
իրանց խօսքը որոտ ու կայծակով են վեր-  
ջացնում, կամ աւելի ճիշտը՝ հասցնում  
են ողբերկական լուծման: Ես էլ մըտա-  
ծում եմ այդպիսի մի բան անել այս  
գլուխ հետ, բայց մտածում եմ, որ ցեն-  
զուրան կարգելէ՝ աղմուկի հէնց առաջին  
նօտը լսելով: Բացի գրանից՝ ով չ'գիտէ,  
որ հանգիստը միշտ գովելի է, նոյն իսկ  
արիւնահեղ տեսարան եղած դէպքում.  
օրինակ ասեմ. ենթադրենք թէ դու (նե-  
րողութիւն, որ հետդ դու—ով եմ խօ-  
սում), սիրելի՝ կարի՝ սիրելի ընթերցող  
կամ ալիւս (+) մի հատ փափկասուն  
—ուհի“... ի դէպ. ուհիներին մի  
ժամանակ քանի որ ջահէլ էի, շատ էի  
սիրում: Զկարծէք թէ նէյնէի պէս պէտք

է ասեմ, թէ այլ ևս չեմ սիրում. ընդհակառակն ալժմ էլ եմ սիրում, որովհետեւ աւելի եմ ջահէլ առաջւանից (տարիք կ'յալտնէի, բայց վախենում եմ, թէ քննադատները վրաս յարձակւեն, որպէս արաւ անցեալ տարի մի համբակ) եթէ սատանան օգնէ ինձ, և ես հասայ պառաւութեան (նոր բառ է), էլի՛ պիտի սիրեմ ձեզ, անմոռանալի՛ ուշիներք:—Հա՛, այն էի ուզում ասել, որ ենթադրենք թէ փողոցով անցնում էք. բոլորփին խաւար գիշեր է իհարկէ (կանանց նախագրուշացնում եմ, որ չվախենան, որովհետեւ խօսմ իսկապէս մութ գիշերով չէք անցնում նեղ փողոցներով, այլ միայն ես ենթադրում եմ). գուք սառսոալով գնում էք, վախենալով . . . ամեն մէկդ մի բանից—կամ գողից, կամ յափշտակողից, կամ աւազակից. այդ մտքերի մէջ էք գտնում, երբ յանկարծ մի փլւածտան բեկորների յետեւից մէկը այծի պէս ցատկում է, և առաջներդ կանգնում:

„Փողերը“. Հրամայում է ալծանման մարդք: Դուք՝ „ինչ փողեր“ համարձակում էք հարցնել. և նա ձեզ մորթում է. . . դէ ինչ պէտք է անել այս դէպքում, որ անխոհեմութիւն և աւելրդ չ'լինի. ես կարծում եմ որ ոչինչ չպէտք է անել, որովհետեւ չպէտք է անել. է լաւ, միւնոյն է, նա սպանելը՝ սպանելու է ձեզ, էլ գուք ինչո՞ւ գոռաք, ասացէք ինդրեմ. Դուք ոչ մի շահ չունէք դրանից: Հօ հէնց այդ ըոպէին չէք մտածել աւազակին պատժել տալու մասին, որպէսզի նա չհամարձակւի մի ուրիշին ևս մորթել. այդ միտքը ուրտեղից պէտք է գալ ձեր գլուխը և ինչո՞ւ պէտք է գալ. „ինձնից յետոյ թէկուզ ջրհեղեղ,“ ասել է մի իսելօք գլուխի: Հանգիստ, հանգիստ: Դէ՛չ, ցտեսութիւն, միայն խնդրում եմ միուս գլուխներն էլ կարդաք: Տեսնում էք, ինչպէս հասարակ կերպով եմ բաժանում ձեզնից, անդին ընթերցող և ուշիներ. միայն „ցտեսութիւն,“ այն-

Ել որքան սառը: Կանալք լուր կ'հասկա-  
նան միտքս. . . , գէ հօ նաւով չէք ճանա-  
պարհորդում, որ արցունք թափեմ ձեզ  
համար և շռայլեմ անթիւ համբոյրներս:  
ու այս բայց ու մայթուննեալու  
շնուր է զանց տիկը ու նա խանուց  
ու այս է շնուր է զանց անքերու-  
րուն է այնուուն ցըսուր ու է օրու և  
անդրտու զանց զանց ու այս գույք է  
ու պահանջ գելու չու ու ու զանց  
արաւա շնուրն ու է միտքու ու ու պահ-  
անջուր միտք պահ ընկայուր միտ-  
քուն ու միտքու ին պահանջունք ու  
յան է զանց պահանջ պահ ու այն  
յան է զանց ու այն է ու ու ու զանց  
ամառն ամառն ու ու ու զանց ու այն  
ամառն ամառն ու ու ու զանց ու այն  
ամառն ամառն ու ու ու զանց ու այն

Հիմայ ես կ'զբեմ մի անձնաւորութեան  
մասին, որը գեր խաղաց այստեղ տիկին  
Օլեալի (քո խնդրանքով եմ Նադեան  
Օլեալի փոխել) կեանքում: Նրա անունն  
է Կօլեա:

Հնդհապում եմ՝ ձեզ ասելու համար, որ Կոլեալի տեղ ընկերս ուրիշ անուն էր Գրել, բայց ես Կոլեա շինեցի Օլեալի հետ նոյնահանդ անելու մտքով

„ . . . Նա Խուսաստանցի է։ Սովորելով գաւառական մի գիմնազիոնում, Նա վաստակել էր ամենաընդունակ, բայց շառլատան աշակերտի համարում։ Ուսուցիչները նրան ատում էին բնաւորութեան չնչին վատ կողմերի համար, և այդպի-“

սով նրան այն աստիճանի հասցըին, որ  
նա իսկապէս վատացաւ։ Ինչպէս ասում  
են՝ աչքն ուղղելու տեղ յոնքն էլ ծռեց  
նրանց խիստ և նրան չճանաչելուց առա-  
ջացած անարդար վերաբերմուքը։ Ուսու-  
ցիչների դէպի Կօլեան տածած այդ միան-  
գամայն անտեղի ատելութիւնը ազդում  
էր և նրա ընկերների վրայ։ Եւ ահա  
նրանք կորորէն հետեւելով այս կամ այն  
ուսուցին, իրանք ևս վիրաւորում էին  
նրան, չէին ուզում տալ նրան այն տեղը,  
որին իրաւամբ արժանի էր։ Դրա հե-  
տևանքն այն եղաւ, որ նա նախ դարձաւ  
պեսսիմիստ, սկսեց ատել և ապա ար-  
համարել թէ ուսուցիչներին, թէ աշա-  
կերտներին և թէ նոյն իսկ ամբողջ աշ-  
խարհը։ Բայց երբ կրկին շարունակեցին  
վատ աչքով նայել նրան, այն ժամանակ  
նա երդւեց խաղալ մարդկանցով, վրէժ-  
խնդիր լինել՝ ումնից էլ որ լինի իրան  
հասցրած վիրաւորանքների համար։  
Այս բոլորն ինքը պատմեց ինձ մի

օր։ Ես այնքան զրաււեցի նրա բնաւորու-  
թեան տռանձնայատուկ պատկերով, որ  
ցանկութիւն լայտնեցի նրա ընկերը լի-  
նել։ Նա ինձ ասաց, որ չէ կարող ոչ ոքի  
հետ ընկերանալ, որ նրան ընկեր դար-  
ձողը պէտք է լինի մի արիւնուուշտ գա-  
զան։ Ես միայն ափսոսացի նրան և չըկա-  
րողացաւ թագցնել այդ։ Նա հպարտ և  
հանդուգն կերպով նայեց վրաս և հեգ-  
նանքով ասաց.

„Թուք ցաւում էք վրաս. թոյլ տւէք  
ասելու, որ ես կարօտ չեմ ալդպիսի ան-  
տեղի կարեկցութեան. զուք ցաւեցէք  
ձեզ վրայ։ Ես ձեզ գոնէ միւս մարդկան-  
ցից քիչ—շատ զանազանում էի, իսկ ալժմ  
տեսնում եմ, որ զուք էլ նոյն լիմարնե-  
րից մինն էք։“ Ասաց ու հեռացաւ։ Այն  
օրւանից նա ինձ այլ ևս չէ բարեւում,  
որպէս չէ բարեւում իր միւս հայրենա-  
կիցներին։ Բայց ես նրան խորին սրտով  
ափսոսում եմ և զղում անզգոյշ խոս-  
քերիս համար. ճշմարիտ ես նրա մէջ մէ

մեծ ոյժ եմ նկատում, որն ՚իշարկէ, ոչ  
ոքի օգտին չի գործադրւել, որովհետեւ  
նա բառիս բուն նշանակութեամբ միզան-  
տրոալ է: Եւ այդ բոլորի մէջ մեղաւոր  
են անհեռատես ուսուցիչները, որոնք եր-  
բէք և երբէք չեն աշխատում ծանաչել  
իրանց տշակերտների հոգին: Ես ևս  
հանդիպել եմ մի շարք այդպիսի ոճրադործ  
ուսուցիչների, որոնք իրանց զգւելի բընա-  
ւորութեամբ ու վարւեցողութեամբ փըչա-  
ցըրել են շատ—շատ ընդունակ և մաքուր  
աշակերտների: Խնչ որէ, այս թողնենք  
և գանք բուն հարցին:

Կօլեան ծանօթացել էր Օլեալի հետ  
կամ աւելի Ճիշտը Օլեան ինքն էր ծա-  
նօթացել Կօլեալի հետ Ալէքսանդրա Ալէք-  
սանդրովնայի միջոցով: Կօլեան գեռ մին-  
չե ծանօթանալն էր գրաւել Օլեալին  
շնորհիւ իր աչքի գարնող գեղեցիկութեան:  
Նրա հպարտ հայեացքը, արհամարհան-  
քով լի շարժումները, խիստ կանոնաւոր  
գիմագծերն ու վերին աստիճանի արիս-

տոկրատ բերանն ու քիթը դէմքին մի  
առանձին շքեղութիւն էին տալիս: Եւ  
այդ բաւական չէ մի կնոջ համար, որ  
հասնէ խելագարութեան:

Ա.Հա թէ ինչպէս եղաւ Օլեալի ծա-  
նօթութիւնը Կօլեալի հետ: Օլեան սովո-  
րութիւն է դարձրել քանի օրէնք մի ան-  
գամ նաւակով շրջագայիլ Զորս—Կանգօնի  
լճի վրայ և հիանալ լճի ափերին փուտած  
տեսարաններով: Ա.Հա այդտեղից երեսում  
են Փիգին՝ իր ծայրերում տնկւած հա-  
զիւ տեսանելի հիւրանոցներով, Պիլատը՝  
իր զարմանալի երկաթուղով, և վերջա-  
պէս Խւնդֆրաուն... ախ՛ այդ Խւնդֆրա-  
ուն! Ճշմարիս, քիչ է մնում բանաս-  
տեղծ գառնամ: Իրաւ որ սիրահարւելու  
երկիր է: Բայց թողնենք այս: Մի օր  
շատ սովորականին Օլեան Ալէքսանդրա  
Ալէքսանդրովնայի հետ վերադառնում էր  
Ֆլիւէլէնից, երբ յանկարծ նկատեց Կօ-  
լեալին մի ուրիշ նաւակում: Կօլեան հէնց  
առաջին անգամից այնպէս կտիսարդեց

Օլեալին, որ վերջինս Լիւցերն հասնելուց՝  
Էլ հանգստութիւն չունէր: Այնքան  
խնդրեց Ալէքսանդրա Ալէքսանդրօվնալին,  
որ մի կերպ ծանօթանայ Կոլեալի հետ  
և ապա իրան էլ ծանօթացնէ, որ աստ-  
ւածավախ պառւիկն ստիպւած եղաւ կա-  
տարելու նրա կամքը, թէև այդտեղ ինչ  
որ վաս բան էր գուշակում նա: Օլեան  
չկարողանալով համբերել (չնայած որ  
կանալք այդպիսի դէպքերում իրանց համ-  
բերութիւնը հասցնում են սպանիչ աս-  
տիճանի), հէնց առաջին ծանօթութիւ-  
նից լետոյ անմիջապէս լայտնեց Կոլեալին,  
որ սիրում է նրան, պաշտում է և չէ  
կարող առանց նրան ապրել: Օլեան ար-  
դէն ձանձրացել էր գոյնզգոյն կեանք  
վարելուց, նա զգում էր, որ կարող է  
սիրել Կոլեալին մինչև վերջին շունչը,  
նրա աչքում ուրիշը չի երեալ երբէք:  
Արդարեւ, կան մարդիկ, որոնց ներքինն  
ու արտաքինն այնպիսի կապերով են  
կապւած, որ նրանց սիրողը երբէք ոյժ-

չի ունենալ թողնելու մասին մտածելու:  
Սիրեր, բայց կարողացիր պահպանել վարկդ  
ու գեղեցկութիւնդ, այդպիսով միշտ գե-  
րիշնող կլինես և երբէք չես թողնելի:  
—Ճիշտն ասած, ես չեմ կարող ձեզ  
սիրել. գուցէ ապագան այլ բան ցոյց  
կ'տայ, գուցէ կ'զբաւեմ ձեզնով և ապա  
նոյն իսկ կ'սիրեմ, բայց այժմ այդքան  
շուտ անհնարին է լոյսեր տալ, յարեց  
Կոլեան:

—Ա՛խ, թէկուզ մի՛ սիրեք, թէկուզ  
նոյն իսկ ատեցէք ինձ, բայց ապրեցէք  
ինձ հետ, աղաչում էր Օլեան:

—Տիկին, բայց գուցէ մի օր ես ան-  
հրաժեշտ համարեցի ձեզ թողնել! չէ՞ որ  
միշտ չեմ կարող ձեզ հետ ապրել:

—Ա՛խ, ես ամեն ինչ յանձն կառնեմ,  
կ'տանեմ, թէկուզ դժոխք. բայց այժմ  
պէտք է ինձ հետ ապրէք:

—Համաձայն եմ, ասոց Կոլեան քիչ  
մտածելուց լետոյ:

Համաձայն էք . . . ա՛խ, որքան բա-

ըի էք, ասաց Օլեան և բերկանքի ար-  
գունքն աչերին թեքւեց Կօլեալի ուսին-

Մի քանի բռպէից յետոյ Կօլեան  
զգալով Օլեալի ջերմ, շնչառութիւնն իբ-  
դէմքին, գրգուեց և մի համբոլը դրօշ-  
մեց Օլեալի ճակատին, բայց մէկ էլ վատը  
թւաց: Օլեան նրա համբոլըն զգալով  
խրախուսւեց և համբոլըների ահագին  
հեղեղ թափեց Կօլեալի շրթունքներին,  
այսէրին, աչքերին, մազերին: Նա լա-  
լիս էր երջանկութիւնից, և վերջն իս-  
տերիկա պատահեց հետը: Թէև սկզբից  
Կօլեալին դուր չեկաւ ալդ, բայց և այն-  
պէս քիչ—քիչ սովորեց մի ջերմ զգալ  
գէպի տիկինը, հաշտ աչքով նայել և  
ինքն էլ ախորժակով համբոլըներ տալ:  
Դրանից յետոյ նրանք միասին էին ապ-  
րում: Ալէքսանդրա Ալէքսանդրօվնան  
վերսդարձաւ Ուռուսաստան, Կօլեան էլ  
հաշտւեց իր վիճակի հետ և սկսեց մին-  
չե անգամ սիրոյ պէս մի բան զգալ գէ-  
պի իր կինը: Նրա բռնկումները բաւա-

կան հանդարտւել էին, նա աւելի հան-  
գիստ էր զգում իրան, իսկ Օլեան իրան  
համարում էր երջանկութեան գագաթ-  
նակէտին հասած:

Իսկապէս ինչ կայ աւելի երջանկա-  
ցուցիչ քան սիբած մարդու հետ ապ-  
րելը: Անշուշտ ձեզնից իւրաքանչիւրը  
կցանկանալ հասնել ալդ բախտին, բայց  
»բազում են կոչեցեալք՝ սակաւք ըն-  
տըրեալք:« Ես էլ էի ուզում հասնել, բայց  
վերջերս Թիֆլիզ գնալուս հետեւանքն  
այն եղաւ, որ ես խեղզելով մեռցը մէջս  
ալդ մոլեխինդ ցանկութիւնը: Ե՛ս, ասենք  
ես հետաքրքրական չեմ ձեզ համար,  
գուք՝ իհարկէ ձեզ աւելի՝ հետաքրքրա-  
կան կլինէք, ուստի ես ուզում եմ դառ-  
նալ ձեր ցաւերին, որով դարձած կլինեմ  
և՝ իմ ցաւերին: Պատահել է ձեզ հետ,  
գժբախտ ընթերցող, երազել ամբողջ  
գիշերներ մահձի մէջ աշխարհից թագուն,  
հառաջներ արձակել կըծքի խորքից, եր-  
բեմն նոյն իսկ հէնց ալնպէս, մի քիչ,

բոլորովին քիչ արցունք թափել, աշխատել լիշել նրա պատկերը, ձեզ երևակայել նրա կրծքին՝ համբուրելիս նրա ստինքները, մարմար ուսերը, և ապա քիչ վեր նայել և հանդիպել նրա հայեցքին . . . օ՞չ, տէր Աստւած, ի՞նչ հայեացք. արդէն կորաւ իլլիւզեան, երբ լիշեցիք այն հայեացքը. արդէն տեսաք ձեր երազի խարուսիկ պատկերը, համոզւեցիք, որ այդ ցնորք էր, թունաւոր ցնորք . . . է՛ս, այդ դէպքում աւելի լաւ է չերազել, աւելի լաւ է միշտ արթնապէս լիշել ներկան և ֆանտազիալից ձեռք քաշել: Իսկ քեզ՝, փօրտունայի՝ որդեգիր . . . էիս, դու իմ ընկերը չես, իմ ընկերը բախտից հալածւած, եղբօրից մոռացւած մարդիկ են: Ասա ինձ, ի՞նչ էր քեզ պակասում, երբ տիրել էիր երազներիդ առարկալին. . . Զէ՛, այդ ինձ հետ էլ է պատահէլ, բայց ես լիմարաբար անց եմ կացրել, թողել եմ նրան եւ բռնել այնպիսի մէկի պոչից, որին հասնելու

համար պէտք է միայն և միայն հարուստ լինել . . . արի և ասա, եղբայր իմ, թէ „ . . . անգի՞ն քոյլիկ, կեանքը հաճոյք չէ . . .“ Սպա ի՞նչ է, հարցնում եմ: Ա՞չ, թողնենք տիսուր մտքերը, գերեզմանը մօտ է:

Ուրեմն Օլեան երջանիկ է Կոլեայի հետ: Սրանով ես կ'վերջացնէի, եթէ քիչ յետոյ չստանայի ընկերոջից մի նոր նամակ, որը որպէս ձեզ կ'վրդովէ, նոյնպէս էլ ինձ է վրդովել և վրդովում: Ախր ինչո՞ւ է այսպէս է, միթէ իսկապէս տևական երջանկութիւն չպէտք է լինի մեր երկրագնտի մակերեւոյթի վրայ: Այսքան գուռում—գոչիւն ենք բարձրացնում, այսքան ազօթում ենք, այսքան տրանցում, բայց զէլ էն կիկօն, զէլ էն կիկօն: Մարդ վերջ ՚ի վերջոյ գալիս է այն համոզման, թէ աւելի լաւ է լսել աստւածաբան կոչող սատանայական պոչի աբսուրդներին . . . չէ, ամենայն ինչ հանգերձեալումն է, ունայն, անցողական է աշխարհը: Ճրշմա-

րիտ, երեւակայում եմ, ինչ կանէք, եթէ  
ես բուդգայական հնդիկ լինէի. կարծում  
եմ, որ վաղուց կ'լինէի քաշւած ալրերը  
ճգնութեան համար, որպէսզի շուտով  
փոխադրւեմ նիրվանի գիրկը: Ախր ինչ  
հողը տանք գլխներիս, սրանից էլ աւելի  
հիասթափութիւն չի լինել, գրիչս էլ է  
ուզում ձեռքիցս ընկնել, երբ մտածում  
եմ, որ զուր է այս բոլորը, շուտով ինքս  
փոշի եմ դառնալու. ինչ գւարճալի բան:  
Դառնանք բարեկամիս նամակին:

„ . . . . ! Կօլեան թէև սկզբից  
ըստ երեսութիւն սիրում էր Օլեալին,  
բայց յետոյ սկսել էր ձանձրանալ նրա-  
նից. այդ ձանձրութն առաջ բերող հան-  
գամանքներից մէկն էլ այն էր, որ Կօ-  
լեան դեռ վաղ սիրած լինելով մի կնոջ  
և նրանից արձագանք ստացած չ'լինելով՝  
միանգամայն տարտամ դրութեան մէջ  
էր ընկած և ուզում էր մտսամբ Օլեալի-  
միջոցով ցըել իր թախիծը: Բայց այդ  
միիթարութիւնը երկար չ'արունակւեց,

և նա նորից վառւեց կնոջ լիշտակով։  
Հետևանքն այն եղաւ, որ սկսեց բանաս-  
տեղծութիւն գրել, որ և մօտերքս հըրա-  
տարակեց։ Աչա ուզարկում եմ քեզ նրա  
գրքից մի օրինակ“:

Ընդհատում եմ առժամ ընկերոջս  
նամակը՝ Կօլեալի բանաստեղծութիւն-  
ներն աչքի անցկացնելու մտքով։ Թողի  
տւեք մի քանիսը կարդալ ձեր առաջ։  
Աչա.

## I.

Միայն ես քեզ էի սիրում  
Եւ պիտի քեզ սիրէի,  
Երգիս մէջ քեզ էի երգում,  
Ուրիշ մի ոք չ'ունէի.

Տանջւում էի միայն քեզնով,  
Որ յետոյ էլ չը տանջւեմ,  
Եւ ապրեցի այսպէս լուսով,  
Որ քո սրտին մօտ լինեմ։  
Ոչ երգեցին ուրիշները,  
Ոչ էլ ինձ պէս լուսացին,

Բայց և գտան իրանց սէրը,  
Սիրեցին ու սիրւեցին:

Ալդ ինձ ցաւ էլ չէ պատճառում,  
Քո՞ սիրածն է ատելի—  
Նա քեզ այնքան չէ փալփայում,  
Որքան այդ ես կ'անէի:

Նա իր գործով, աշխարհ գիտ՝,  
Թունաւորեց իմ հոգիս . . .

Ա-խ, սիրելիս', չկարծես' թէ  
Նա վերջ տւաւ և՛ երգիս,—

Սիրոյ յուշը շուտ չէ կորչում.  
Ես գեռ ալժմ էլ երգում եմ,  
Բայց երգումս էլ յոյս չէ հնչում,  
Եւ գեռ ալժմ էլ տանջուում եմ:

### III.

Կէսդիշերին մի աստղ ընկաւ երկնքից.  
Մտածում եմ շըւարած.  
Չլինք թէ այն քո աստղըն էր, սիրելիս,  
Որ վար նետւեց թափ առած:  
Ինչ, դու մեռած. ոչ, ես ալդչեմ կամենում,  
Հաւատըս էլ չէ գալիս.

Ապա ինչու երգերըս գեռ չեն լոռում,  
Ինչու ես գեռ չեմ լալիս:  
Ա-խ, բայց ինչպէս կուզենալիր, սիրական,  
Իմ մահն աչքովըդ տեսնել—  
Զէ որ անշունչ գերեզմանիս քարի վրան  
Գեռ կարող ես ծիծաղել!

### III.

Ասում են թէ ինձ չես սիրում  
Եւ սիրելու միտք էլ չունես:  
Զար լեզուն շատ բան է խօսում—  
Զեմ հաւատում, դու լաւ գիտես:  
Պատուհանիդ տակ զբջելիս,  
Վերջը մի զոյգ աշեր գտայ,  
Որ նազանքով վար նայելիս  
Ինձ ասացին, թէ “հաւատա՛:”

Կը հաւատամ, լաւ, անկասկած! . . .  
Բայց հաճիր ինձ պատասխանել—  
Էլ ինչու ես քեզ նըւիրած  
Ոտանաւորս արտագրել?!

### IV.

Ինձասումեն, թէ կարծըր ժայռն էլ է լալիս,

Եւ աղբեւրն է նրա արցունքը սառ,  
վըշտակիր.

Եթէ ճիշտ է՝ ինչ ասում են, ա՛խ, նազելիս,  
Սպա սիրտը դու քարից էլ կարծրացըրիք:

Վ.

Ես հաւատում եմ, թէև չեմ տեսել,  
Որ բևեռները սառն են շատ ու շատ,  
Թէև քո սըրտի ջերմը չեմ չափել,  
Բայց ես կարող եմ այս ասել հաստատ,  
Որ սիրտը սառն է բևեռներից էլ.  
Եւ եթէ պնդես հակառակըն անգամ,  
Քեզ ամենեին չպիտի հաւատամ:

ՎԻ.

Դու ինձ տանջեցիր, ես էլ ըսկեցի  
Երգերս դարձնել տխուր ու մաղձուր.  
Սակայն մարդկանցից մի օր լսեցի,  
Թէ նրանց պէտք չեն երգերս թախծուր:  
Ես էլ խառնեցի լիմարի նըման  
Երգիս հետ ծիծաղն ու սուր հեգնանքը,  
Որ մարդիկ ըգգան ինձ պէս, թէ որքան

Զըւարճալի է լինում տանջանքը:  
Կը կամենալի, որ դու, սիրած կին,  
Լինէիր մարդկանց հետ վիճակակից,  
Կուզէի որ դուք էլ մասն ու բաժին  
Ունենալիք այս զըւարճութիւնից:

ՎԻ.

Սիրելիս ճիշտ իմ պատկերն է,

Որպէս ալսօր իմացալ.

Մարմնով, հոգով իմ ընկերն է.

Նոյն իսկ վարքով, մոռացալ!

Ես սիրում եմ (միալն նորան),

Նա սիրում է (ոչ ոքին),

Ես խաբում եմ (ինձ անպալման),

Նա խաբում է (ամենքին),

Ես հարուստ եմ (երազներով),

Նա էլ հարուստ է (փողով).

Զարմանում եմ բնութեան վըրան,

Թէ ինչպէս է մըտածէլ

Ալսքան մօտիկ իրար նման

Երկու մարդիկ ըստեղծել:

Et cetera, et cetera. Σο δωνοθε-  
γώρ Κολκωτή μπουσαής ζετ:

„ . . . Օլեանլ յայտնեց իր կասկածով  
լի նախանձը Կօլեալին, երբ կարդաց վեր-  
ջինիս Հրատարակած բրոշվորը: Պէտք է  
ասած, որ այդ նկատողութիւնը դուր  
չեկաւ Կօլեալին: ԶԵ որ նա սկզբում  
ազնւաբար խոստովանել էր, որ չէ կա-  
րող Օլեալին սիրելու խօսք տալ: Եւ ա-  
հա Կօլեալի սառուցման պրօցեսոր աւե-  
լի և աւելի արագ կերպարանք ստացաւ:

Օլեան Կօլեալի Հետ ծանօթանալու  
ժամանակ այն համոզմունքին էր, թէ  
չնայած Կօլեալի բացարձակ յայտարու-  
թեանը, որ իրան չէ սիրում և խօսք էլ  
չէ տալիս սիրելու, բայց և այնպէս ինքն  
իր քնքոյց զգացմունքով նրան դարձի-  
կըբերէ: Միայն թէ այդ չ'ուրս եկաւ:  
Բանն այնտեղ հասաւ, որ Կօլեան հայ-  
րենիք դառնայլու ժամանակ ասաց Օլեալին:

—Այսօրեւանից ես բաժանւում եմ  
քեզնից, 0'լեա. ինչպէս ասել եմ շատ

անցամ, ես ամեն բանից ձանձրանում  
եմ, և դռը չպէտք է մեզարթես ինձ  
քեզ թողնելուս համար, ես հօսկզբում  
ասացի, որ խօսք չեմ տախս մշտամէս  
քեզ հետ ապրելու: Այսքան ժամանակ  
միասին անց ենք կացրել առանց որևէ է  
անախորժութեան, ցանկանում եմ այժմ  
էլ խաղաղութեամբ բաժանեկի: Մնաս  
բարձի:

Օլեան, որին՝ սպառում էր արդ յա-  
տարութիւնը լսելու, և չեղ չեղ սպառում  
չեր կամենում հայ աւագը: Մի բողէ ար-  
ձանացած մնաց և ապս հեծկուալով ըն-  
կու Կօլետի կրծքին: Ենուոյ լաճիւարծակի  
սթափւելով սկսեց համբարցներով ողագոյն  
նրա դէմքը, կարծէս ուզում էր գրանով  
խեղդել նրան, ար ոչ ոք չկարսղանայ  
խլել իր գանձը, իր միակ եւ առաջին  
սէրը:

Բաւականն է, Օլեա; Ոչ ու էլ որ գնաս, ես ալետք  
էքեզ հետեւեմ, ես մի թագնւած, ոտ-

նահար եղած կիս եմ, կրքերին չափ չդըլ, ես սխալ չասկացայ „կանանց ազատութիւն“ վրազը, որ կրկնում էին ինձ ամեն տեղ, ոլովչետև գետ շատ տ՛չաս էի հասկանալու չամար, շրջանը վիշացրեց ինձ երես տալով, ես ենթարկւեցի բուռն կրքերին հոսանքին և աչա մի լժշւառացած կիս եմ. գիտեմ, քեզ չամար աւելորդ ծանրութիւն եմ, բայց տար չետըդ, գոնէ գուշ խղճա ինձ, ես չեմ կարող առանց քեզ ապրել, իսկ մեռնելուց վախենում եմ: Տար ինձ, լիէկուզ այնտեղ ամուսնացիր ուրիշի հետ, լիով եմ տալիս, ինձ բնակեցրու մարդկանցից հեռու մի տեղ, տար մի հիւրանոց, ապրել ուրիշի հետ, միայն լիէ ինձ հետ էլ ապրելու: Կոլեան, լսում ես ինձ:

Եւկրկին սիրտ կոտրատող հեկեկանք: Կոլեան, այդ քարէ մարդը, որ իւ դէվիզն էր դարձրել ծաղրել բոլոր ուժով մարդուն, նրա կեանքը, նրա զգացումները, այն Կոլեան, որ մարմնացած

արհամարհանք էր, տեսներիվ տիկնոջ այդ սրտաճմլիկ աղերսներն ու կոծը, յասկարծակը վուձկաց, բայց էլի պաշեց իրան, միայն աչքերից մի—մի կաթիլ արցունք դուրս ցայտեցին և գլոււեցին կարմրած ալտերի վրայով: Նա արագութեամբ սրբեց արցունքը և մի անգամ խորը հառաչեց:

—Ուրեմն դու խղճում ես ինձ, Կօլեա, ուրեմն մենք միասին ենք գնում, այնպէս չէ, միասին . . .

Կոլեան կրկին ձեռք բերելով իր տղամարդութիւնսը՝ հպարտ գիրք ընդունեց, մտքումն իրան մեղադրեց իր այդ աւելորդ փոքրոգութեան համար և ասաց անյողդողդ տօնով.

—Ոչ, Ոլեա, ես չեմ կարող քեզ վերցնել հետաս. դու լժշւառ ես, ես էլ պակաս չեմ, գուցէ աւելի եմ դժբախտ, քան դու. Ես կարծում էի, լիէ ճիշտ է քան դու. Ես կարծում էի, լիէ „լժշւառին լժշւառն է միշտ միիթար,“ բայց սխալում էի.

մենք այնքան նոման ենք իրար, որ հբնու-  
ութիւն չկոլ միատեղ տարելու. եթէ  
զայտ վաստահէինք իրար, գուցէ սազ  
ուղինք, բայց այժմ ևս ենքս ինձնից  
վախչել եմ ցանկանում. ինչպէս աւե-  
լացնեմ իմ թշւառութեանիր և ուրիշ թրշ-  
ւառութիւն։ Ոչ, ես մենակ կ'զնում,  
մնամ բարով . . .

Եւ նա գնաց։

Օւեան. . . Ե՛հ, Օւեան Բնէ, Հասկա-  
նարի Ե՛ թէ ինչ ելի. Աւելի յաւ Ե ավա-  
ռաւիր կտրել ե բռնել վերջին որիիր։  
Ես այժ ցունեմ նկառագրելու, թէ ինչ-  
պէս Օւեան մենակ մնայամ բնելու Եը ա-  
պուշ դրութեան մէջ, թէ ինչպէս նա  
ուժապառ Եը դարձած, թէ ինչպէս նա  
հսմոցւեց վերջապէս, որ անցել Ե իր  
դարունք՝ Եթէ ոչ ուրիշների համար, գո-  
նէ իր համար, թէ ինչպէս նա սկսեց  
արդէն ամօթխածութիւն զգալ Ե ալն-  
քան մեծ չափով, որ անից համարեա  
գուըս չէր գալիս և այլն և այլն։

Վահան անդ մաս նոցմանք և ամեն ու  
շնորհածուն ու ուս մերու զայտ ուրի  
պահ զայտ այսուհետ անդ անդ է  
ՎII. Տար է զայտ  
կան երևոյթներ, որսնցից և՛ կարե-  
լի Ե զգել, և խղճահարութիւնից լար,  
սայած թէ ինչ պատճառաւերից և՛ աւա-  
ջացել, որովհետու միւնացն արագոյթը կա-  
րող Ե սր քանի աղբեւըսըլից բզինել։  
Սր պատճառով խորչաւրդ սմ տալիս  
ձմդ, ուշամ ընթացմաներ, որ նախ քան  
մշկը երեսին դատավճրու կարդալլ նրա  
որևէ առգեղ կողսի համար՝ հարցրէք նրա-  
նըց, ծամօլթացէք սրա ցաւերին։ Ծան  
ասգամ ձեր անտառի վիրաւուանքն աւե-  
լի խորը կ'ընկզմէ ցեխի մէջ։ Սր քանի  
օրս սր օրացոյցում կարգացը. „Աէտք է  
աղպըց զգալ ա ապա մտածել։“ Սատ  
լաւ էլ ասում Ե, եղբայրս է ասում, բայց  
կաս դէպէնք, որտեղ պէտք Ե մտածել  
և յետոյ սիախն զգալ. պարզոնն առաջար-  
կում Ե շատ հեշտ սիջոց, որև՛ տեղի Ե

ունենում կետնքում նոյն իսկ առանց  
նրա խորհրդին. բայց իմ տռաջարկածը  
դժւար է, դրան համնելու համար մարդ  
պէտք է ինքն իրան կրթէ: Տեսել էք  
զուք մի առողջ մարդու մուրացկանու-  
թիւն անելիս և գցւել. տեսած կ'ինէք  
անշուշտ, որովհետև մեր երկիրը շատ  
տատատ է դրանցով. բայց նախ քան զըգ-  
ւո՞ք յայտնելու մտել էք նրա սրտի խորքը,  
հետաքրքրւել էք իմանալ մուրայու շառ-  
ժառիթները: Նատերդ պէտք է տսէք՝  
„ո՞չ . . .“ Տեսել էք իհարկէ, և գուցե  
շատ անգամ էք տեսել մի հարբած կնոջ  
ցեխի և ձիւնի մէջ րնկած, քաղաքացի  
ընթերցողներ, և գցւել էք զուք. այն,  
գցւելի է, բայց շատ անգամ այդ կինը  
չ'պէտք է զցւելի լինի մեզ համար, այլ  
կետնքը, նրան այդ տատիճանին հասցնող  
հանգամանքները: Բոլորս էլ տեսել ենք  
... բայց շնոր բան ենք տեսել, ձեռք-  
ներովս ինչ է գալիս, որքն ովհ ունենք  
վերջ տալու սիրտ ծակող երևոլթներին

—ոչինչ . . . այն, կան ուժեր, բայց նրանք  
քնած են, նրանք իրանց փառահեղ  
նիստ ու կացով զատ ջոկ են կեանքից,  
փողոցով տնցնելիս չեն էլ նայում իրանց  
շուրջը, որ տեսնեն եղածը: Բոլորս էլ  
գիտենք նրանց դատապարտելի անտար-  
բերութիւնը, բայց շատերս ենք վիզ  
ծոռում նրանց առաջ, որովհետև մեզնից  
իւրաքանչիւրն ուզում է որքան կարելի  
է աւելի և աւելի հանգիստ տպրել: Բայց  
ինչ առել է „հանգիստ տպրել.“ միթէ  
մեզ չէ լուզում մեր նեխւած մթնոլորդը,  
միթէ այդ լուզումը մեր կեանքը չէ թու-  
նաւորում, միթէ այդ թունաւորումը վա-  
ղաժամ չէ մօտեցնում մեզ գերեզմանին:  
Այն, մենք ալդ զգում ենք, բայց զգում  
ենք առանձին—առանձին, իսկ միասին  
դգալուրնդունակութիւնից գուրկ ենք կար-  
ծես: Մենք աւելի լու ենք համարում  
ուտրուկ տպրել, ստրուկ էլ մեռնել, բան  
թէ միանգամից մի մեծ վերք ստանալ  
և ապա բժշկւելով՝ դառնալ ազատ:

վերջապես ինչքէ պէտք միօրինակ, ձանձ-  
րակի, ովախով լի կեանքը, միթէ կուիւն  
այդքան էլ սարգափելի բան է: Կան  
ժարդիկ, արանք քամում ես մեր արիւնը,  
ծծում մեր շաղու բալասանը, մեզ հաս-  
ցըսում ամենասղարսելի վրճակի և էլի ար-  
դարանում, ամելազ լու բառիւն օրէնք  
է, ար ուժելի կանում է լուլին. ախ,  
ավ գու ուժեղ մարդ, հետաքրքրու է իսա-  
սալ; լիէ երբ քեզնից զօրեզն էլ քեզ է  
համստահարսում, արդեօք գու գոյ. սըր-  
տով ես եպիտարկուում նըա սահաբեր խա-  
ղըրն, լու անիւսում ես բառիւնը ըր  
այդ ամալում օրէնքի համար: Եւ սիթէ  
այս էլ բնուվուաս օրէնքը չէ, որ ստեղծ-  
սաօք պէտք է ապրէ:—Ես գոնէ չէի  
ցանկասալ ամենասուժելի լինելով՝ ոյժն  
ուրիշների կազու վիայ ափը ձեւը, ուրիշնե-  
րի կեանքով խաղալ: Սաոր, անազնիւ է  
այս սարդը, որ յանդենում է ուրիշի  
ըրաւուսքսերն ըր իրաւունքսերից պա-  
զաս հասարել, աւելի սպիր է այս մարդը

որ իր ուժի աւելորդ մասը չէ գործա-  
գըրում թոյլի օդախն: Հաւատացէք, ով  
ուժեղ արարածներ (արջերի ու փղերի  
մասին չէ խօսքս, այլ սարդկանց), որ  
բաւական չէ միայն, ուրե մէկս իրան հա-  
մարում է մարդ. պէտք է գտնվի և մի  
ուրիշը, որը սոյնպէս տայ այդ ասունը:  
Իուք վչայնում էք հասարակութիւնը,  
դուք բացի նրան զրկելուց ու շախչա-  
լիւուց սովորեցնում էք և ատել, զգւել.  
իսկ այդ զգացմունքներն ինչ ազբերից  
էլ ծագած լինեն, այնուասնայնիւ մարդ  
կային չուգու ստոր կըքերիցն են: Ահա  
ձեզ զւարճութիւն—մէկը վիզ է ծռում  
ձեր առաջ, մըւսը լալիս է, երբորդը սա-  
տանայի խորասանկութեամբ շողոքոր-  
թում է . . . „Ե՞՞ի, ինչ ծիծաղելի բան  
—բացականչում էք գուք ձեր ճաշի սե-  
ղանի վրայ ձեր ասուսնու և երեխաների  
առաջ.—երեակալեցէք, այսօր այս ինչը  
կարծում էր, լու ես չեմ հասկանում,  
որ այդ շողոքորթութիւն է, այն ինչն ինչ

պէս անքաղաքավարի գտնւեց և լաց եղաւ առաջիս. միթէ բանական արարածը թոյլ կտալ իրան մէկ մեծ մարդու առաջ լայտնել իր սրտինն ալդքան ազատօրէն . . .“ և ալին և ալին: Բայց որքան կեղտուտ բան է ալո, ա! Որպիսի՞ նախանձելի կեանք (?...) Գուցէ գուշ կարողանում ք ալդպիսով ձեզ երջանիկ զգայ, բայց ս կ'ասեմ, որ դուք չգիտէք երջանկութեան չափը, դուք կարող էիք աւելի մեծ երջանկութիւն զգալ ուրիշի տանջանքների մէջ, քան զգում էք ալժմ ձեր ապարանքներում, շռայլելով ձեր ահազին հարստութիւնը, կամ աւելի ճիշտը՝ խեղճ, աղքատ մարդկանց արիւնը. այո՛, դուք ալդ չգիտէք, իսկ եթէ չէք էլ ուզում իմանալ, ալդ դէպքում ամեն ոք իրաւունք ունի ձեզ անւանելու՝ „շուն . . .“

Օ՛չ, օ՛չ, օ՛չ . . . ալսքան էլ բարկտնալ . . . քիչ էր մնում, որ աթոռները մեծատունների գլխներին կոտրատէի: Բայց ես չեռացայ բուն հարցից, ես ու-

գում էի սկորում ձեզ նախապատրաստել, որ չլինի թէ զգւէք, եթէ . . . բայց չէ, ահա բոյորը:

Անցեալ դեկտեմբերին էր: Բագւի լետ բնկած փողոցներից մէկում վարձել էի մի սենեակ, որը թէն խոնաւ էր և ցուցաւ, բայց շատ համապատասխանում էր գորպանիս բիւշէին: Ի՞նչ անէի, կեանքի մարդ էի, պէտք է տանէի ամեն ինչ . . . Երազներս իհարկէ՛ ծայել, մի ահազին կծիկ էի շինել և նետել Կասպից ծովի նաւթու ջրերը: Թէ ինչ էին Երազներս ալդ ասելու կարիք տեմ զգում, որովհետեւ հարուստները կը ծիծագեն:— Բայց չկարծէք թէ ուտելու հաց չ'ունէի,— ոչ, անտէր—անտիրական թռչուններն էլ են կերտկրում Ս.ստուծոյ տւածից: Ա՛լ էին ցանկացած բաները:

Նոր բնակարանս փոխագրւելուց մի քանի օր լետով նկատեցի, որ նոյն բակում սենեակիս դէմուգէմ մի ուրիշ նոյնանըման սենեակում ապրում է մի կին:

Առաջին անգամ տեսայ բաց դրան շէմ-քում կանգնած գլանակը բերանին։ Երբ ինձ նկատեց, անմիջապէս փակեց գուռը և փախաւ։ „Սատանան տանէ նրան, ով պիտի լինի,“ մտածում եմ։ Նրա դէմքս իսձ ծանօթ թւաց, թէւ ես նրան միայն մը ակսթարքաչափ տեսնելու բախտն ունեցայ։ Երբ մտայ սէնեակս, չկարսդացայ սիտքս շնորացնել այդ կնոջից և ասեմ զրադ աշխատում էլ ստաբերել նրան, բայց այդ ինձ չէր աջողութւում։ Տրեմն մարդուս յամառաւթրւածը շասսում է այս աստիճասի, որ նա երբ մինչեւ իսկ յոյսը կտրած է սրբատից, էլի ձեռք չէ քաշում. այնալիս էլ ես. թէւ երկար մտածելուց յետոյ հասագւեցը, որ գուար թէ լիշեմ, կամ գուցէ սոյն ըսկ նրան ոչ մը տեղ չեմ տեսնլ, կամ նրան լառնում եմ ծասօթսերլցո ողևէ մէկը հետ, բայց և այնպէս չէր գաղարում նրա մասին մտածելուց, կարծես թէ գլխիս մէջ սատանայ էր նստել։ Միւս օրը ցանկա-

ցայ առանց ալիս ալլութեան մանել նրա սենեակը, ներողութիւն խնդրել և հարց-նել, թէ ով է, աղնքան էր տանջում ինձ հետաքրքրութիւնս. բայց մէկ էլ դասայ, որ այդ կ'ինի լիմարութեան ամե-նաբարձր աստիճաններից թէկը, իսկ ցան-լութիւնս շատ ծիծողելի է։ Ուրիշից էլ հարցնել չէի ուղում։ Եւ աչա այս- պէս չկարողացալ ճանաչել, թէ ով է նա։ Բայց չկարծէք թէ սրանով էլ մերջացը-նում եմ, օ, ոչ, այդքան զուտ չէք ա- դատեիլ ձեռքից։ Քիչ է մնացել, որ հասնենք այն կետին, որտեղից շարու- նակել չարժէ ալլ ևս։ Ինքներդ լիշեցէք „որ համբերեսցէ“—ն, իսկ ես ձեր կըրօ- նուսուղը լինել չեմ կարող, այդ վարդա- պետացու աստւածաբանների գործն է։ —Նուտ կտրել այս գլուխը՝ չեմ ցանկա- նում, որովհետեւ շատ բան է մնացել ա- սելու, բոլորն էլ ուղում եմ այս գլխի մէջ մացնել . . . Բայց տեսնում եմ, որ ձեր բախտը բանում է. արևն այնքան

ազդել է վրաս, որ շոգից ինձ էլեմ մոռացել, ուստի ուրախացէք, որ ձեզ ազատում եմ անժիւ դեպքերի երկար ու բարակ նկարագրութիւներից: Իացի դըրանից՝ Եթէ նոյն իսկ լիշեմ շատ մոռացւած բան, ելի չեմ կարող այս գլխումս գետեղել, որովհետև կապ հաստատել բազմալժիւ ոչ մի կապ չունեցող դէպքերի մէջ, „ահա թէ իսչումս է բոլոր հարցը.“ Կարող եմ արդեօք. կարծեմ անշնարին է, որի մէջ մեղաւոր է ելք արել: Ամառւայ դեռ սկզբին ամեն բան դաւաճանում է մեզ հարաւի գրողներիս. թանաքը շուտ է ցամաքում, թանաքով լցւած գրիչը երկար ժամանակ ձեռիդ ու ահանուց փչանում է, ստիպւած ես դըրանց համար կրկնակի փող ծախսել (իսկ փող Աստւած տայ!), քննադատները գըտւում են, սատասասերը խժգտում են նրանց ուղեղի մէջ, որովհետև սաստիկ շոգից փախչելով՝ ուրիշ այնքան սառը տեղ չեն գտնում, որքան քննադատի

գանգը լնթերցողները չեն կարդում՝ մի մասը երազելիս լինելով փողի մասին, միւս մասը՝ ամուսնանալու մասին, երբորդ մասը՝ չգիտեմ ինչի մասին, և այլն: — Սյս պատճառներից դրգւած ես էլ շտապում եմ կարճ կտրել և հսկալ ամառը թողած՝ կրկին յետ դառնալ գէպի ծերուկ ձմեռը:

Դեկտեմբերին էր, ինչպէս ասել եմ: Գրատարանից վերադառնում էի տուն՝ ափսոսալով նրա համար, թէ ինչու գըրատարանն այնքան շուտ փակեցին: Ես կուգենալի՝ ամբողջ օրերով այնտեղ մնալ, նոյն իսկ եթէ թողնէին այնտեղ քնել, որովհետև այնտեղ վառարանները լաւ տաքայրած են լինում. մինչ դեռ իմ մենեակը ցուրտ, խոնաւ, չոր քամին տզզում է լուսամուտի բացւածքներով, ոտներիս աստիճաննաբար սառչումն էլ միւս կողմից է յանցաւոր մտքեր զարթեցնում մէջս, անիծում եմ ամեն ինչ և մի ատրճանակ եմ փնտրում ոտներիս

ցաւր վերջնականապէս կտրելու համար։  
Այսպէս, վերադառնում էի տուն, երբ  
նկատեցի, որ փողոքում գտնագան հասա-  
եի ու ձեփ մարդիկ են ժողովւած։ „Տէր  
Աստւած, ի՞նչ պէտք է լինի, որ այս  
սառնամանիքի, այս բուք բորանի ժա-  
մանակ մարդիկ եանգ տանեն փողոցում։“  
Մօտենում եմ։ Մի հարբած կին ընկած  
է ձիւնախտոն ցեխի մէջ, կցկտուր հար-  
հոյանքներ է շպրտում հանդիսատեսնե-  
րի դէմքերին, իսկ հանդիսատեսները  
հոգուում են քառաձայն և անպատճա-  
րեր հարցեր առաջարկում ցենիկաբար։  
Դիտում եմ . . . Տէր Աստւած, որպիսի  
ամօթանք, ի՞նչ խոյտառակչութիւն, այն  
ուռած դէմքի, ցեխոտւած ճակատի, արիւ-  
նալից աչքերի մէջ ում եմ տեսնում . . .  
Մաշալին, այն, նախկին Մաշալին, այն  
չքնազ արտածին, որը չափ գնել չ' գի-  
տէր իր սիրախաղութիւններին, որը գե-  
րում էր, որին ցանկանում էր։ Հասնել  
մինչև ալգտեղ, ընկածութեան վերջին

ծարրը և ուռ ապրել . . . ի՞նչ, սկան-  
դալ . . . Այս, գարմանալի է։—Ես իսկոյն  
մօտեցալ նրան, հարցը թէ որտեղ է  
ապրում, նա ոչինչ չ' հասկացաւ, այլ ձեռն  
անդադար տանում էր գէպի բաց կուրծքը՝  
երը թէ ծածկելու համար։ Ես մի քա-  
ղաքապահ կանչեցի։ Նա յալտնեց, թէ  
գիտէ Մաշալի տունը, և կառք նստելով  
տարանք նրան։ Բայց գիտէք ուր տա-  
րանք, —բնակարանիս գէմուդէմ գտնւող  
սենեակը։ Նա էր եղած ինձնից թագնւող  
կինը, որին տեսել էի, որին լիշելու հա-  
մար գլուխ էի կոտրել։ Ու, ուրեմն նա  
ինձ ճանաչել է! աւելի լաւ, գուցէ քիչ-  
շատ միսիթարական հետևանքի կհաս-  
նենք։

Տեղ հասնելուց մինչև կառքից իջեցը-  
նելը նրան ստիպեցինք, որ հագնէ կօ-  
շիկները, որ գտել էինք ցեխի մէջ, բայց  
նա մերժում էր՝ տսելով։ „Աստւած ինձ  
առանց կօշիկ է ստեղծել, տռանց կօշիկ  
էլ կմնամ. դրանք իմս չեն . . .“—Ապա

ումն են: — „Կօշկակարինը,“ պատճառաբանում էր նա խեղդւողի ձախով և անզգայ, թալլ ժպիտով: Երևակալում էք. երևակալեցէք: Նրանից պահանջեցինք սենեակի բանալին, բայց նա մինչև անգամ գիմադրում էր մեզ, թէ ինչու այնտեղ բերինք, այն իր բնակարանը չէ, իր բնակարանը պալատ է, այնտեղ սպասում է իր պաշտած ամուսինը՝ Կօլեան, իսկ այստեղ ոչ ոք չի դուրս գալիս իր առաջ, մինչև անգամ դուռը փակ է, որովհետեւ ոչ ոք չկայ, մենք ովքեր ենք, և թքեց քաղաքապահի երեսին: Վերջինս (քաղաքապահը և ոչ թէ նրա երեսը) հայութելով ինքը ձեռը տարաւ Մաշալի գրալանները, հանեց բանալին և դուռը բաց անելով նրան ուժով ներս տարանք: Նա անմիջապէս փուեց գետնի վրայ երեսնի վար, նրան մի կերպ ըաբձրացրինք և գցեցինք անկողնակալի վրայ: Նա չէր խօսում և մի երկու ըոպէից լետոյ իւրումփացնելով՝ քնած էր: Ակամմայ լիշեցի

Խարկօվի իդէալիստ—ուսանողներին, որոնք մի ընկերութիւն էին կազմել պողուկութեան դիմադրելու նպատակով, և որոնց շատ տեղ Փանտազեօրներ էին անւանում: Խղճալի՝ մարդիկ, խղճալի՝ հասարակութիւն . . . Այս, իրաւ որ Փանտազեօրներ են ալդ ամբիծ երիտասարդութերը, բայց ոչ ձեր ասած Փանտազեօրներից. Նրանք լաւ չեն մտածել, որ իրանց գէմ կանգնած է ձեզ պէս մի հասարակութիւն, որ այպանում է ամեն մի քայլ գէպի բարձրը, սուրբը. ահա թէ ինչումն է կայանում նրանց Փանտազեօրութիւնը:

Սիւս օրը ցանկացայ Մաշալին տեսնել, ծանօթութիւն տալ և խօսել հետը, բայց նա տանը չէր: Ամբողջ ժամերով նայում էի լուսամուտից, բայց նա չգալձաւ: Հարևաններիցս մինն ասաց, թէ նա դուրս է գալիս տնից շատ վաղ և վերադառնում է ուշ գիշերը: Այսպէս անցաւ մի քանի օր, և ես չկա-

բողացալ նրան պատահել։ Մի օր սենեակումս նստած լսում եմ, որ դուրսը ինչ որ կանացի ազադակ կայ. դուրս եմ գալիս և տեսնում, որ Մաշան և տանտիկին հրէուհին կռւում են իրար հետ։ „Ինչ է պատահել“ հարցիս հրէուհին պատասխանում է, թէ այդ ստահակ կինն ուզում էր իր Արքաշկալին դցել եռացող ջրի մէջ։ Իսկ Մաշան անդադար կրկնում էր լալով, „ասա՛ խնդրեմ, ես միթէ՞ գողացել եմ ձեր ձկներից, ձեր սելեօդկաները . . . Ես . . . ես . . . ազնիւ մարդու աղջիկ եմ, Ես . . .“ և հեկեկում էր անդադար։

—Միթէ՞ արդարեւ նա ձեզ փող է պարտ, կամ բան է գողացել ձեզնից, հարցը հրէուհուց։

—Ոչ, այդպիսի բան չկայ, հարքած է ելի, գատարկ գլխից դուրս է տալիս. տմբողջ օրը կռւում է, անիծածը շատ մաքրասեր է, բայց դէ ինչ կ'անես, որ իրան այդպէս փչացըել է. դու մի տես-

նես նրա սենեակը! . . . տարւայ վերջը նեղութիւն չեմ քաշել . . .

—„Այդ քո գործը չէ, կեղանտ ջըհուդ, թիւհ, թիւհ, թիւհ . . .“ արաւ Մաշան և արագութեամբ մտաւ իր սենեակը։

—Բայց ինչով է պարապւում նա, հարցը հրէուհուց։

—Չգիտեմ. ճշմարիտ, ամօթ է ասելը, պատասխանեց նա քաշւելով ուժպատալով և կանչեց բակի մի առիթիւնում կուչ եկած փոքրիկ ջնուդին. „Ալբաշ, եկ այստեղ, մտնի սենեակը, ցուբա է։“

—Այդ խօսքերի վրայ ցրտի ագդեցութիւնը ես էլ զգացը և մտայ սենեակս։ Հարկ չկայ ասելու, որ երկար ժամանակ սիտքս չէր հեռանում Մաշալից։ Ես վըճուցի՞ ինչպէս էլ լիսի, հանդիպեմ նրան ոչ հարբած ժամանակ և խօսեմ հետը։

Սի բան ինձ շատ - շատ էր զարմացնում. նկատելի էր, որ նա համարեած թէ զուրկ էր ապրելու միջոցներից, իսկ նրա ծնող-

ները շատից—քչից կարող էին նպաստ  
տալ նրան. ուրեմն թնջ է պատահել  
նրանց մէջ. Մաշալից երես են դարձրել,  
թէ Մաշան չի ցանկանում նրանց դի-  
մել, այդ ես ուզում էի իմտնար. Այն էլ  
լաւ լայտնի էր ինձ, որ Մաշան կերտ-  
կրուում է փողոցներում շրջող ասպետ  
ների գրպաններից՝ գրա տեղակ վաճա-  
ռելով իր մարմինը:

0-, ընթերցողուհիներս, այդքան  
շուտ չզգւէք, դեռ շարունակեցէք կար-  
դալ, շուտով կ'գալ և մտածելու ըոսէն:

Միւս օրը նա կէսօրին վերադարձաւ  
տուն, մտաւ սենեակը և կրկին դուր  
գալով լալով ընկաւ հրէուհու ձեռներին,  
ապա ծունկ չոքեց նրա առաջ և ասաց.

—Ներեցէք ինձ, 'ի սէր Աստուծոյ,  
եթէ որեւէ վատ բան էք տեսել ինձնից,  
ես գնում եմ, ներեցէք, չէնց այսօր,  
գնում եմ չեռու, շնու չեռու . . .

Հրէուհին նրան ոտի կանգնացրեց  
և մեծահոգութեամբ նրան ներեց իրան

չ'հասցրած վերաւորանքների համար: Իսկ  
ես լուսս կտրեցի, թէ կարող կլինեմ նրա  
հետ խօսել: Նա գեռ լալիս էր, համբու-  
րում էր հրէուհու և նրա թոշնած մօր  
թարշամած ձեռները, իսկ ես զարմանում  
էի, որ նա վրաս չէր էլ նայում:

—Զէ, ալնպէս չէ, որ ես ձեզնից  
գողութիւն չեմ արել, վկայ եղէք, այն,  
վկայ եղէք, պարոն! . . ., այս անգամ դի-  
մեց ինձ և վրաս խորր նայեց ու մտա-  
ծեց, ապա յանկարծ „ահ“ արաւ և փա-  
խաւ մտաւ իր սենեակը: Հրէուհին քըրքը-  
ջում էր անընդհատ, իսկ պառաւը մըրթ-  
մըրթում էր քթի տակ. „այսքան էլ կիմէ  
միթէ կինը, այս թնջ է, չտեսնած բա-  
ներ եմ տեսնում, փառք քեզ Աստւած,  
ինչքան փոխւել է աշխարհը! . . .“

Պառաւն իրաւունք ունէր:

Մաշան ասաց, որ չէնց նոյն օրը  
գնալու է, բայց նա գեռ մնում էր իր  
տեղը: Իսկ ինձ վերջապէս աջողւեց մի  
անգամ նրան լուրջ գրութեան մէջ

գտնել:

Օրը կիրակի էր. եղանակը պարզւած, արևն էլ վայլում էր և ալդպիսով բաց անում երկար ժամանակ մռայլ մնացած սրաերը: Աւզում էի մէկ դուրս գալ տնից ուրախ սրտով և գնալ եկեղեցու բակը, երբ նկատեցի Մաշալին կանգնած իր դրան շէմքում, այնպէս չքնաղ, այնպէս աստւածալին, որպէս մի ժամանակ. ուռուցքներն անցել էին նրա դէմքից, մազերը, նորից նոյն երկայն փառահեղ գանգուրները ազատ թափւած էին ուսերի վրայից և մի վեհութիւն էին տալիս նրան: Ես կամեցալ մօտենալ, բայց նա չսպասեց, չանդարտութեամբ, բայց ջերմոտ հանդարտութեամբ դարձաւ ինձնից, իբր թէ դառնալու պատճառը ես չէի, և առասց վրաս նալելու՝ փակեց դուռը: Ես զնուեցի ներս մտնել և մօտեցայ դրանը, մեզմ կերպով հրեցի, բայց դրան սողնակը ներսից գցած էր: Աւստի յետ դարձայ սենեակս, որպէսզի սպասեմ յար-

մար բոպէի: Քիչ յետոյ նկատեցի, որ նա արագութեամբ անցաւ լուսամուտիս առաջով: Ես անմիջապէս գուրս թռայ սենեակիցս և վազեցի նրա ետևից: Հետով հասայ նրան:

—Բարե՛, տիկին:

Նա վրաս նայեց և թեթև կարմրեց՝ աշխատելով իրան պահել:

—Միթէ ինձ չէք լիշում, հարցրի ես:

—Ոչ . . . և աւելի կարմրեց բայց մի վարկեանից յետոյ յանկարծ փղձկաց և լաց եղաւ:

—Ինչու էք լալիս, ի՞նչ պատահեց ձեզ հետ:

—Ոչինչ, ես ձեզ ճանաչում եմ այո՛, հենց առաջին օրն եմ ճանաչել, ներեցէք ինձ. բայց . . . և կրկին լաց:

Ա՛խ, այդ կանանց արցունքները! . . . հետաքրքիր է իմանալ, թէ այդքանը որւեղ են տեղաւորում:

—Չէք ցանկանալ լսել ինձ, ես ուզում եմ ձեզ հետ խօսել:

—Կարելի է. գնանք մեզ մօտ . . .  
Թէև այնտեղ շատ վատ է . . . բայց . . .  
դուք հօ տեսել էք այն խոզաբունը.  
ոչ, խոզի բուն չէ, խոզն էլ չէ համա-  
ձայնւիլ այնտեղ ապրել:

Մենք դարձանք Մաշալի սենեակր.  
Մաշան ինձ առաջարկեց իր միակ աթո-  
ռը, իսկ ինքը նստեց մահճակալի վրայ:  
Մի քանի վարկեան լուռ էինք, երկուսս  
էլ գլխակոր: Յանկարծ նա խրոխտ դիրք  
ընդունելով՝ նոյնքան խրոխտութեամբ  
դարձաւ ինձ.

—Ի՞նչ էք ուզում ասել, ասացէք,  
ի՞նչ էք . . .

Ես զարմացած մնացի այդ ոճի վրայ  
և ինքս ինձ մի կերպ իշխելով՝ հարցրի.  
—Զէ որ դուք արտասահմանում  
էք, այստեղ ի՞նչ էք անում:

—Այո՛, ես արտասահմանում էի.  
իսկ թէ այստեղ ինչ եմ անում, ահա  
դուք տեսնում էք.—այստեղ ես ինձ . . .

Կարծեմ աւելորդ է ասելը, որ նա

կըկին լաց եղաւ, և ալ ևս չեմ ասելու  
մէկ—մէկ, ալլ միանգամից յալտարարում  
եմ այժմ, որ խօսելու ժամանակ մի քա-  
նի անգամ իրար յետևից լաց եղաւ զա-  
նազան ձեռվ:

—Բայց ինչու էք դուք այդ բանն  
անում, միթէ աւելի պատւառը կերպով  
չէիք կարող կետնք վարել. ձեր ծնող-  
ները ձեզ միթէ չեն օգնում:

—Պարօն, եթէ մի ուրիշ տեղ տւած  
լինէիք այդ հարցերը, ես չպէտք է ձեզ  
պատասխանէի. բայց որովհետեւ իմ տա-  
նիքն էք, ստիպւած եմ ձեր հարցերին  
զոհացում տալու: Բացի դրանից՝ ձեր  
բարեկամական զգաղմունքը (նի, անի-  
ծեալ զգացմունք! ծանօթութիւն հեղի-  
նակի) դէպի ինձ՝ պարտք է գնում վրաս  
քաղաքավարի և արդարախօս լինելու,  
բայց այսքանը համոզւած եղէք, որ ինչ-  
քան զգւած էք ինձնից, հարիւրապատիկ  
աւելի կզզէք սրանկց յետով:

—Խնդրեմ, խնդրեմ այդպէս չկար-

րում, կեղեքում է հոգիս ու մարմինս:  
Սկզբում ապրում էի Նաբաթ անունով  
մի ընկած կնոջ հետ,

(Այստեղ հարկ եմ համարում ձեզ  
տաելու ես՝ հեղինակս, և ոչ թէ Մաշան,  
որ շուտով ալդ Նաբաթին էլ կտեսնէք,  
միայն ոչ այստեղ, այլ ուրիշ գրքի մէջ՝  
հանգնոտ եղէք:)

— . . . բայց նա տեսնելով, որ ես  
ամեն օր հարբած եմ վերադառնում  
տուն, դուրս արաւ ինձ իր սենեակից.  
ընկած կինն անդամ ինձնից երես դար-  
ձրեց, և ես գեռ ապրում եմ . . . թշւառ  
կեանք է, չե՞! տեսնում էք, թէ ինչ  
դրութեան մէջ եմ ընկած: Բայց դառ-  
նո՞ւն . . . օ, ոչ երբէք, այսպէս աւելի  
շուտով կմեռնեմ . . . Իհարկէ՛ կ'իշէք  
իմ հին կեանքը, քիչ—շատ պատւառը  
կեանքս և համեմատութիւն կանէք ձեր  
մտքում . . .

— Ա՛խ, ինչպէս չիշեմ, ընդհատե-  
ցի ես. լիշում եմ, բոլորն եմ լիշում, և

ձէք. Ես մասամբ մտնում եմ ձեր գըրու-  
թեան մէջ, ձեզ հասկանում եմ. ազատ  
խօսեց, քառանց քաշւելու, համոված  
լինելով՝ որ մէջս համակրանք կ'զարթեց-  
նէք ձեր ուղղախօսութեան շամար և  
ոչ թէ անախորժ զգացմունք, որպէս  
կարծում էք, ասացի ես:

— Ա՛չա, կարճ կասեմ ձեզ: Արտա-  
սահմանում լիոզնելով մէկից՝ ինձ տւի  
ինքնամոռացութեան, և ամեն կերպ աշ-  
խատում էի փշացնել, ոչնչացնել ինձ.  
բայց շուտով ձանձրացայ ալդ կեանքից  
և ծնողներիս յալտնելով դրութիւնս,  
նրանցից միջոց խնդրեցի այնտեղ ասլիք-  
լու համար, բայց նրանք չպատասխա-  
նեցին անգամ: Ես ստիպւած եղայ վե-  
րադառնալ հալրենիք, բայց ծնողներս  
ինձ չընդունեցին, և ես վերջնականա-  
պէս վճռեցի յանձնել ինձ կեանքի ոռ-  
նող ալիքներին, որպէս տես ուժ չըւնե-  
ցայ վերջ տալ կեանքիս, իսկ ուրիշ կերպ  
չէի կարող մոռանալ այն ամենը, որ ար-

Միշտին, Ա. . .

Նա յանկարծ ճշաց, ընկաւ մահճակալի վրայ և սկսեց զառանցել ու անդադար կը կնել. „Միշտ, Միշտ . . . ինչու իշեցրիք . . .“ Եւ ապա խստելիկայի մէջ ընկաւ:

Ես մնացել էի շարած, անչափ զբղջում էի արածիս համար, բայց բանը բանից անցել էր. և վերջապէս որտեղից կարող էի գուշակել, թէ մի ընկած կնոջ վրայ իր առաջին սիրոյ առարկայի անունն այնքան ազդեցութիւն կանէ . . . Սատանան գիտէ այդ կանանց!

— Այո՛, Միշտն, ուշքի գալով ասաց Մաշտն. նա եղաւ առաջինը, թող նա լինի և վերջինը այն բոլոր մտապատկերներից, որոնք խռովում են միտքս, բորբոքում ուղեղս ու հոգիս: Այստեղ ամեն ինչ իշեցնում է նրա անունը, ոչ, պէտք է հեռանալ այստեղից, պէտք է մի անձանօթանկիւն քաշւել, այնտեղ հեշտ կլինի հանգիտ մեռնել, այնտեղ այսքա


նախատնդ վկաներ չեն լինիլ, հէնց այսօր, այսօր և եթ կուղեռըւեմ: Մնաք բարով, պարոն Արշակ, գուք էլ զգւեցէք ինձնից, որպէս զգւած են բոլոր ինձ ճանաչողները, մինչև անգամ . . . մինչև անգամ . . . Հարազատ ծն . . . նողներըրս . . . Հէնց այս՝ բոպէիս հեռանում եմ, ամեն բանի մէջ վճռական եմ եղել, ամեն մի լիմարութիւն անմիջապէս եմ արել, թող այս էլ լինի առանց երկար մտածելու, ամեն տեղ կապրեմ, միայն ոչ այստեղ. մնաք բարով:

Ես վեր կացաւ անունում կուղալ, նելով Մաշտին՝ ասանցի, 7/1 1922

— Գնաս բարով:

Եւ լուռ ու գլուխութեամսութիւն շւարած՝ մտքումս կը կուր մէ քանի անգամ:

„Մնաս բարով, մնաս բարով . . .“



5254

2013

